

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏՁԵԱՆ

**ՊԱՆԹԻՒՐՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆՈՒՄ**

(Երկրորդ հրատարակություն)



**ԷՂԻԹ
ՊՐԻՆՏ**
հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ – 2019

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Մ 806

Գիրքը հրատարակուել է ԵՊՀ Արևելագիտության
ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ

ՄԿՐՏՉԵԱՆ ՍԱՐԳԻՍ

Մ 806 Պանթիրքական հոսանքները ժամանակակից Իրանում/
Ս. Մկրտչեան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2019.- 184 էջ:

Աշխատանքը կատարուել է Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության
կենտրոնում:

Պատասխանատու խմբագիր՝ **Վ. ՈՍԿԱՆԵԱՆ**
Խմբագիր՝ **Հ. ԱԼՎՐՑԵԱՆ**
Գրախօսներ՝ **Մ. ԱՆՈՒՄԵԱՆ, Ա. ՏՕՆՈՅԵԱՆ**

Ուսումնասիրութիւնը նուիրուած է ժամանակակից Իրանում պան-
թիրքական շարժումների պատմութեանը, այդ շարժումները ղեկավա-
րող կառոյցների գործունէութեանն ու գաղափարախօսութեանը:
Քննուող հարցերը հայ հանրութեանն են ներկայացուում առաջին անգամ:

ISBN 978-9939-75-309-6

sarkis.mkrtchian@gmail.com

© Ս. Մկրտչեան, 2019

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Պանթիրքիզմի մասին լսելիս յաճախ մեր հայեացքն ուղղում է դեպի Թուրքիայի Հանրապետություն, իսկ վերջին տարիներին՝ նաև Ադրբեջանի Հանրապետություն:

Մերթ ընդ մերթ աշխատություններ են հրատարակում նաև Միջին Ասիայում և Չինաստանի Սինցզեան նահանգում պանթիրքական գործունեության վերաբերեալ:

Իրանում պանթիրքիզմի գաղափարախոսության և պանթիրքական կազմակերպությունների և գործիչների առկայության ու գործունեության մասին հայկական մամուլում և մասնագիտական աշխատություններում շատ քիչ տեղ է յատկացուած:

Հայ քաղաքական և գիտական շրջանակների հետ իմ յարաբերությունների ժամանակ երբեմն ականատես եմ եղել, թե ինչպէս են նրանցից շատերը զարմանքով լսում, որ նման հարց գոյություն ունի Իրանում: Պատճառը թերևս այն է, որ հայերը Իրանը դիտում են որպէս մէկ ու միասնական ամբողջություն և չեն պատկերացնում, որ Իրանում կարող են գոյություն ունենալ անջատողական միտումներ: Պատճառ կարելի է համարել, թերևս, նաև այն վստահությունը, որ հայերն ունեն իրանցիների նկատմամբ: Կամ էլ հայերը Իրանը դիտում են որպէս հզօր պետություն, որը կարող է կանխել նման վտանգները:

Ինչ էլ լինի պատճառը, իրականությունն այն է, որ Իրանում գոյություն ունեն պանթիրքական միտումներ, որոնք խիստ վտանգաւոր են ո՛չ միայն Իրանի ազգային անվտանգութեան համար, որը Հայաստանին բարեկամ երկիր է, այլև՝ Հայաստանի ազգային անվտանգութեան համար:

20-րդ դարում այդ միտումներն առնուազն երկու անգամ լրջագոյն խնդրի առջև են կանգնեցրել Իրանի պետութեանն ու ժողովրդին: Առաջինը 1918 թուականին էր, երբ Արաքս գետից հիւսիս ընկած պատմականօրէն Առան ու Շիրուան կոչուող տարածքների վրայ հիմնադրուեց Ադրբեջանի Հանրապետութիւնը: Անուան ընտրութիւնն ինքնին ակնյայտօրէն խօսում էր այն նպատակների մասին, որ հետապնդում էին այդ արհեստածին հանրապետութեան հիմնադիրները: Դա լուրջ խնդիր առաջացրեց Իրանի Ատրպատականում, որն, իհարկէ, պետական այրերի ու ժողովրդի զգօնութեան շնորհիւ լուծուեց: Երկրորդը 1945 թուականին էր, երբ Թավրիզում հիմնադրուած Ատրպատականի դեմոկրատական կուսակցութիւնը, իր հիմնադրումից կարճ ժամանակ անց, յենուելով Խորհրդային Միութեան վրայ, հռչակեց Ադրբեջանի Ինքնավար Հանրապետութիւնը: Սա անելի վտանգաւոր իրավիճակ ստեղծեց երկրում, որը կրկին պետական այրերի, ժողովրդի խելամտութեան և արտաքին ճնշումների շնորհիւ բարեյաջող աւարտ ունեցաւ:

Այդ միտումները, տարբեր առիթներով և ուժգնութեամբ, 20-21-րդ դարերում ունեցել են նաև այլ դրսևորումներ:

Վերջին առնուազն երկու տասնամեակում թէ՛ Իրանում, թէ՛ արտասահմանում բազմաթիւ գրքեր, գիտական ուսումնասիրութիւններ, վերլուծութիւններ ու աշխատութիւններ են հրատարակուել այդ հարցերի վերաբերեալ: Կազմակերպում են նաև գիտաժողովներ, խորհրդաժողովներ, սեմինարներ և այլն: Հրատարակութիւններն ու միջոցառումներն իրականացում են պետական և ոչ պետական շրջանակների կողմից: Պետական շրջանակների ներգրաւուածութիւնն այդ հարցերում վկայում է այն կարևորութեան մասին, որ Իրանի պետութիւնը տալիս է այդ խնդրին:

Այս ուսումնասիրությունը համեստ փորձ է՝ հայ հանրութեանը որոշ պատկերացում տալու Իրանում գոյություն ունեցող պանթիրքական հոսանքների մասին:

Հետևելով Իրանում և Իրանից դուրս տեղի ունեցող իրադարձություններին՝ ականատես ենք դառնում այդ ուղղութեամբ կատարուող որոշ գործընթացների:

Մի կողմից՝ ժամանակ առ ժամանակ իրենց մասին են յայտարարում ասպարէզ իջած նորանոր քաղաքական կազմակերպություններ, որոնց իսկությունը ստուգելը լուրջ աշխատանք է պահանջում: Այդ կազմակերպությունների գործունէութեան մասին տեղեկություն կարելի է ձեռք բերել իրենց կայքերից, որոնք գրանցուած են Իրանից դուրս, կամ ընկերային ցանցերում նրանց էջերից: Այդ կազմակերպություններն իրենց յայտարարություններով ու աշխատանքների մասին լրատութեամբ որոշ մթնոլորտ են ստեղծում և թողնում են այն տպավորությունը, թէ իրենք շատ են, իրենք ճնշուած են, իրենք կազմակերպական հսկայական ցանց ունեն և այլն:

Միւս կողմից՝ համալսարանական, ուսանողական, գիտական, մշակութային և այլ անունների տակ կազմակերպուած են համագումարներ ու խորհրդաժողովներ Իրանում և Իրանից դուրս, որոնք ակնյայտօրէն անջատողական նպատակներ են հետապնդում: Արժարձում են Իրանը դաշնային (Ֆեդերատիւ) մոդելով կառավարելու, Իրանի էթնիկ խմբերի անդամներին մայրենի լեզուով կրթութիւն հնարաւորութիւնից զրկելու և նմանատիպ բազմաթիւ թեմաներ: Ուսանողական հրատարակութիւններում փառաբանում է թուրք ազգը և այլն:

Նշեմ, որ այդ գրություններում, զեկոյցներում, ելոյթներում և այլն ուղղակի պանթիրքական ձևակերպումների դժուար է հանդիպել, սակայն բոլոր ծրագրերը, գաղափարներն

ու մտքերը տանում են դէպի պանթիօրքական մտայնություն ու նպատակներ:

Եւ, ամենակարևորը, եթէ որոշ ժամանակ առաջ պանթիօրքական աշխատանքները կատարում էին Իրանից դուրս՝ համագումարների, հարցազրոյցների, հանդիպումների և այլ ձևերով, այսօր այդ աշխատանքների մի մասը տարբեր ձևերով ու անունների տակ կատարում է Իրանում: Հետևաբար պանթիօրքական հոսանքների գործունէութիւնը ռաուսնասիրութեան ենթակայ է թէ՛ Իրանից դուրս և թէ՛ Իրանում:

Վերջում նշեմ, որ թէև աշխարհագրական, տնտեսական, քաղաքական, մշակութային, ռազմական և այլ պատճառներով ներկայում պանթիօրքիզմի իրականացումը անհրատեսական է դիտում, սակայն երբէք ու երբէք չպէտք է մտածել, որ դա այլևս անկենդան գաղափար է: Ինչպէս կը տեսնենք այս հետազոտութեան մէջ, այն ոչ միայն գոյութիւն ունի, այլև կան կենտրոններ, որոնց կողմից այդ գաղափարախօսութիւնը արդիականացում և լայնօրէն տարածում է: Իսկ նման հետևողական աշխատանքի արդիւնքում, պատեհ առիթի դէպքում, այն մէկ անգամ ևս կարող է պատուհաս դառնալ թէ՛ հայութեան ու Հայաստանի համար և թէ՛ Իրանի: Այս գիրքը մի փորձ է՝ վերստին յիշեցնելու այդ վտանգի և այն կանխելու անհրաժեշտութեան մասին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԼՈՒՋՈՒՄԸ

ՊԱՆԹԻՐՔԻՉՄԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Պանթիրքիզմը գաղափարական, քաղաքական և մշակութային շարժում է, որի նպատակը աշխարհի թիրքալեզու ժողովրդների համախմբումն է մէկ միասնական պետութեան մէջ:

«Իսլամ աշխարհի հանրագիտարան»-ում պանթիրքիզմ եզրի դիմաց գրուած է. «Պանթիրքիզմ. ազգայնական գաղափարախօսութիւն և քաղաքական-մշակութային շարժում 19-րդ դարի վերջերում: Այս քաղաքական գաղափարը պահանջում էր բոլոր այն թիրքերի մշակութային, լեզուական և քաղաքական միասնութիւնը, որոնք ճանաչելի են միասնական լեզուաընտանիքի, նախնիների, պատմութեան և ասանդութիւնների հիման վրայ: Ըստ այս գաղափարի՝ մուսուլման թիրքալեզուները, յատկապէս նրանք, ովքեր ապրում են Թուրքիայում, Կիպրոսում, Բալկանեան թերակղզում, նախկին Խորհրդային Միութիւնում, Իրաքում, Իրանում, Աֆղանստանում և Արևելեան Թուրքստանում (Սիցզեան), մի մեծ ազգի մասնիկներն են համարում, և նրանք բոլորը պիտի Թուրքիայի ղեկավարութեամբ մի միասնական պետութեան մէջ համախմբուեն»¹:

¹ دانشنامه جهان اسلام، چاپ دۆم، مدخل لغت نامه و دانشنامه بزرگ، جلد نهم، صفحه ۴۵۱

Ըստ Երուսաղէմի երրայական համալսարանի Միջին Արևելքի ուսումնասիրութիւնների նախկին դասախօս և պանթիօրքիզմի հմուտ մասնագէտներից Ջէյկոբ Լանդոյի՝ «Վերջին հաշուով պանթիօրքական շարժման առաջնորդող նպատակը, ձգտումն է հասնել մի տեսակ միասնութեան (մշակութային կամ նիւթական, կամ երկուսը միասին), ապացուցուած կամ ենթադրեալ թիօրքական արմատներ ունեցող ժողովրդների միջև, որոնք ապրում են Օսմանեան կայսրութեան սահմաններից ներս կամ դուրս (հետևաբար՝ Թիօրքիայի Հանրապետութեան ներսում կամ դրսում)»²:

Պանթիօրքիզմ եզրոյթը յաճախ օգտագործուում է որպէս պանթիօրանիզմ եզրոյթի հոմանիշ, թէև նրանց միջև առկայ են որոշակի տարբերութիւններ:

Քաղաքական գործիչ և Թուրքի կուսակցութեան հիմնադիրներից Անուար Խամէին գրում է. «Պանթիօրքիզմը և նրան փոխարինող պանթիօրանիզմն ի՞նչ են ասում և ի՞նչ են ուզում: Պանթիօրքիզմի տեսաբանները համոզուած են, որ բոլոր այն ցեղախմբերն ու ազգութիւնները, որոնք գտնուում են Եւրոպայի արևելքից մինչև Չինաստանի մեծ պարիսպը և կրում են լեզուական, կրօնական, ասանդական սովորութիւններ և ծէսեր և բարոյական նմանութիւններ, իրականում մի ազգ են կազմում և պիտի միասնական ազգի ձևով իրար հետ շաղկապուեն և ստեղծեն քաղաքական, ռազմական և մշակութային շատ հզոր ուժ, որը կարողանայ պահպանել և աւարտին հասցնել իր պատմական առաքելութիւնը այլ մեծ քաղաքակրթութիւնների

Յաւելեալ տեղեկութիւնների համար տե՛ս

<http://www.encyclopaediaislamica.com/madkhal2.php?sid=2644> (10.11.2016):

² **Landau Jacob M.**, Pan-Turkism, From Irredentism to Cooperation, 1995, 2nd Edition, Revised and updated, Printed in Hong Kong, Page 1.

նկատմամբ, ինչպիսիք են կրոպական, արաբական, հնդկական և չինական քաղաքակրթությունները»³:

Ըստ պատմաբան Քալե Ֆառոքիի՝ «Պանթուրանիզմը մի գաղափարախօսություն է, որի նպատակն է ստեղծել թիրքական գերպետություն, որը ձգտում է Եվրոպայում՝ Բալկաններից Թուրքիայով դեպի Արևելք, Իրան (Պարսկաստան), Կովկաս, Կենտրոնական Ասիա, մինչև Հիսիսարևմտեան Չինաստանը ներառեալ: Սրա հիմքում ընկած տրամաբանությունն այն է, որ բոլոր ժողովրդները, որոնք խօսում են թիրքերեն, պիտի ներառնուած լինեն այս թիրքական գերպետության մէջ»⁴:

«Թուրքերը իրենց փանթուրանիզմը շատ անգամ փանթուրքիզմ ալ կը կոչեն»⁵, - գրում է Զարևանդը:

«Թուրքիզմը, կազմելով պանթուրքիզմի միջուկը, վերջին հաշուով սրա հետ մի ամբողջություն է կազմում: Պանթուրքիզմը բարձրանում է թուրքիզմի ուսերին կամ, կարելի է ասել՝ վերջինս վերածում է պանթուրքիզմի: Եթէ թուրքիզմն Օսմանեան կայսրութիւնը, յատկապէս «բուն Թուրքիան» ազգային տեսակէտից «միատարր» դարձնելու ծրագիր էր, ապա պանթուրքիզմը գերածում է թուրքիզմից, ընդլայնում գործունէութեան դաշտը, տարածում Թուրքիայի սահմաններից դուրս՝ իր ոլորտի մէջ առնելով ուրիշ երկրներ ու ժողովուրդներ»⁶:

³ انور خامه ای، پان تركيستم و ارزش علمی و تاریخی آن، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، شماره ۱۸۲-۱۸۱، صفحه ۴۳-۳۶

⁴ Farrokh Kaveh, Pan-Turanianism takes aim at Azerbaijan: A Geopolitical Agenda: (Online Book)

Տե՛ս նաև <http://www.rozanehmagazine.com/NovDec05/AzarbayeganPart1.html>

⁵ Զարևանդ, Միացեալ, անկախ Թուրանիա, 1988 թ., Աթէնք, էջ 16:

⁶ Միմոնեան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանութիւնը և քաղաքականութիւնը, Երևան, 1986, էջ 287:

Հր. Սիմոնեանը, անդրադառնալով Ձիյա Գէօքալիի տեսական փնտրտուքի հանրագումարային խտացումն արտացոլող աշխատությանը, գրում է. «Թյուրքականության հիմունքները» աշխատությունում «թուրքիզմը, օղուզականությունը կամ թիւրքմէնականությունը», այսինքն՝ թուրքերի, ադրբեջանցիների և թուրքմէնների միասնականության ջատագովությունը ու «թուրանականությունը» հանդէս են գալիս որպէս միասնական գաղափարախօսութեան՝ համաթիւրքականութեան կամ պանթուրքիզմի մէկմէկու շաղկապուած ծրագրային փուլեր»⁷:

Ըստ Թեհրանի համալսարանի դասախօս, հետազոտող Համիդ Ահմադիի՝ «Պանթուրքիզմ եզրոյթը համապատասխան ռոմանտիկ ազգայնական հակումներ ունեցող գրականութեան մէջ, վերաբերում է ընտրախաւի այն խմբին, որը հետամուտ է ստեղծելու թիւրք միասնական պետութիւն՝ բաղկացած Թուրքիայի և տարածաշրջանի թիւրք արմատ ունեցող ժողովուրդներից (Կովկասի և Կենտրոնական Ասիայի)... Այս բառը [պանթուրանիզմ] մի տեսակ ամբողջութեամբ ծայրայեղական ռոմանտիկ գաղափարախօսութեան է վերաբերում, որը հետամուտ է բոլոր թիւրքական արմատ ունեցող ժողովուրդների միասնութեանը՝ Չինաստանի արևելքից մինչև Եւրոպայի արևելք»⁸:

Եզրակացնենք. պանթուրքիզմը գաղափարական, քաղաքական և մշակութային շարժում է, որի նպատակը աշխարհի թիւրքալեզու ժողովուրդների համախմբումն է մէկ ու միասնական պետութեան մէջ: Այդ ենթադրեալ պետութեան սահմաններն

⁷ **Սաֆարեան Ա.**, Ձիյա Գէօքալիը և «Թյուրքականութեան հիմունքները», 2012, Երևան, ԵՊՀ հրատարակչութիւն, էջ 52:

⁸ **حميد احمدى**, ترکیه، پان ترکیزم و آسیای مرکزی، مطالعات اوراسیای مرکزی، مرکز مطالعات بین المللی، دانشکده حقوق و علوم سیاسی، سال دهم، شماره ۵، زمستان ۱۳۸۸، صفحات ۱۲۲-۱۲۳

Տե՛ս նաև **Landau Jacob M.**, Pan-Turkism, From Irredentism to Cooperation, 1995, 2nd Edition, Revised and updated, Printed in Hong Kong, Page 19-25:

ընդգրկում են Բալկանեան թերակղզուց մինչև Չինաստանի հիւսիսարևմտեան շրջանները: Թուրքիզմը, պանթուրքիզմն ու պանթուրանիզմը յաճախ օգտագործում են նոյն իմաստով, թէև նրանց միջև առկայ են տարբերություններ:

ՊԱՆԹՒՐԻԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՒՆԸ ԵՒ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Պանթուրքիզմը, որպէս գաղափարախօսութիւն, առաջացաւ 19-րդ դարի երկրորդ կէսին: Պանթուրքիզմի առաջացման մէջ դերակատար են եղել հետևեալ պատճառները.

- Թիւրքերի շրջանում կրթական բարենորոգումները, որոնք խթանեցին ցեղային-ազգային գիտակցութիւնը,
- Արևելագիտութեան և թիւրքագիտութեան զարգացումը Եւրոպայում,
- Յարական Ռուսաստանի քաղաքականութիւնը Ռուսաստանի մահմեդականների նկատմամբ, ըստ որի փորձ էր արւում մահմեդականներին բռնի քրիստոնէացնել,
- «Պան» շարժումների ընդօրինակումը՝ ինչպէս պանգերմանիզմ, պանիսլամիզմ, պանսլաւիզմ: Յատկապէս վերջինիս դէմ նոր գաղափարախօսութիւն առաջ բերելու և դրանով ռուսների հզօրանալը կանխելու մօտեցումը,
- Թիւրքերի՝ դէպի Եւրոպա նուաճողական քաղաքականութեան ծախողումն ու հայեացքը դէպի Արևելք՝ ցեղակիցներից ու լեզուակիցներից նոր կայսրութիւն ձևաւորելու նպատակով,
- 19-րդ դարի վերջերում ընդհանրապէս Եւրոպայում, յատկապէս Հարաւարևմտեան Եւրոպայում սկիզբ առած ազատագրական շարժումների ազդեցութիւնը:

Պարսիկ հետազոտող Ռահիմ Ռեյխսնիան, ամփոփելով տարբեր մասնագետների տեսակետները պանթիրքիզմ եզրոյթի մասին, Իսլամ աշխարհի հանրագիտարանում եզրակացնում է. «Արևելագիտության, յատկապէս թիրքագիտության զարգացումը մշակութային ամենակարևոր գործոններից մէկն է պանթիրքիզմի առաջացման, տարածման և զարգացման գործում...Դը Գինէի, Լեոն Քահունի և Արթուր Դէյուիդզի նման արևելագետների ուսումնասիրութիւնները թորք ցեղախմբի պատմութեան, լեզուի, գրականութեան և ժողովրդագրութեան մասին նպաստեցին, որ թորքերը ճանաչողութիւն ձեռք բերեն Կենտրոնական Ասիայի և մինչօսմանեան շրջանի քաղաքակրթութեան ու պատմութեան մասին: Այդ ճանաչողութիւնը, թափանցելով Յարական Ռուաստանում և Օսմանեան կայսրութիւնում բնակուող թորքերի մէջ, աստիճանաբար պանթիրքիզմի սաղմեր ձևաւորեց նրանց ընտրախալի մտքում, լեզւում և գրութիւններում»⁹:

Զարևանդը նոյնպէս անդրադարձել է այս հարցերին՝ յատկապէս առանձնացնելով իսլամադաւանների կրօնափոխութեան խնդիրը. «Ռուսական քաղաքականութիւնը Ռուաստանի «մահմետական» ժողովուրդներուն հանդէպ մինչև 1830-ական թուականները եղած էր բռնի ուժով քրիստոնէացնել... Շարիաթը պաշտպանել ռուսական ոտնձգութիւններու դէմ, մահմետականները փրկել քրիստոնէացումի սպառնացող վտանգէն. ահա՛ թէ ի՛նչ ձև առաւ թաթարներու ազգային գիտակցութեան զարթօնքը Ռուսիոյ մէջ»¹⁰: Իսլամական այս շարժման ղեկավարն էր

⁹ دانشنامه جهان اسلام، چاپ دوم، منخل لغت نامه و دانشنامه بزرگ، جلد نهم، صفحه ۴۵۱

Յաւելեալ տեղեկութիւնների համար տե՛ս

<http://www.encyclopaediaislamica.com/madkhal2.php?sid=2644>

¹⁰ **Զարևանդ**, Միացեալ, անկախ Թուրանիա, 1988 թ., Աթէնք, էջ 17-18:

Իսմայիլ Գասպրինսկին, Կովկասի մէջ Միրզա Ֆեթի Ալի Ախունտը:

Լանդօն ճիշտ է նկատում, որ «Բոլոր թիրքարմատ խմբերի միասնական արմատ հասկացութիւնը աւելի շատ պատասխան էր պանսլաւիզմին և նրա ճնշումներին (ինչպէս ռուսականացումը)»¹¹:

Որոշ իրանցի մտաւորականներ այն կարծիքին են, որ պանթիրքիզմը հակաիրանական ուղղուածութիւն ունէր:

Ըստ Քաւէ Ֆառոխի՝ Յարական Ռուսաստանի և հետագայում Խորհրդային Ռուսաստանի կողմից Կենտրոնական Ասիայում և Կովկասում նուաճած տարածքների ապաիրանականացման ուղղութեամբ կատարուող աշխատանքները, խրախուսում էին. դրանք ներդաշնակ էին պանթիրքիզմի հետ. «Պանթիրքիզմ խրախուսելու քաղաքականութիւնը՝ պարսկական պատմական և լեզուական ժառանգութիւնը ոչնչացնելու նպատակով, սկիզբ է առնում ցարական ժամանակաշրջանից՝ իրականում 1830-ական թուականներից, որպէս ռուս-իրանական աղետալի պատերազմի անմիջական հետևանք, որտեղ Իրանը պարտաւորուեց Կովկասում իր ունեցուածքը զիջել (Արաքս գետի հիւսիսում՝ Իրանի Ատրպատական նահանգի ճիշտ վերևում)»¹²:

Մէկ այլ առիթով նոյն հեղինակը գրում է. «Հէնց սկզբից Երոպայի կողմից հովանաւորուող պանթիրքիզմը հակապարսկական էր»¹³:

¹¹ Landau Jacob M., Pan-Turkism, From Irredentism to Cooperation, 1995, 2nd Edition, Revised and updated, Printed in Hong Kong, Page 31:

¹² <http://www.kavehfarrokh.com/articles/pan-turanism/soviet-de-iranization-policies-in-the-caucasus-and-central-asia/> (10.10.2017 թ.):

¹³ <http://www.kavehfarrokh.com/articles/pan-turanism/question-4-describe-the-ideology-founders-and-objectives-of-pan-turkism/> (10.10.2017 թ.):

ՊԱՆԹԻՐՔԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ

Պանթիրքիզմի զարգացման հանգրուանները ճշտելու նպատակով նպատակայարմար է հարցը քննել երկու դիտանկիւնից՝ ժամանակագրական և աշխարհագրական:

Աշխարհագրական առումով պատկերն այսպիսին է.

- Պանթիրքիզմը Եւրոպայում,
- Պանթիրքիզմը Միջին Ասիայում,
- Պանթիրքիզմը Օսմանեան կայսրութիւնում,
- Պանթիրքիզմը Կովկասում,
- Պանթիրքիզմը Ադրբեջանի Հանրապետութիւնում,
- Պանթիրքիզմը Թուրքիայի Հանրապետութիւնում,
- Պանթիրքիզմը Իրանում:

Զինաստանում առկայ պանթիրքիզմին չեմ անդրադառնում, քանզի այս ուսումնասիրութեան շրջանակից դուրս է:

Ժամանակագրական առումով դասակարգման համար դժուար է ճշգրտօրէն նշել թուականներ, յատկապէս նկատի ունենալով այն աշխարհաքաղաքական փոփոխութիւնները, որոնք տեղի են ունեցել վերջին երեք դարերի ընթացքում: Այդուամենայնիւ ընդհանուր գծերով կարելի է բաժանել հետևեալ կերպ.

- Պանթիրքիզմը 19-րդ դարում,
- Պանթիրքիզմը 20-րդ դարի սկզբից մինչև Առաջին համաշխարհային պատերազմ,
- Պանթիրքիզմը Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում և դրանց միջև ընկած ժամանակահատուածում,
- Պանթիրքիզմը Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ՝ մինչև Խորհրդային Միութեան փլուզումը,

- Պանթիւրքիզմը Խորհրդային Միութեան փլուզումից մինչև մեր օրերը:

Լանդօն պանթիւրքիզմի առաջացման ու զարգացման հետևեալ 5 հանգրուաններն է նշում.

1. Օսմանեան կայսրութիւնից դուրս պանթիւրքիզմի առաջացումն ու անկումը,
2. Առաջացումն ու զարգացումը Օսմանեան կայսրութիւնում,
3. Թւրքիայի Հանրապետութիւնում թաքուն ժամանակաշրջանը,
4. Թւրքիայի Հանրապետութիւնում վերածննդի ժամանակաշրջանը,
5. Թւրքիայի Հանրապետութիւնում դէպի իրական ճանապարհ վերադարձի ժամանակաշրջանը¹⁴:

Լանդօն գրում է. «...Պանթիւրքական շարժումը Թւրքիայում սկսեց զարգանալ քսաներորդ դարի սկզբից և իրականում Ա Համաշխարհային պատերազմից յետոյ է, որ Թւրքիան եղել է նրա գործունէութեան կենտրոնը: Աւելին, պանթիւրքիզմի կարևորութիւնը 1960-ական և 1970-ական թուականներին մեծացաւ և քիչ-քիչ Թւրքիայի.... քաղաքականութեան մէջ կարևոր տեղ գրաւեց»¹⁵:

1995 թ. պանթիւրքիզմը վերակենդանացաւ և վերածուեց Թւրքիայի պետութեան կիսապաշտօնական և Ադրբեջանի Հանրապետութեան պաշտօնական գաղափարախօսութեան¹⁶:

¹⁴ Նոյն տեղում, էջ 24:

¹⁵ **Landau Jacob M.**, Pan-Turkism, From Irredentism to Cooperation, 1995, 2nd Edition, Revised and updated, Printed in Hong Kong, Page 34:

¹⁶ Նոյն տեղում, էջ 13:

ՊԱՆԹԻՒՐԹԻԶՄԻ ՈՉ ԹԻՒՐՔ ՏԵՍԱԲԱՆՆԵՐԸ

Պանթուրանականության գաղափարն առաջին անգամ արծարծուել է ոչ թիւրքերի կողմից: Ըստ Քաւէ Ֆառոխի՝ «Պանթիւրքիզմը, որպէս քաղաքական փիլիսոփայութիւն, նախ յայտնուեց Եւրոպայի պետական այրերի, գրողների և հետազոտողների շրջանում: Պակսոյը նշում է, որ «Պանթուրանիզմը կամ պանթիւրքիզմը» ձևաւորուել և նախաձեռնուել է Եւրոպայում այն ժամանակ, երբ Ռուսաստանը գրաւեց Տաշքենդը 1865 թուականին»¹⁷:

Պանթիւրքիզմի առաջացման ու զարգացման գործում դեր են ունեցել բազմաթիւ ոչ թիւրքեր: Դեռևս 18-րդ դարում ֆրանսիացի Ժոզեֆ դը Գինէլը¹⁸ իր «Հոների, թուրքերի ու մոնղոլների ընդհանուր պատմութիւն» գրքում (հրատարակուած 1765 – 1768 թթ. ընթացքում Փարիզում) տեսակէտ յայտնեց, թէ հոները, թուրքերն ու մոնղոլները ցեղակից ժողովուրդներ են:

1832 թ. Լոնդոնում լոյս տեսաւ Արթուր Լոմելի Դէյվիդի «Թուրքերէն լեզուի քերականութիւն» ուսումնասիրութիւնը:

Ըստ արևելագէտ, իրանագէտ և Լոնդոնի համալսարանի դասախօս Մինորսկու՝ «Առաջին անգամ հունգարներն էին, որ Թուրանի և թուրանցիների մասին լուրջ ուսումնասիրութիւն կատարեցին: Առաջին Համաշխարհային պատերազմից մտաւորապէս կէս դար առաջ հունգար պետական այրերը դաշնակիցներ էին փնտրում պանսլաւիզմ շարժման դէմ, և նկատի ունենալով, որ թուրքերէնն էլ թուրանական լեզուներից է, թէև ֆին-ուլղուրական ճիւղից, արծարծեցին թուրքերի ազգա-

¹⁷<http://www.kavehfarrok.com/articles/pan-turanism/question-4-describe-the-ideology-founders-and-objectives-of-pan-turkism/>

¹⁸ http://en.wikipedia.org/wiki/Joseph_de_Guignes

կից լինելու գաղափարը՝ սլաոնների դէմ թուրք-հունգարական միասնության նպատակով»¹⁹: Նրա համոզմամբ պանթուրանիզմի արմատները Հունգարիայում հասնում են նուազագոյնը մինչև 1839 թ.:

Հետագայում, բնականաբար, այս հարցով զբաղուողների տեսադաշտը պէտք է ընդլայնուէր՝ ընդգրկելով թիրքալեզու ժողովուրդների բնակության մեծագոյն աազանը: Զարևանդն այս մասին գրում է. «Դեռ 1842-ին, գերման նշանաւոր զօրավար՝ Մոլթբէ այն ատեն գնդապետ և մարզիչ օսմանեան բանակին, թուրք ղեկավարներուն թելադրեր էր փանթուրանական քաղաքականութիւն»²⁰: Նա օսմանցի թուրքերին առաջարկեց, որ իրենց ուշադրութիւնը Եւրոպայից փոխադրեն դէպի Ասիա և օտարների տիրապետութեան տակ ապրող միլիոնաւոր թիրքալեզու ժողովուրդներին միաւորեն կայսրութեան մէջ²¹:

Պանթուրքիզմի առաջին տեսաբաններից է հունգարացի հրեայ, արևելագէտ և ճանապարհորդ Արմինիուս Վամբերին²² (1832-1913), ով 1857-1863 թթ. Օսմանեան կայսեր խորհրդականն էր²³: Նա ունի բազմաթիւ գրքեր Թուրքիա, Հայաստան, Պարսկաստան և Կենտրոնական Ասիա կատարած իր ճամբորդութիւնների մասին: Նրա կարծիքով բոլոր թիրքական ցեղերը պատկանում են մէկ խմբի, սակայն ըստ աւանդոյթների և ֆիզիկական որոշ տուեալների բաժանուում են

¹⁹ دانشنامه جهان اسلام، چاپ دوم، مدخل لغت نامه و دانشنامه بزرگ، جلد نهم، صفحه ۴۵۱

Յաւելեալ տեղեկութիւնների համար տե՛ս

<http://www.encyclopaediaislamica.com/madkhal2.php?sid=2644>

²⁰ **Զարևանդ**, Միացեալ, անկախ Թուրանիա, 1988 թ., Աթէնք, էջ 32:

²¹ Նոյն տեղում, Տե՛ս նաև <http://www.kavehfarrok.com/articles/pan-turanism/question-4-describe-the-ideology-founders-and-objectives-of-pan-turkism/>

²² http://en.wikipedia.org/wiki/%C3%81rmin_V%C3%A1mb%C3%A9ry

²³ Այս մասին տե՛ս **Տառնի Քաւէ** (նոյն տեղում), **Լանդօ Զ.** (նոյն տեղում):

ենթախմբերի: «Անատոլիցիները, ադրբեջանցիները, թուրքոմանները, ուզբեկները, ղրղրզները և թաթարները մասնիկներ են, որոնց համադրութիւնից կարող է առաջանալ թիրքիզմի հզօր ուժ և վստահաբար այն Թուրքիայից, որ այսօր ենք տեսնում, անելի լաւ կարող է մրցել իր հիւսիսային մեծ մրցակցի հետ»²⁴: Վամբերին յայտնի է իր «Թուրան» լեզուաբանական տեսութեամբ:

Քաւէ Ֆառոխը Փասքոյից մէջբերում կատարելով գրում է. «Արմինիոս Վամբերին էր, որ պաշտօնապէս առաջարկեց պանթուրքական գերպետութեան գաղափարը Օսմանեան սուլթանին. «Նրանք [թուրքերը] կարող են ստեղծել քաղաքական մի կազմակերպութիւն, որը տարածում է Արևելեան Ասիայում Ալթայի լեռներից մինչև Բոսֆոր...»²⁵:

Յայտնի է Լեհ Կոնստանտին Պոլկոզկիչ Բորզչկին (1826-1876) իր «Թուր-արիացի» ցեղի տեսութեամբ: Բորզչկին Լեհաստանից գաղթեց Թուրքիա, փոխեց կրօնն ու մուսուլման դարձաւ և ընդունեց Մուստաֆա Ջելալեդին փաշա անունը: Նա «Հին և ժամանակակից թուրքերը» գրքում առաջ քաշեց այն տեսութիւնը, որ համաշխարհային քաղաքակրթութիւնը, ընդ որում՝ արուպականը, հիմնադրել են թուրքերը:

Ֆրանսիացի Դէյվիդ Լեոն Քահունը (1841-1900) «Թուրքերի և մոնղոլների պատմութիւն» գրքում մեծարեց ու փառաբանեց Լենկ Թեմուրին ու Չինգիզ Խանին և համոզմունք յայտնեց, որ թուրքերը, մոնղոլներն ու հոները բարձր ցեղի են

²⁴ Landau Jacob M., Pan-Turkism, From Irredentism to Cooperation, 1995, 2nd Edition, Revised and updated, Printed in Hong Kong, Page 22: Այս մասին տե՛ս նաև **Ջարևանդ**, էջ 33:

²⁵ <http://www.kavehfarrok.com/articles/pan-turanism/question-4-describe-the-ideology-founders-and-objectives-of-pan-turkism/>

պատկանում: Քահունի «Ներածություն Ասիայի պատմության» գիրքը հրատարակուեց 1896 թ. Ֆրանսիայում:

Պանթիւրքիզմի գաղափարախօսության ձևաորման մէջ դեր են ունեցել նաև ֆրանսիացի Ալֆոնս Դը Լամարտինը՝ «Թուրքիայի պատմություն» գրքով, հրատարակուած Փարիզում 1854 թ., Փիէռ Լոտին՝ «Թուրքիան հոգեվարքի մէջ» (1913) աշխատութեամբ, անգլիացի Դենիսոն Ռոսը և ուրիշներ:

ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ԹԻՒՐՔ ՏԵՍԱԲԱՆՆԵՐԸ

Պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնն ստեղծուեց Օսմանեան կայսրութեան սահմաններից դուրս, սակայն հետագայում այն տարածուեց Օսմանեան կայսրութիւնում՝ վերածուելով պետական քաղաքականութեան առանցքի: 1910 թ. այն արդէն Երիտթուրքերի իշխանութեան պաշտօնական գաղափարախօսութիւնն էր:

Ըստ Զարևանդի՝ այս գործում հիմնական դերակատարը Եուսուֆ Աղչուրան է. «Ա՛ն է, որ առաջին անգամ բանաձևած է փանթութիւնիզմը, իբրև որոշ քաղաքական վարդապետութիւն և ծրագիր և լծուած՝ զայն իրականացնելու գործին»²⁶: Այս աշխատանքի շնորհիւ է, որ նա համարում է «...քաղաքական փանթութիւնիզմի հիմնադիրն ու տեսաբանը»²⁷:

Եուսուֆ Աղչուրան (1876-1932) Կազանի թաթարներից էր: Նա պանթիւրքիզմի զարգացման ու տարածման գործում մեծ դեր ունեցաւ: Նա յայտնի է «Քաղաքականութեան երեք ձև» յօդուածով, որտեղ նշելով պանիսլամիզմի ու պանօսմանիզմի

²⁶ Զարևանդ, Միացեալ, անկախ Թուրանիա, 1988 թ., Աթէնք, էջ 20:

²⁷ Նոյն տեղում, էջ 21:

թերութիւնները, Օսմանեան կայսրութեան փրկութիւնը տեսնում էր թիրաքականութեան (պանթիւրքիզմ) մէջ:

Թւորքական ազգայնականութիւնը (Nationalism) սկզբում դրսևորում էր որպէս գրական շարժում: Դրանում մեծ դեր են ունեցել ժամանակի գրական դէմքեր Իբրահիմ Շինասին, Ջիյա Փաշան, Նամըք Քեմալը, Ալի Սուալիս, Ահմեդ Միթհաթ Էֆենդին և ուրիշներ:

Ահմեդ Միթհաթ Էֆենդին, օրինակ, գրում է. «Մեր ազգը, իր մայրենի լեզուն՝ թուրքերէնը, կորցրել է և պարտաւոր է նրա փոխարէն սովորել մի լեզու, որին օսմաներէնից բացի այլ անուն չենք կարող տալ... Սա ոչ արաբերէն է, ոչ պարսկերէն և ոչ էլ թուրքերէն, այլ մի փոքրամասնութեան լեզու է, որը գերակայութիւն է հաստատել մեծամասնութեան վրայ և իր բուն լեզուից զրկուել է»²⁸:

Ղրիմի թաթարներն առաջիններից էին, որ փորձեցին, հիմնուելով իրենց պատմութեան ու մշակութային ամանդոյթների վրայ, դուրս գալ ռուսական իշխանութեան դէմ: Դա յատկապէս արտացոլում է Իսմայիլ Բէյ Գասպըրալըի (Ղասպիրալի, Գասպրինսկի) մտքերում: Գասպըրալըն 1880-ական թուականների կէսերին Ղրիմում հիմնեց «Թարջուման» թերթը, որն իր ամբողջ քան 20 տարուայ գործունէութեան ընթացքում տարածեց «Միասնութիւն լեզուով, մտքով ու գործով» գաղափարը²⁹: Այդ գաղափարն իր հերթին խթանեց պանթիւրքական մտայնութիւնը:

28 Կաւո Բիատ, Բան Երկիսիմ ու Իրան, Չափ օլ, Բիար 1387, Նշր քրԵիս ԡանշ Բա ԡիկարի Նշր ու քրօշ 6-7 Նիրազէ ԿՆափ, Եիրան, Վճախատ 7-6

29 Կաւո Բիատ, Բան Երկիսիմ ու Իրան, Չափ օլ, Բիար 1387, Նշր քրԵիս ԡանշ Բա ԡիկարի Նշր ու քրօշ 11 Նիրազէ ԿՆափ, Եիրան, Վճախատ 11

Գասպըրալըն գրում է. «Մենք ամուր ազգ ենք: Մեզ կրթութեան հնարատրութիւն տուէք: Մեծ եղբայրներ, մեզ գիտակցութիւն տուէք... Այդպիսով ռուսներն ու մուսուլմաններն իրար հետ համախոհութեան կը հասնեն»³⁰: Գասպըրալըի այս գաղափարներն առաջին հայեացքից Ռուսաստանի դէմ չեն, սակայն դրանք վկայում են պանթիւրքական գաղափարախօսութեան սաղմերի մասին, որոնք խորքում նաև հակառուսական ուղղուածութիւն ունեն:

Պանթիւրքիզմի զարգացման ու տարածման գործում մեծ դեր է ունեցել Չիյա Գէօքալփը (ծնուել է 1876 թ. Դիարբեքի-րում): Նա այն կարծիքին էր, որ թիւրք բոլոր ցեղերը՝ Սև ծովի ափերից մինչև Չինաստանի Տեան Շանի լեռները, պիտի ստեղծեն մէկ միասնական երկիր՝ Թուրանը: Նա այդ նպատակին հասնելու երեք հանգրուան էր առանձնացնում: Առաջին՝ օսմանցի թիւրքերի իշխանութեան հաստատումը Օսմանեան կայսրութեան վրայ և փոքրամասնութիւնների թուրքականացումը: Երկրորդ՝ պանթիւրքիզմի տարածումը Օսմանեան կայսրութեան մերձաւոր երկրներում, այլ խօսքով՝ օսմանցի թիւրքերի ամենամօտ ցեղակիցների, այսինքն Իրանի ատրպատականցիների ու Կովկասի մուսուլմանների միաւորումը թուրք պետութեան շրջանակում և, երրորդ՝ Ասիայի թուրանական բոլոր ցեղախմբերի միաւորումը այդ թրքական առանցքի շուրջ³¹:

Հարկ է նշել, որ Գէօքալփի ծրագրի առաջին հանգրուանի իրականացման ճանապարհին տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութիւնը: 1917 թ. ռուսական յեղափոխութիւնից յետոյ Օսմանեան ուժերի՝ դէպի Բաքու և Թաւրիզ շարժուելը և Կովկասն ու

³⁰ Նոյն տեղում, էջ 12:

³¹ Նոյն տեղում, էջ 21:

Ատրպատականը գրաւելու փորձը իրականում Գէօքալիի ծրագրի երկրորդ հանգրուանի իրականացման փորձ էր:

ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԿՈՎԿԱՍ ԵՒ ԻՐԱՆ

Իրանցի որոշ մտաւորականներ այն կարծիքին են, որ Իրանը երկու առումով պանթիւրքական հոսանքների ուշադրութեան կենտրոնում յայտնուեց: Նախ՝ կարևոր էր, որ Կովկասում և Կենտրոնական Ասիայում ջնջուէին պարսկերէն լեզուի և իրանական մշակոյթի հետքերը, որպէսզի հնարաւոր լինէր ստեղծել նոր ինքնութիւն և, երկրորդ՝ Իրանի հիախսարևմտեան շրջաններում ապրող թիւրքախօս իրանցիների առկայութիւնը, որը պանթիւրքականների տեսակէտից Թուրանի մէկ մասնիկն էր:

Նրանք նշում են, որ ռուս-պարսկական պատերազմներից յետոյ, երբ Կովկասն ընկաւ ցարական Ռուսաստանի տիրապետութեան տակ, ռուսները որոշեցին պայքարել Կովկասում պարսկերէն լեզուի ու գրականութեան ազդեցութեան ու տարածման դէմ և այդ պայքարում յենուեցին թուրքերէն լեզուի տարածման վրայ, որով փորձեցին տեղի բնակիչներին օժտել ինքնութեան որոշ պատկերացումներով³²:

Հետագոտող Ռաջաբ Իզադին իր «Հայեացք մէկ տասնամեակ Ադրբեջանի ինքնութեան շուրջ մարտահրաւերի վրայ» յօդուածում, զարգացնելով այդ տեսակէտը, մէջ է բերում Հասուլերին. «Ռուսաստանի կողմից գրաւուելուց առաջ Ադրբեջանի [նախկին Խորհրդային] մշակութային կեանքը իրանական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ էր: Կրթուած դասա-

³² Նոյն տեղում, էջ 22:

կարգն ընդհանուր առմամբ օգտուում էր պարսկերէն լեզուից ու գրականութիւնից: Այս մշակութային կապը նոր գրաւուած երկրների ու նրա դեռևս հզօր հարևանի՝ Իրանի միջև ռուսներին անհանգստացնում էր, և այդ պատճառով որոշեցին, հովանաւորելով տեղի թուրքական մշակոյթի տարածումը, ջախջախել այդ ազդեցութիւնը»³³:

Իզադիի համոզմամբ Ռուսաստանի նման քաղաքականութիւնը համահունչ չէր իր իսկ շահերին, քանի որ Օսմանեան կայսրութիւնում պանթուրքական հակումների ի յայտ գալով Կովկասում թուրքական մշակոյթի ու լեզուի նկատմամբ հետաքրքրութիւնը մեծացաւ. «Նկատի ունենալով Ռուսաստանի և Օսմանեան կայսրութեան հին թշնամութիւնը՝ ռուսներն այդ հակումների տարածումից անհանգստացան և պանթուրքական շրջանակներին ճնշեցին և պանթուրքական մամուլի հրատարակութիւնն արգելեցին»³⁴:

Իրանցի պատմաբան Քաւէ Բայաթը գրում է, որ պարսկերէն լեզուի ու իրանական մշակոյթի ազդեցութեան դէմ պայքար մղում էր նաև Կենտրոնական Ասիայում, և որպէս օրինակ նշում է «Թուրք Իւրդու» թերթը, որը դէմ էր «Բուխարայէ Շարիֆ»³⁵ թերթի պարսկերէն հրատարակուելուն: Հաւանաբար այդ հակառակութիւնն ազդեցիկ է եղել այն բանում, որ իր հրատարակութեան վերջին շրջանում «Բուխարայէ Շարիֆ» թերթը

³³ رجب ایزدی، نگاهی به یک دهه چالش بر سر هویت آذربایجان، مقاله، از کتاب ایران: هویت، ملیت، قومیت، مجموعه مقالات، به کوشش حمید احمدی، تهران، موسسه تحقیقات و توسعه علوم انسانی، ۱۳۸۳، چاپ دوم، صفحه ۳۵۷

³⁴ Նոյն տեղում, էջ 358:

³⁵ Հրատարակուել է ներկայիս Ուզբեկստանի Բուխարա քաղաքում:

հրատարակուեց թուրքերէն և անուանափոխուեց ու դարձաւ «Թուրան»³⁶:

Ք. Բայաթը, մէջքերում կատարելով ուկրաինացի թուրքագէտ, «Պանթիւրքիզմն ու իսլամը Ռուսաստանում» գրքի հեղինակ Սերժ Զենկովսկուց, գրում է, որ թէև իրանական հետքի ջնջումը թէ՛ Օսմանեան կայսրութիւնում, թէ՛ կայսրութեան սահմաններից դուրս թուրք ազգի վերակենդանացման ուղղութեամբ կատարուող աշխատանքների ընդհանուր առանձնաշատութիւններից մէկն էր, սակայն Ռուսաստանի թիւրքաբնակ տարբեր շրջաններից «...այս հարցը յատկապէս [Կովկասի] Ադրբեջանում կարևորութիւն ստացաւ, ուր իրանական ազդեցութիւնը շատ ակտիւ մեծ էր»³⁷:

Թուրաջ Աթաբակին «Գոֆթոգու»³⁸ թերթում հրատարակած «Ադրբեջանը և իրանական ազգայնականութիւնը» յօդուածում այն կարծիքին է, որ. «...Այդ ընթացքում մի խումբ կովկասացի մուսուլմաններ, որ այդ շրջանում ապրում էին Ստամբուլում, ներգրաւուեցին պանթիւրքական շարժումների մէջ: Իրանի Սահմանադրական յեղափոխութեան համար առաջացած դժուարութիւններից հիասթափուելն ու յուսահատուելը, 1905 թ. Ռուսաստանի յեղափոխութեան՝ արդիւնքի չհասնելը և Եւրոպայի ընկերվար-ժողովրդավարութեան վրայ իշխող ճգնաժամը

کاوه بیات، پان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز، کتاب، تهران، صفحه ۲۲

کاوه بیات، پان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز، کتاب، تهران، صفحه ۲۲

تورج اتابکی، آذربایجان و ناسیونالیسم ایرانی، مقاله، فصلنامه فرهنگی و اجتماعی گنتگو، شماره ۳۳، سال ۱۷-۳۵ صفحات ۱۷-۳۵، تهران، ۱۳۸۱ <http://goftogu.com/> (30.05.2017 թ.):

այն գործօններից էին, որոնք ազդեցիկ էին այդ փոփոխութեան մէջ»³⁹:

Պանթիւրքական գաղափարները ներթափանցեցին Կովկաս առաջին հերթին այն ուսանողների միջոցով, ովքեր ուսման նպատակով մեկնեցին Եւրոպա ու ծանօթացան կրօնական համալսարանների արևելագէտների հետ:

Նրանցից էր շուշեցի Ահմադ Աղա-Օղլուն (1869-1938), ով ուսման նպատակով մեկնեց Փարիզ: Սկզբում նա գրում էր Իրանի քաղաքական ու մշակութային կեանքի ու Իրանի վերածնունդի մասին, սակայն ծանօթանալով «Միասնութին ու յառաջադիմութին» (Իթթիհադ վէ թերաքքի) կոմիտէի անդամներ Ահմեդ Ռեզայի ու Դոկտ. Նազըմի հետ, հրապուրուեց թիւրքալեզու տարածքների հարցերով, յատկապէս Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցող իրադարձութիւններով: Վերադառնալով Կովկաս՝ նա հիմնեց «Հայաթ» (կեանք) թերթը, որը ժամանակի կարևոր թերթերից մէկն էր⁴⁰:

Պանթիւրքիզմի տարածման գործում կարևոր ներդրում ունեցաւ Ալի բէյ Հուսէյնզադէն (1864-1941), ով նոյապէս կովկասցի էր: Նա կրթութիւն է ստացել Պետրբուրգում, այնուհետև՝ Ստամբուլի ռազմական բժշկութեան դպրոցում, որը Օսմանեան կայսրութեան մէջ պանթիւրքիզմի ձևաւորման գլխաւոր կենտրոններից մէկն էր: Վերադառնալով Կովկաս՝ Թուրան անուամբ աշխատանքի անցաւ լրագրութեան ոլորտում:

تورج اتابکی، آذربایجان و ناسیونالیسم ایرانی، مقاله، فصلنامه فرهنگی و اجتماعی گفتگو، شماره ۲۳، سال ۱۳۸۱، تهران، صفحات ۳۵-۱۷

کاوه بیات، بان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز، تهران، صفحه ۱۳

Յատկանշական է, որ 1911 թ. Աղչուրան, Գասպըրալըն և Ալի բէյ Հուսէյնզադէն ընտրուեցին Միասնութիւն և յառաջադիմութիւն կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի անդամ:

Մոհամմեդ Ամին Ռասուլզադէն (1884-1955), ով, համարուում է Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան հիմնադիրը, ծնուել էր Բաքուի մօտակայքում գտնուող Նովխանի գիւղում: Երիտասարդ տարիքից ներգրաւուել էր քաղաքական պայքարի մէջ և յօդուածներ էր գրում տարբեր թերթերի համար: Քաղաքական պայմանների բերումով տեղափոխուեց Իրան և շարունակեց պայքարը: 1911 թ. մեկնեց Ստամբուլ և միացաւ «Թուրք Օջախ» խմբերին: Առաջին համաշխարհային պատերազմի սկսուելուց յետոյ վերադարձաւ Բաքու և հիմնեց Մուսաաթ կուսակցութիւնը: Նա Բաքում հրատարակեց «Աչըղ սուզ» («Բացայայտ խօսք») օրաթերթը, որը, արժարժեւով «Թուրքանալ, մուսուլմանանալ և արդիականանալ» կարգախօսը, սկսեց երկրպագել օսմանցի թուրքերին: Ռասուլզադէն մեծ դեր ունեցաւ պանթիւրքական գաղափարների տարածման գործում:

Թ. Աթաբակին վերոնշեալ յօդուածում գրում է, որ սկզբնական շրջանում «Աչըղ սուզ»-ում հրատարկուող յօդուածները հիմնականում նուիրուած էին Կովկասի հարաւում բնակուող մուսուլման ցեղախմբերի պատմութեանն ու մշակոյթին: Այդ հանգրուանում Ադրբեջան անուան ընդհանրացման միտումներ չեն նկատուում: Նշեալ շրջանների բնակչութիւնը սովորաբար յիշատակուում էր որպէս թուրք մեւլաթթի (թուրք ազգ) կամ Ղաֆղազիյէ մուսուլման խալիլի (Կովկասի մուսուլման ժողովուրդ): Յատկապէս ուշագրաւ է, որ ինչպէս նշում է հեղինակը, 1917 թ. ապրիլի 29-ին Բաքում կազմաւորուած Հիմնա-

դիրների առաջին խորհրդարանն անգամ կոչուեց Կովկասի մուսուլմանների հանրային համագումար⁴¹:

Սակայն կարճ ժամանակ անց իրավիճակը փոխուում է. «Աչըղ սուլը» 1918 թ. յունուարի իր խմբագրականներից մէկում, առաջին անգամ կտրուկ և առանց քողարկելու անդրադարձաւ Իրանի Ատրպատականի թեմային: Այդ յօդուածում Ատրպատականի պատմական սահմաններն ամենայն շոայլութեամբ ներկայացուեցին հիւսիսում՝ Կովկասեան լեռներից մինչև հարաւում՝ Քերմանշահ, արևմուտքում՝ մինչև Թիֆլիս, և արևելքում՝ մինչև Կասպից ծով»⁴²:

1917 թ. հոկտեմբերին Բաքում հիմնադրուեց «Թուրք Օջախ» անունով մի խմբաւորում, որի նպատակներից էր նոր սերնդին ծանօթացնել իր թուրքական ժառանգութեանը և նրա մէջ ամրապնդել թուրքական գիտակցութիւնը՝ դպրոցների հիմնադրման, գրքերի հրատարակման և այլ միջոցներով:

Մոհամմեդ Ամին Ռասուլզադէն⁴³ իր «Ադրբեջանի Հանրապետութիւն. ձևաւորումը և ներկայիս իրավիճակը»⁴⁴ աշխատութեան մէջ, որը հրատարակուել է 1923 թ. Ստամբուլում, գրում է. «Թուրքիան խալիֆայութեան պատասխանատուն է ու համարում է իսլամական աշխարհի միասնութեան կենտրոնը: Նորագոյն Թուրքիան, որը հիմնադրուել է ազգային ինքնիշխանութեան հիման վրայ, թուրք ցեղախմբերի յոյսն է: Մեծ Թուրքիան ազգային փառահեղ գաղափարների յաղթանակի դրօշա-

تورج اتابکی، آذربایجان و ناسیونالیسم ایرانی، مقاله، فصلنامه فرهنگی و اجتماعی گفتگو، شماره ۳۳، سال ۱۷-۳۵ صفحات ۱۷-۳۵، تهران، ۱۳۸۱، <http://goftogu.com/> (30.05.2017 թ.):

⁴² Նոյն տեղում, էջ 25:

⁴³ Ռասուլզադէի գաղափարներին առաւել հանգամանօրէն կանդրադառնամ, քանզի նա 20-րդ դարասկզբի պանթիօրքական գաղափարախօսութեան նշանաւոր առաջնորդներից մէկն է:

⁴⁴ Azerbaijan Republic: characteristics, formation and contemporary state.

կակիրն է, Արևելքի ժողովուրդների երազանքների ջահակիրը»⁴⁵:

Հեղինակն Ադրբեջանը համարում է իսլամական աշխարհում ստեղծուած առաջին հանրապետութիւնը, որ միաժամանակ թուրքական պետութիւն է: Նա այդ պետութիւնը համարում է փոքր Թուրքիա և ընդգծում, որ «Մեծ Թուրքիայի և Փոքր Թուրքիայի ժողովուրդների միջև յարաբերութիւնները երկու եղբօր փոխյարաբերութեան նման մտերմիկ են: Այդ մտերմութեան ամենապարզ ապացոյցն այն է, որ Թուրքիայի հանրային կարծիքը նոյնիսկ այն պայմաններում, որ երկիրը Սևրի պայմանագրի մահապատժի վճռի ներքոյ անճարունակ էր դարձել, Ադրբեջանի անկախութեան պաշտօնական ճանաչումը Դաշնակից պետութիւնների կողմից տօնեց որպէս իր սեփական ուրախութիւնն ու երջանկութիւնը, այնպէս, ինչպէս Ադրբեջանի ժողովուրդը, որ երբ բուլշևիկների տիրապետութեան ներքոյ լաց ու կոծի մէջ էր, Թուրքիայի յաղթութեան հրաշքն իրենը համարեց և ցնծութիւն ապրեց»⁴⁶:

Ռասուլզադէն գրում է, որ Ադրբեջան է կոչուել Թարիզը՝ իր շրջակայքով, որը գտնուում է Հիսիսային Իրանում: Ռուսական յեղափոխութիւնից յետոյ Ադրբեջան կոչեցին մի տարածք, որն ընդգրկում է Կովկասի հարաւ-արևելքը և նրա կենտրոնը Բաքուն է⁴⁷: Նա այն համոզմունքին է, որ Արաքսի երկու կողմերում գտնուող այս երկու Ադրբեջաններում ապրում է նոյն թուրք ժողովուրդը: Ուշագրաւ է նրա այն տեսակէտը, որ Իրանական Ադրբեջանի թուրքերն ապրել են կիսանկախ ձևով,

محمد امين رسول زاده، جمهوری آذربایجان، چگونگی شکل گیری و وضعیت کنونی آن، ۱۹۲۳ میلادی، استانبول، برگردان تقی سلام زاده، تهران، نشر و پژوهش شیرازه، ۱۳۸۰، صفحه ۱۷۶، صفحه ۵

⁴⁶ Նոյն տեղում, էջ 6:

⁴⁷ Նոյն տեղում, էջ 9:

Իրանին ենթակայ են եղել մասնակիորէն, քանզի դարեր շարունակ թուրքերն են իշխել Իրանում: Դա է պատճառը, որ Ադրբեջանի թուրքերը ծանր չէին տանում նաև ճնշումները, քանզի դրանք չեն եղել ճնշումներ օտարի կողմից: Սակայն հէնց այս պատճառով էլ չեն գիտակցել, որ պարսկացող թուրք վերնախան իր ժողովրդին պարտադրել է մի օտար մշակոյթ՝ պարսկականը. «Ընտրանին իր կրթութիւնն ստանում էր պարսկերէնով, պարսկական դաստիարակութիւն էին ստանում, մտածում էին պարսիկի նման և համոզուած էին, որ իսկապէս իրանցի են: Հոգևոր դասն էլ, որ ժողովրդի հոգևոր կեանքի վրայ էր իշխում, միևնոյն հոգեբանութեան, դաստիարակութեան ու մտայնութեան տէրն էր այնպէս, ինչպէս ընտրեալների դասը, որը պատասխանատու էր ժողովրդի առօրեայ խնդիրները լուծելու հարցերում»⁴⁸:

Ըստ Ռասուլզադէի՝ Հիախսային Ադրբեջանի թուրքերի վիճակը ռուսների տիրապետութիւնից յետոյ քաղաքականապէս վատթարանում է. «Ադրբեջանի ժողովուրդն այս իրադարձութիւնից առաջ միասնական քաղաքակրթութեան ու կրօնի ազդեցութեան տակ, իր մշակութային դատապարտուածութեանը գիտակից չէր: Որովհետև այն ժամանակ դեռ իր ազգութիւնը՝ բառի այսօրուայ իմաստով, չէր ըմբռնել: Ադրբեջանի թուրքերը, որ աստիճանաբար պարսկացման առջև էին կանգնած, այս անգամ կանգնեցին ռուսացման քաղաքականութեան առաջ»⁴⁹: Այս պայմաններում, սակայն, գրում է հեղինակը, թուրքերի մէջ զարգանում են ինքնութեան և ինքնապաշտպանութեան զգացումները:

⁴⁸ Նոյն տեղում, էջ 13:

⁴⁹ Նոյն տեղում, էջ 17:

Ռասուլզադէն գրում է, որ թէև ռուսները հիմնել էին հոգևոր հիմնարկներ, ուր պատրաստում էին հոգևորականներ, և դպրոցներ, ուր կրթում էին երիտասարդները, բայց ժողովուրդն այդ հիմնարկների ու դպրոցների շրջանաւարտների նկատմամբ արհամարհական վերաբերում ունէր. նա ցանկանում էր ունենալ ի՛ր ակունդը (մուսուլման հոգևորական- Ս.Մ.) իր մաքթաբխանէի (տէրթողիկեան տիպի դպրոց- Ս.Մ.) շրջանաւարտը: Թէև այս դպրոցները և սրանց շրջանաւարտները, որոնցից ժողովուրդն այդքան ամուր կառչել էր, նոյնպէս ամբողջովին իրենը չէին և կրում էին Իրանի մշակութային ազդեցութիւնը, «...սակայն ռուսական մշակոյթի համեմատ, որը ժողովրդի հոգուն օտար էր, աւելի ազգային ու աւելի հարազատ էր համարում»⁵⁰:

1905 թ. յեղափոխութեան պարտութիւնից յետոյ, գրում է Ռասուլզադէն, Ռուսաստանում սկսուեց յետադիմական սաստիկ շարժում. գլուխ բարձրացրեց շովինիզմը: Նրա համոզմամբ «Ռուսական շովինիզմն իրապէս կենտրոնացել էր թուրք աշխարհի վրայ... Այդ ժամանակ ձևաւորման ընթացքում էր քաղաքական ընդատակեայ մի խմբաւորում, որի անդամները մեծաւ մասամբ այն երիտասարդներն էին, ովքեր փորձառութիւն էին ձեռք բերել 1905 թ. յեղափոխական խմբաւորումներում...Այս խմբաւորումը հաւատում էր ռուսների և Ռուսաստանում բնակուող թուրքերի միջև իրաւահաւասարութեան՝ բոլոր բնագաւառներում և միաժամանակ իր նպատակն էր համարում ամբողջ թուրքական աշխարհի և իսլամական աշխարհի ազատութիւնը: Այս խմբաւորման գաղափարը ժողովուրդների միջև

⁵⁰ Նոյն տեղում, էջ 17-18:

իրաունքների ամբողջական հաասարութիւնն էր և այդ պատճառով էլ Մուսաաթ (հաասարութիւն- Ս.Մ.) էր կոչուել»⁵¹:

Ռասուլզադէն յանգում է այն եզրակացութեանը, որ արդէն 20-րդ դարի սկզբներին «Բաքուն համարում էր թուրքական ազգայնականութեան կենտրոնը, և ռուսական բոլշևիկեան կուսակցութիւնը ձգտում էր այդ կենտրոնը ոչնչացնել: Այդ կուսակցութիւնը նպատակին հասնելու համար գտաւ թուրքերի դէմ ռուսների ասանդական դաշնակցին՝ հայերին»⁵²:

Համառօտ կերպով նշենք, որ Օսմանեան կայսրութիւնում պանիսլամական և պանօսմանական գաղափարների ձախողումից յետոյ առաջ քաշուեց պանթուրքականութեան գաղափարախօսութիւնը, որի քարոզիչն ու տարածողը Երիտասարդ թուրքերն էին, ովքեր էլ 1907 թ. հիմնեցին Միութիւն և յառաջադիմութիւն կուսակցութիւնը:

1911 թ. Բաքում հիմնադրուեց Մուսուլմանական դեմոկրատական մուսաաթ կուսակցութիւնը: Կուսակցութեան հիմնադիրները՝ Ռասուլզադէն, Շարիֆզադէն, Քազեմզադէն և այլք, հովանաւորում էին թուրքերի կողմից: 1917 թ. տեղի ունեցաւ Մուսուլմանական դեմոկրատական մուսաաթ կուսակցութեան և Թուրք ֆեդերալիստների կուսակցութեան համատեղ համագումարը: Այդ համագումարում երկու կուսակցութիւնները միատրուեցին և կոչուեցին Թուրք մուսաաթական ֆեդերալիստների դեմոկրատական կուսակցութիւն: Կուսակցութեան համագումարում Ռասուլզադէն, Գոջինսկին, Օսրբեկովը, Աղայևը և մի քանի ուրիշներ ընտրուեցին Կենտրոնական կոմիտէի անդամ:

Մուսաաթականները յաակնում էին անկախութեան. 1918 թ. մայիսի 27-ին Թիֆլիս քաղաքում ձևաորեցին իրենց

⁵¹ Նոյն տեղում, էջ 27-28:

⁵² Նոյն տեղում, էջ 42:

կառավարութիւնը և հոչակեցին Ադրբեջանի Հանրապետութեան անկախութիւնը: Յունիս ամսին նշեալ կառավարութիւնը իր նստավայրը տեղափոխեց Գեանջա քաղաք: 1918 թ. սեպտեմբերի 15-ին Նուրի փաշայի հրամանատարութեամբ թուրքական բանակի կողմից Բաքուի գրաւումից յետոյ մուսաւաթականների կառավարութիւնը տեղափոխուեց Բաքու:

Իրանի պատմութեան և պատմական աշխարհագրութեան հետազոտող, գրող և թարգմանիչ դոկտոր Էնայաթօլլահ Ռեզան իր «Ինչպէ՞ս Ադրբեջան անունը դրուեց Առանի վրայ» յօդուածում գրում է. «Թէև մուսաւաթականները միասնական ու կազմակերպ խումբ չէին, այդուհանդերձ թուրքերի ազդեցութիւնը նրանց վրայ մեծ էր: Խորհրդային փոքր հանրագիտարանում, որ 1954 թ. հրատարակուել է Մոսկուայում, այսպէս է գրուած. «Մուսաւաթականները հետևում էին թուրքերին և [իրենց հիմնած պետութիւնը] պանթուրքական պետութիւն էր:

Ենթադրում է, որ Կովկասում Առանն ու Շիրուանը Ադրբեջան անուանելը եղել է թուրքերի պահանջով ու քաղաքականութեամբ, որովհետև թուրքերը, որ մի քանի անգամ յարձակուել էին Իրանի Ատրպատականի վրայ, հակառակ իրականացրած մեծ ջարդերի, մշտապէս հանդիպել էին Ատրպատականի ժողովրդի սաստիկ դիմադրութեանը, ուստի չէին կարող ուղիղ ճանապարհներով Ատրպատականի ժողովրդին թեքել դէպի իրենց: Այդ պատճառով ընտրեցին ոչ ուղիղ ճանապարհը և փորձեցին նախ՝ Կովկասն ու Ադրբեջանը միաւորել «Ադրբեջան» միասնական անուան շուրջ և ապա՝ նշեալ երկու տարածքները միացնել իրենց հողին»⁵³:

⁵³ عنایت الله رضا، چگونه نام آذربایجان بر اران نهاده شد؟، مقاله، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، تهران، شماره ۱۸۲-۱۸۱، صفحات ۲۵-۴

Նշենք, որ 1920 թ. ապրիլի 28-ին Կարմիր բանակը գրաւեց Ադրբեջանը և վերջ դրեց Ադրբեջանի Հանրապետութեան գոյութեանը: Ինչպէս նշում է Էնայաթօլլահ Ռեզան իր վերոնշեալ յօդուածում, «Այդ թուականին Բաքում և նրա շրջակայքում յայտարարուեց խորհրդային իշխանութիւն: Սակայն «Ադրբեջան» անունը, որ պանթիւրքիստները դրել էին Առանի ու Շիրուանի վրայ, նոր պետութիւնն էլ պահպանեց:

Այսպիսով՝ «Ադրբեջան» անունը՝ նախ մուսաւաթականների կողմից դրուեց Կովկասի մի մասի վրայ և այնուհետ՝ խորհրդային Միութեան կողմից հաստատուեց ու կայունացաւ»⁵⁴:

Պարսիկ պատմաբանը, Ադրբեջան անուան գործածութիւնը քաղաքական ծրագրի մաս համարելիս յենում է նաև Վասիլի Բարտոլդի տեսակէտի վրայ. «Կովկասի Ադրբեջանի անունը յեղափոխութիւնից (նկատի ունի 1917 թ. ռուսական յեղափոխութիւնը) յետոյ միայն սկսեց օգտագործուել...» և «...Ադրբեջան անունը Ադրբեջանի Հանրապետութեան համար այն պատճառով ընտրուեց, որ ենթադրում էր, թէ Ադրբեջանի Հանրապետութեան հաստատումով Իրանի Ատրպատականն ու Ադրբեջանի Հանրապետութիւնը կը միաւորուեն...Ադրբեջան անունը այդ տեսակէտից ընտրուեց.... Երբ անհրաժեշտ լինի մի անուն ընտրել, որ ամբողջ Ադրբեջանի Հանրապետութիւնն ընդգրկի, այդ դէպքում կարելի է Առան անունն ընտրել»⁵⁵:

Թուրաջ Աթաբակին իր «Ադրբեջանը ժամանակակից Իրանում»⁵⁶ գրքում, վերլուծելով խորհրդային Միութեան դերա-

⁵⁴ Նոյն տեղում:

⁵⁵ Նոյն տեղում, էջ 18:

⁵⁶ تورج اتابکی، آذربایجان در ایران معاصر، ترجمه محمد کریم اشراق، انتشارات توس، چاپ اول، ۱۳۷۶، تهران، صفحه ۲۸۷، صفحات ۱۵-۱۰

կատարութիւնը պատմութեան վերաշարադրման հարցում նշում է. «Խ. Միութիւնը... ձևացնում էր, որ... «նոր հայրենիք» է հիմնել, որն ի վիճակի է «Խորհրդային նոր մարդ» դաստիարակել: Այս նոր հայրենիքի հիմնական առանձնայատկութիւնը համարում էին այն բնական ուժը, որը ի զօրու էր զանազան էթնիկ խմբերի ինքնութիւնները զարգացնել... Այդ նպատակով շատ մեծ աշխատանք կատարուեց, որպէսզի պատմութիւնը վերաշարադրուի»: Աթաբակին դրա օրինակներից մէկը համարում է Խորհրդային Ադրբեջանի (ներկայիս Ադրբեջանի Հանրապետութեան) պատմութիւնը. «... Սկսեցին գրել, որ Ադրբեջանի տարածքը հնագոյն ժամանակներից թուրքական որոշ ցեղախմբերի հայրենիքն է: Հիւսիսային և Հարաւային Ադրբեջան եզրերի օգտագործումը Իրանի Ատրպատականի և նախկին Խորհրդային Ադրբեջանի մտաւորականների որոշ շրջանակներում, Արաքս գետի հիւսիսային ու հարաւային շրջանները առանձնացնելու առումով, մէկ այլ օրինակ է այն փորձից, թէ ինչպէս էին օգտագործում աշխարհագրական պարզ եզրերը՝ պատմական օրինականութիւն ստեղծելու նպատակով»⁵⁷:

ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻՆ

Բնականաբար Օսմանեան կայսրութիւնում, հետագայում՝ արդէն Թուրքիայի Հանրապետութիւնում և Կովկասի թիւրքաբնակ շրջաններում, իսկ 1918 թուականից՝ նաև Ադրբե-

⁵⁷ Նոյն տեղում, էջ 10-11:

ջանի Հանրապետությունում տեղի ունեցող պանթիփրքական նկրտումների նկատմամբ Իրանը չէր կարող անտարբեր մնալ:

Իրանական հակազդեցությունը արտայայտում էր երկու մակարդակի վրայ, մէկը՝ իրանցի մտաւորականների ու մամուլի գործիչների, միւսը՝ Իրանի պետութեան պաշտօնական ու անպաշտօն դիրքորոշումների:

Իրանցի պատմաբան Քաւէ Բայաթը, ուսումնասիրելով 1900-ական թուականներին Բաքում և Թաւրիզում հրատարակուած մամուլը, իր «Պանթիփրքիզմը և Իրանը» գրքում նշում է. «1906 թ. նոյեմբերին Բաքուի «Էռշադ» օրաթերթի համարներից մէկում ոմն Սալեհ Բէյգի հրատարակած մի յօդուածը, որտեղ յիշեալը խօսում էր «Ադրբեջանի⁵⁸ ներսում թուրքերէն լեզուի խրախուսման ու տարածման» անհրաժեշտութեան մասին, առաջացրեց իրանցիների հակազդեցութիւնը, որը համարում է այն առաջին քայլերից մէկը, որ իրանցիները կատարեցին վերոյիշեալ երևոյթի դէմ⁵⁹: Թեհրանում հրատարակուող «Հաբլօլ Մաթին» թերթում ոմն Պարսիզադէ Պարսիներեժադ պատասխանեց այդ յօդուածին՝ շեշտելով «...պարսկերէն լեզուի հիմնական դերը Իրանի անկախութեան պահպանման գործում...»»:

Այդուհետ մամուլում երկուստէք շարունակում է հակամարտութիւնը մի կողմից՝ «օսմանցի թուրքերը մեր եղբայրներն են, ու մեր համակրանքը նրանց նկատմամբ արեան հետ խառնուել ու հոգով է դուրս գալու» կամ Զրադաշտին թուրք կոչելը բանաստեղծ Սուլէյման Նազիֆի կողմից ու, միւս կողմից՝ «իրանցիներն ու թուրքերը ցեղային տարբերութիւն ունեն, և պարսկերէն լեզուն կիրառման ու տարածման տեսակէտից

⁵⁸ Խօսքը Իրանի Ատրապատականի մասին է:

⁵⁹ کاوه بیات، پان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیرازة کتاب، تهران، صفحه ۲۳

Իրանի հիպիսարևմտեան շրջաններում պատմական առումով նախորդում է թիրքերէնին»: Ի պատասխան պանթիւրքական այն տեսակէտի, որ իբր Իրանի քաղաքակրթութիւնը պարսկական քաղաքակրթութիւնից առաջ թուրքական քաղաքակրթութիւն է եղել, հակադիր կողմը վկայակոչում է այն բազմաթիւ մզկիթները, տներն ու դպրոցները, որ կառուցուել են Իրանում թիրքական հարստութիւնների տիրապետութեան ժամանակ և հարցնում. «Եթէ այդ յուշարձանները թուրքի հոգուց ու մոնղոլի ցեղից են, ինչու՞ իրենց երանելի հայրենիք Մոնղոլիայում այդ գլուխգործոցներից մի քանիսը չեն կառուցել»⁶⁰ և այլն:

Իրանցի մտաւորականների հակազդեցութիւնը չի սահմանափակուում միայն Իրանում լոյս տեսնող թերթերում յօդուածներ գրելով: Օրինակ՝ մի խումբ իրանցի մտաւորականներ, ովքեր ապրում էին Բեռլինում, սկսում են հրատարակել «Իրանշահր» անունով հանդէս, որտեղ նիւթեր են հրատարակում ի պաշտպանութիւն Իրանի ինքնիշխանութեան և իրանական ինքնութեան: Հանդէսում թարգմանաբար հրատարակուում են հատուածներ գերմանացի գիտնական Եոզեֆ Մարկուարտի «Ուսումնասիրութիւններ Առանի պատմութեան մասին» գրքից: Յատկանշական է, որ այդ մտաւորականներից ոմանք, հետագայում վերադառնալով Իրան, իշխանութեան մէջ ազդեցիկ պաշտօնների հասան:

Իրանի Դեմոկրատական կուսակցութեան Բաքուի կոմիտէն 1918 թ. փետրուարի 10-ին Բաքում սկսում է հրատարակել մի հանդէս «Ատրպատականը՝ Իրանի անբաժանելի մասը» անունով, որտեղ արծարծուում են Իրանի պատմութեան մէջ Ատրպատականի կարևոր դերի, երկրի հողային ամբողջակա-

تقی ارانی، آذربایجان یا یک مساله حیاتی و مماتی در ایران، مقاله، سال ۱۹۲۴، مجله فرنگستان برلین 60
Տե՛ս նաև Բայաթ, էջ 70:

նութեան և ազգային հպարտութեան պահպանման գործում այդ երկրամասի պարտականութեան մասին և այլն:

Այստեղ հարկ է նշել, որ 1918 թ. ապրիլին, երբ Թաւրիզը գտնուում էր Օսմանեան բանակի տիրապետութեան ներքոյ, օսմանցիների գաղտնի սպասարկութիւնը (Թէշքիլաթը Մախսուսէ) Թաւրիզում հրատարակում է «Ազարաբաղեգան» անունով մի հանդէս, որը պանթիօրքիզմի քարոզչութեան օսմանեան հիմնական միջոցն էր:

Սկզբնական շրջանում պանթիօրքական հակումներ ունեցող մամուլում շեշտը դնում են Ատրպատականի և Առանի պատմութեան, Ատրպատականում թուրքերէն լեզուի տարածման, մայրենիի պահպանման ու նման հարցերի վրայ: Քաղաքական պահանջ՝ ինքնավարութիւն, անջատում Իրանից կամ միացում Օսմանեան կայսրութեանը, չկայ:

Աթաբակին գրում է, որ «...1905-1909 թթ. Իրանի Սահմանադրական յեղափոխութիւնից յետոյ է, որ ընդհանուր առմամբ իրանցիների, իսկ մասնաւորապէս Իրանի ատրպատականցիների մօտ արծարծուեցին քաղաքական որոշ հարցեր, որոնք միախառնուած էին ազգութիւն և ցեղ (ethnicity) հասկացութիւնների հետ: 19-րդ դարի Արևմտեան գաղափարների (ազգ, ազգայնականութիւն, ազգային ինքնիշխանութիւն) ներթափանցումը Իրան, նոյն ժամանակաշրջանում հարևան Անատոլիայում պանթիօրքիզմի տարածումը Իրանի միջին դասակարգի մտաւորականների որոշ շրջանակների անհանգստութիւն պատճառեց: Այս մտաւորականների հիմնական մտահոգութիւնը Իրանի անկախութեան պահպանումն էր ու պայքա-

րը ամէն մի դրսևորման դէմ, որ սպառնում էր երկիրը բաժանել առանձին շրջանային պետութիւնների»⁶¹:

Աթաբակին մէջբերում է բրիտանական պետութեան քաղաքական պաշտօնեաներից մէկի խօսքը. «Թուրքիան ձեռք ձեռքի է տուել Անդրկովկասի թաթարների հետ (Բաքու), և նրանք էլ յաւակնում են Ատրպատականին... Թուրքիայի համար Իրանի հիւսիսը, որպէս միջանկեալ օղակ Միջին Ասիայի թուրանցիների հետ, կարևոր նշանակութիւն ունի»⁶²:

Պանթիւրքիզմին իրանական հակազդեցութեան մէկ այլ օրինակ է Շէյխ Մոհամմադ Խիաբանիի առաջարկը՝ Ատրպատականը վերանուանել Ազատիստան: Խիաբանին ծնունդով Իրանի Ատրպատականի Խամենէ գիւղից էր: Հոգևորական էր, Իրանի Սահմանադրական յեղափոխութեան յաղթանակի համար պայքար մղող քաղաքական գործիչներից մէկը, Ատրպատականի մոջահեդների և Դեմոկրատական կուսակցութեան ղեկավարներից: Երկու շրջան ընտրուել է Իրանի խորհրդարանի պատգամաւոր: Դէմ էր Իրանի գործերին օտար երկրների միջամտութեանը: Այն կարծիքին էր, որ Իրանում պէտք է տեղի ունենան բարենորոգումներ, սակայն քաղաքական ճանապարհով դրա հնարաւորութիւնը չէր տեսնում: Երբ 1918 թ. մայիսի 27-ին Արաքս գետի հիւսիսային շրջանների վրայ Ադրբեջան անունը դրեցին, Խիաբանին ու նրա հետևորդներն առաջարկեցին Ատրպատական նահանգի անունը փոխել Ազատիստանի, որպէսզի յստակօրէն տարանջատուէր մէկը միւսից ու քաղաքական շահարկումների առիթ չդառնար:

تورج اتابکی، آذربایجان در ایران معاصر، ترجمه محمد کریم اشراق، انتشارات توس، چاپ اول، ۱۳۷۶، تهران، صفحه ۲۸۷، صفحه ۱۱

تورج اتابکی، آذربایجان و ناسیونالیسم ایرانی، مقاله، فصلنامه فرهنگی و اجتماعی گفتگو، شماره ۳۳، سال ۲۸، تهران، صفحه ۲۸ <http://goftogu.com/> (30.05.2017 թ.):

Իրանի, յատկապէս Ատրպատականի պատմութեան ու լեզուի մասին բազմաթիւ լրջագոյն աշխատութիւնների հեղինակ Ահմադ է Քասրաւին իր «Ատրպատականի 18 տարուայ պատմութիւն» գրքում գրում է. «Շարժման հէնց առաջին օրերին, Հաջի Էսմայիլ աղա Ամիրխիզին, ով հին ազատատենչերից էր ու այդ ժամանակ Խիաբանիի մօտ մարդկանցից, առաջարկեց՝ նկատի ունենալով, որ Ատրպատականը Սահմանադրութեան ճանապարհին ջանքեր է թափել ու Իրանի համար ազատութիւնը նա է ձեռք բերել, անունը դնենք «Ազատիստան»: Այդ ժամանակ «Ադրբեջան» անունը մի դժուարութեան էր հանդիպել, քանի որ ռուսական կայսրութեան քայքայուելուց յետոյ Կովկասի թիրաքալեզուները Բաքում ու նրա շրջակայքում մի փոքրիկ հանրապետութիւն էին կեանքի կոչել և այն անուանել էին «Ադրբեջանի Հանրապետութիւն»: Այդ տարածքի անունը գրքերում Առան է: Սակայն որովհետև այդ անունը շրջանառութիւնից դուրս է եկել, և միւս կողմից՝ այդ հանրապետութեան հիմնադիրների յոյսն ու փափագն այն էր, որ Ատրպատականի հետ միանան, այդ պատճառով իրենց տարածքի ու հանրապետութեան համար ընտրեցին այդ անունը: Ատրպատականցիները, որ այդպիսի միատրումով գոհ չէին ու իրանականութիւնից չէին ուզում հրաժարուել, կովկասցիների այդ անուանակոչումից խիստ անհանգստացան, և որովհետև այդ անուանակոչումը տեղի էր ունեցել, ոմանք ասում էին՝ ասելի լաւ է մենք մեր նահանգի անունը փոխենք. Ազատիստանի առաջարկն այդ պատճառով է եղել»⁶³:

احمد كسروی، تاریخ هیجده ساله آذربایجان، دو جلد، جلد دوم، چاپ نهم، تهران، انتشارات امیر کبیر، سال ۲۵۳۷، ۹۱۹ صفحه، صفحه ۸۷۳

Այս մասին տե՛ս նաև

عنایت الله رضا، چگونه نام آذربایجان بر اران نهاده شد؟، مقاله، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، تهران، شماره ۱۸۱-۱۸۲، صفحه ۱۹

Յատկանշական է, որ իրանական ազգայնականության ձևաւորման յատկանիշներից մէկը ատրպատականցի մտաւորականների ներգրաւուածութիւնն է այդ հարցում: Պանթիւրքիզմի յարձակումներին պատասխանում են ատրպատականցի մտաւորականներ Սէյէդ Հասան Թաղիզադէն, Հոսէյն Քազէմ-զադէ Իրանշահրը, Մահմուդ Ղանիզադէ Սալմասին, Ռեզազադէ Շաֆադ Թաքրիզին, Սէյէդ Ահմադ Քասրաւին, դոկտ. Թաղի Առանին, Ալի Սադէդի Թաքրիզին և այլք⁶⁴: Կան նաև ուրիշներ, ինչպէս Ռաշիդ Եասեմին, ով քուրդ էր, կամ Իռաջ Աֆշարը, ով թէև Եազդ քաղաքից էր, սակայն որովհետև աֆշար էր, թուրքերը նրան թուրք էին կոչում⁶⁵, բանաստեղծ Մալեք Օլ Շոարայէ Բահարը, դոկտ. Մահմուդ Աֆշարը, տարբեր թերթեր, ինչպէս «Շաֆադ է Սորխ»-ը, «Թաջադոդ»-ը և այլն:

Ամենակարևոր ու մնայուն աղբիւրներից մէկը Սէյէդ Ահմադ Քասրաւի Թաքրիզի գիրքն է՝ «Յօդուած Ազերիի կամ Ազերբայեզանի հնագոյն լեզուի մասին», որտեղ նա ազերի լեզուի նմուշներ է ներկայացնում և բացատրում, թէ ինչպէս է թուրքերէն լեզուն տարածուել Ատրպատականում և փոխարինել ազերիին⁶⁶:

Սահմանադրական շարժման ձախողութիւնների և երկրում բռնկուած շարժումների (Խիաբանիի շարժում, Ջանգալիի շարժում (Անտառականներ), Խորասանի շարժում և այլն) ընթացքում ի յայտ եկան բարենորոգիչներ, ովքեր համոզուած էին, որ միայն կենտրոնացուած ու ուժեղ պետութիւնն է կարող պահպանել Իրանի հողային ամբողջականութիւնը: Նրանք շեշտը

کاوہ بیات، پان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز کتاب، تهران، صفحه ۱۱۴

⁶⁵ Նոյն տեղում, էջ 115:

⁶⁶ Նոյն տեղում, էջ 96:

դրեցին պարսկերէն լեզուի տարածման և թուրքերէն ու արաբերէն տարրերից մաքրման վրայ: Այս մտեցումը սկիզբ դրեց մի տեսակ լեզուաբանական ազգայնականութեան ձևաւորման, որն աւելի ուշ տարածուեց նաև պատմութեան վրայ: Ասպարէզ նետուեց «մէկ ազգ, մէկ երկիր» գաղափարը, որի իրականացմանը նուիրուեց 1920-ական թուականների կէսերին գահ բարձրացած Ռեզա Շահը:

Անշուշտ պէտք է նշել, որ իրանական ազգայնականութեան ի յայտ գալը միայն պանթիւրքական նկրտումների հետևանք չէր: Իրանական ազգայնականութեան ձևաւորման մասին պատմաբան Մաշալլահ Աջոդանին գրում է. «Իրանական ազգայնականութեան ձևաւորման գործում դերակատար էր նաև Իրանի յետամնացութիւնը, որը մղում էր մտաւորականների վերլուծել պատճառներն ու փնտրել այդ վիճակից դուրս գալու լուծումներ: Օրինակ՝ Միրզա Ֆաթհալի Ախոնդգադէն Երուսալի Վերածննդի շրջանի մտաւորականների ազդեցութեամբ, շեշտելով Իրանի հնագոյն շրջանի փառքը, քարոզում էր կրօնի ու քաղաքականութեան տարանջատումը: Նա իր աշխատութիւններում շեշտը դնում էր «օրէնսդրութեան և Սահմանադրական իշխանութեան հաստատման, հնագոյն Իրանին վերադառնալու, կրօնական իշխանութեան մերժման, կիրառական գիտութեան, գիտութեան, ուսման և իսլամական բողոքականութեան անհրաժեշտութեան վրայ»⁶⁷: Նա փորձեց պատրաստել պարսկական այբուբեն, որը պիտի փոխարինէր արաբականին. նա հաւատացած էր, որ այբուբենի փոփոխութիւնը և արաբական մշակոյթից ազատուելը նոյնիսկ օրէնքի իշխանութիւնից և Սահմանադրական խորհրդարանից աւելի կարևոր է:

67 ماشالله آجودانی، مشروطه ی ایرانی، تهران، نشر اختران، سال ۱۳۸۷، چاپ هشتم، ۵۶۰ صفحه، صفحات ۲۱۹-۲۱۸

Թէև նրա ջանքերը արդիւնք չտուեցին, սակայն ազդեցին իրենից յետոյ եկող մտաւորականների և Սահմանադրական շարժման ղեկավարների վրայ⁶⁸:

Մէկ այլ մտաւորական՝ Միրզա Աղախան է Քերմանին գրում էր հայրենիքի, հնագոյն Իրանի փառքի, արիական ցեղի, արեան և ազգային լեզուի մասին. լեզուն համարում էր ազգի գոյատևման հիմքը և կրօնից կարևոր: Նա ամբողջական արդիականացումը համարում էր հարցի լուծում և պաշտպանում էր բարենորոգումների գաղափարը, կրօնական իշխանութեան և կրօնի ու քաղաքականութեան միաւորման բացառումը, հնագոյն Իրանի ռոմանտիկ պաշտամունքը և այլն⁶⁹:

Ինչպէս նշուեց, պանթիւրքական գաղափարներին հակազդում էին ոչ միայն իրանցի մտաւորականներն ու մամուլի գործիչները, այլև Իրանի պետական այրերը՝ իրենց պաշտօնական կամ անպաշտօն դիրքորոշումներով: 1923 թ. յուլիսին Ստամբուլի Թուրք օջախի կենտրոնում ելոյթ ունեցաւ ոմն Ռուշանի Բէյ, որի արձագանքը իրանական թերթերում և պետական հաստատութիւններում պիտի համարել Իրանում պանթիւրքիզմի խնդրի լայն արձարձման ու քննարկման սկիզբը⁷⁰: Այդ ելոյթում արհամարհանք կար Իրանի ու իրանցիների նկատմամբ. «Հիւսիսային Իրանն ամբողջութեամբ թուրքական է... Իրանի քայքայումը լեզուի ու էթնոսի խառնուրդի պատճառով անխուսափելի է... Օսմանեան կայսրութեան բաղկացուցիչ տարրերը աստիճանաբար Օսմանեան կայսրութեան անկման պատճառ դարձան, Իրանն էլ Օսմանեան [կայսրութեան] ճա-

⁶⁸ Նոյն տեղում:

⁶⁹ Նոյն տեղում:

⁷⁰ کاوه بیات، پان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز، کتاب، تهران، صفحات ۳۳-۳۱

կատագրին կարժանանայ, և անկասկած այն ժամանակ Իրանի Ադրբեջանի թուրքերը հիմնելու են մի թուրքական թագաւորութիւն»⁷¹:

Ռուշանի Բէյի այս ելոյթին պաշտօնապէս արձագանքում է Իրանի դեսպանատունը Ստամբուլում: Իրանի քաղաքական ներկայացուցիչ Էսհադ Խան Մաֆխամ-օլ-դոլէն, հանդիպելով Անկարայի իշխանութեան ներկայացուցչին, պահանջում է Ռուշանի Բէյին պատժել և թերթերում ափսոսանք յայտնելով՝ Իրանի իշխանութիւնից ներողութիւն խնդրել⁷²:

Թուրքիայի «Վարթան» օրաթերթում ոմն լրագրող Ահմեդ Շիքիբու հրատարակում է յօդուած «Հարաւային Ադրբեջանում բնակուող թուրքերը» վերնագրով, որը, ըստ որոշ պատմաբանների, «... Կարելի է համարել «Հիւսիսային և Հարաւային երկու Ադրբեջաններ» հասկացութեան պաշտօնական գործածման սկիզբը»⁷³:

ՊԱՆԹԻՐՔԻԶՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԶԵՒԱԽՈՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Օսմանեան կայսրութեան փլուզումով 1923 թ. պաշտօնապէս հռչակուեց Թուրքիայի Հանրապետութեան կազմաւորումը:

⁷¹ Նոյն տեղում:

⁷² Նոյն տեղում:

⁷³ کاوه بیات، بان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز، کتاب، تهران، ۲۴۷ صفحه، صفحه ۷۶

Թուրքիայի Հանրապետությունը, Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի ղեկավարությամբ, նկատի ունենալով համաշխարհային քաղաքական իրավիճակն ու երկրի յետպատերազմեան պայմանները, պաշտոնապես յայտարարեց, որ չի հետապնդում պանթուրքական գաղափարներ: Սակայն դա դեռ չէր նշանակում, որ իրականում նրանք այդ գաղափարների իրականացմանը հետամուտ չէին: Ինչպես նշում է Իրանի Սահմանադրական յեղափոխության առաջնորդներից Սէյէդ Հասան Թաղիզադէն (հետագայում՝ Իրանի խորհրդարանի պատգամատոր)՝ «Հիմնական տարբերությունը ոչ թէ խնդրի էություն մէջ է, այլ հնարաւորութիւնների ճիշտ գնահատման և իրատեսական ուղեգծի որդեգրման»⁷⁴:

1925 թ. հիմնադրուեց Թուրքական պատմագիտական ընկերությունը, որի նպատակն էր ներկայացնել թուրքերի պատմական ձեռքբերումները: 1930 թ. նշեալ ընկերության նախագահ Թոֆիկ Բէյը յայտարարեց. «Մինչև վերջերս արդի քաղաքակրթության հիմնադիրներ էին համարում յոյներն ու հռոմէացիները, մինչդեռ այսօր փաստուել է, որ յունական քաղաքակրթությունը ընդօրինակումն է թուրքական քաղաքակրթության», իսկ 1932 թ. յայտարարուեց Արևային լեզուի տեսութեան մասին, ըստ որի՝ թուրքերէն լեզուն աշխարհի առաջին լեզուն է, իսկ միւս լեզուներն առաջացել են նրանից և, ընդհանրապէս, մարդկության բոլոր ձեռքբերումներն ունեն թուրքական ծագում, ինչպէս չինականն ու հնդկականը: Խեթերն ու շումերներն էլ, որոնք Միջագետքի քաղաքակրթութիւնների հիմնադիրներն են, եղել են թուրքեր⁷⁵: Քեմալականների յաջորդ

کاوہ بیات، پان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز، کتاب، تهران، ۲۴۷ صفحه، صفحات ۱۰۵-۱۰۴

⁷⁵ Նոյն տեղում, էջ 106:

քայլը «Թուրքերէն լեզուի համագումարի» հիմնումն էր 1926 թ., որին յանձնարարուեց թուրքերէն լեզուն մաքրել պարսկերէն ու արաբերէն տարրերից⁷⁶: Նշենք, սակայն, որ քեմալականների պաշտօնական քաղաքականության մէջ պանթիւրքիզմը յետին պլան մղուեց, իսկ պանթիւրքական գործիչների գործունէութիւնը սահմանափակուեց, որովհետև քեմալականներն այն կարծիքին էին, որ Օսմանեան կայսրութեան տրոհման պատճառներից մէկը Միութիւն և յառաջադիմութիւն կուսակցութեան վարած արկածախնդրական քաղաքականութիւնն է եղել: Կրկնենք, սակայն, որ դրանով խնդրի էութիւնը չփոխուեց⁷⁷:

Սկրի դաշնագիրը պանթիւրքիստների համար մահուան դատավճռի նման էր, որովհետև ըստ այդ դաշնագրի Արևմտեան Հայաստանի մի զգալի հատուած պէտք է միանար Հայաստանի Հանրապետութեանը, իսկ Օսմանեան կայսրութեան քրդաբնակ շրջաններում պէտք է հիմնուէր Քրդական ինքնավարութիւն: Նման Հայաստանի ստեղծումը լուրջ հարուած էր պանթիւրքիստների ծրագրին, ուստի նրանք իրենց բոլոր ջանքերը կենտրոնացրին այդ դաշնագիրը ձախողելու ուղղութեամբ⁷⁸:

Քեմալականներին յաջողուեց 1920-1922 թթ. յոյների պարտութեան մատնել, դաշնակից ուժերին պարտադրել դուրս գալ Թուրքիայից և, ի վերջոյ, 1923 թ. Լոզանում կրոպական պետութիւնների հետ կնքել խաղաղութեան նոր պայմանագիր: Նշելի է, որ բանակցութիւնների ընթացքում արծարծուած հարցերի շուրջ թուրքերը դրսևորեցին ճկունութիւն, սակայն արևե-

⁷⁶ Նոյն տեղում:

⁷⁷ کاوه بیات، پان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز، کتاب، تهران، ۲۴۷ صفحه، صفحات ۱۰۷

⁷⁸ هراج استپاتیان، مقدمه ای بر پان ترکیسم، چاپ اول، بهار ۱۳۸۴، ماهنامه آراکس، تهران، ۱۵۸ صفحه، صفحه ۸۲

լեան սահմանների հարցում մնացին անդրդուելի: Սա մէկ անգամ ևս վկայում է նրանց պանթիօրքական հակումների մասին: Թուրքական պատուիրակութեան խորհրդական Մինիր Բէյը, ով նաև 1918 թ. Իրանի Ատրպատականի գրաման ժամանակ թուրքական բանակի հրամանատարներից էր, Լոզանում ասել է. «Թուրքերը պիտի պահպանեն ցամաքային կապը Կովկասի մոաուլմանների հետ: Այդ տեսակէտից Վանը, որպէս Իրանից Բաքու տանող ճանապարհ, նրանց անհրաժեշտ է»:⁷⁹

Նկատի ունենալով, որ Կովկասի թիւրքաբնակ շրջանները արդէն ճանաչում էին որպէս Ադրբեջան, ինչպէս նաև այն, որ Կենտրոնական Ասիայի թիւրքաբնակ շրջանները գտնուում էին Խորհրդային Միութեան սահմաններում, ընդհանուր առմամբ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատուածում Թուրքիայի Հանրապետութեան յարաբերութիւններն արդէն Խորհրդային Միութեան մաս կազմող այդ թիւրքալեզու հանրապետութիւնների հետ պէտք է դիտարկել Թուրքիայի Հանրապետութեան և Խորհրդային Միութեան փոխյարաբերութիւնների շրջանակում: Այդ ժամանակաշրջանում թէև Թուրքիայի Հանրապետութիւնը չի փորձել ուղղակի ու բացայայտ կերպով աշխատել պանթիօրքական գաղափարների տարածման և համապատասխան աշխատանքների կազմակերպման ուղղութեամբ, սակայն անուղղակի աշխատանքներ կատարուել են:

Թուրքիայի Հանրապետութեան կրաւորական կեցուածքի պատճառներն էին համաշխարհային պատերազմից յետոյ տնտեսապէս ու ռազմական առումով թուլացած լինելը և

⁷⁹ Նոյն տեղում, էջ 85:

Խորհրդային Միության հետ յարաբերությունները չսրելու ձգտումը:

Ժամանակակից թուրք պատմաբան Այշե Հիյրը իր «Պանթիլիքիզմից ցեղապաշտություն» յօդուածում գրում է. «Աթաթուրքն այն կարծիքին էր, որ պանթիլիքիզմը կարող է վտանգել Թուրքիա-Խորհրդային Միության փոխյարաբերությունները, որոնք 1917 թ. յունուարի 17-ի անկողմնակալության և բարեկամության պայմանագրով նոր փուլ էին մտել... Մէկ առ մէկ փակուցին «Ենի Թորքեստան», «Ուլլու Եուրտ», «Ենի Ղաֆղազիա» և «Ազերի թուրք» թերթերի նման թերթեր, որոնք հրատարակում էին 1927-1931 թուականների ընթացքում այն ազերիների կողմից, ովքեր ռուսական յեղափոխությունից յետոյ բնակություն էին հաստատել Թուրքիայում և, թուրքական ցեղապաշտական գաղափարախօսության նկատմամբ պաշտօնական վերաբերմունքը ճշտում ու փոփոխում էր Խորհրդային Միության և Գերմանիայի հետ Թուրքիայի յարաբերությունների համապատկերում»⁸⁰:

**ԴԵՄՈՎՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԱԴԻԲԵՋԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ⁸¹
ՇՆՈՒՆԴՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ**

1939 թ. սեպտեմբերի 1-ին սկսուեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Իրանը սկզբում յայտարարեց իր չեզոքութեան մասին, սակայն հետագայում, երբ երկիր ներխու-

⁸⁰ عایشه حر، از پان ترکیسم تا نژاد پرستی، مقاله، وبگاه اخبار روز، مترجم باخیش سببی، ۲ نوامبر ۲۰۱۱
<http://www.akhbar-rooz.com/article.jsp?essayId=41813> (10.11.2012 թ.):

⁸¹ Կոչում է նաև Ադրբեյջանի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետություն:

ժեցին հարաւից՝ անգլիական և հիւսիսից՝ խորհրդային զօրքերը, մտաւ պատերազմի մէջ:

Պատերազմի աւարտից յետոյ անգլիական զօրքերը քրեցին Իրանը, սակայն խորհրդային և ամերիկեան զօրքերը մնացին Իրանում, ինչը խախտում էր 1943 թ. Թեհրանի կոնֆերանսի աւարտին արուած յայտարարութիւնը, որով երեք երկրները ճանաչում էին Իրանի տարածքային ամբողջականութիւնն ու անկախութիւնը:

Խորհրդային Միութեան աջակցութեամբ 1945 թ. դեկտեմբերի 12-ին Ատրպատականում ստեղծուեց Ադրբեջանի Ինքնավար Հանրապետութիւնը՝ Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութեան ղեկավարմամբ, 1946 թ. յունուարի 22-ին՝ Քրդստանի Ինքնավար Հանրապետութիւնը (Մեհաբադի Հանրապետութիւն)՝ Քրդստանում: Այդ հանրապետութիւններն ունենալով մէկ տարուց քիչ կեանք վերացուեցին Իրանի կենտրոնական իշխանութեան կողմից:

Իրանի պատմութեան մէջ այդ իրադարձութիւնները կարևոր են այն առումով, որ դրանցով մէկ անգամ ևս Իրանի տարածքային ամբողջականութիւնը ենթարկուեց լրջագոյն վտանգի:

Դոկտ. Համիդ Ահմադին իր «Ինչ կատարուեց Ատրպատականում» յօդուածում գրում է. «1945 թ. սեպտեմբերին Իրանի Համայնավարական կուսակցութեան⁸² անդամներից Սէյէդ Զաֆար Փիշևարիի⁸³ միջոցով Թաւրիզում հիմնադրուեց Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութիւնը⁸⁴: Այդ ժամանակ արդէն չորս տարի էր, ինչ խորհրդային ուժերը գտնուում

⁸² The Communist Party of Iran

⁸³ Sayyed Ja'far Pishevari

⁸⁴ The Azerbaijan Democratic Party

էին Իրանում: Որոշ ժամանակ անց այդ կուսակցութիւնը, յենուելով Կարմիր բանակի վրայ, հռչակեց ինքնավարութիւն և սկսեց գրաւել զօրանոցներ և հաստատել իր վերահսկողութիւնը Ատրպատականի քաղաքների ու գիւղերի վրայ: Արտաքին ճնշումները Խորհրդային Միութեան վրայ և Խորհրդային Միութեան ու Իրանի պետական այրերի ուղիղ բանակցութիւններն ի վերջոյ յանգեցրին նրան, որ Խորհրդային Միութիւնն իր ուժերը դուրս բերեց Իրանից: Իրանի կենտրոնական իշխանութիւնը վերականգնեց իր ուժերը և կարողացաւ ազատագրել Ատրպատականը: Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութեան պարագլուխները փախան երկրից: Այդ կուսակցութեան ղեկավարները, հետագայում՝ նաև կողմնակիցները Ատրպատականի ճգնաժամի պատճառները վերագրեցին ու վերագրում են Իրանում տիրող վիճակին, բռնապետութեանը, սահմանափակումներին և այլն՝ այդ շարժումը բնութագրելով որպէս զուտ ժողովրդական շարժում և մերժում որևէ արտաքին պատճառ ու միջամտութիւն, մինչդեռ բազմաթիւ հետազոտողների գնահատմամբ Ատրպատականի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետութեան ստեղծման փաստի յետևում կանգնած էր Խորհրդային Միութիւնը, որը ձգտում էր, Իրանից որոշ տարածքներ գրաւելով, հասնել Պարսից Ծոցի տաք ջրերին և նախառատ տարածքներին»⁸⁵:

Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութեան ղեկավար Սէյէդ Ջաֆար Փիշևարին ծնուել էր 1893 թ. Ատրպատականի Խալխալի շրջանի գիւղերից մէկում և պատանի տարիքում ընտանիքի հետ տեղափոխուել Բաքու: Կրթուել էր Բաքուի Արևելքի աշխատատեղերի համայնավարական համալ-

⁸⁵ حمید احمدی، در آذربایجان چه گذشت؟، مقاله، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، شماره ۱۸۲-۱۸۱، صفحات ۴۵-۴۴

սարանում: Որպես լրագրող աշխատակցել էր տարբեր թերթերի: Բաքում և Իրանում ծառայել էր համայնավարական (կոմունիստական) գործունեության: Ձերբակալուել էր Իրանում և մօտ տասը տարի բանտ նստել: Իրանի Թուղեհ կուսակցության հիմնադիրներից էր: 1944 թ. Փիշևարին ընտրուեց Իրանի Ազգային խորհրդի (Մեջլիս) անդամ, բայց նրա հաւատարմագիրը Ազգային խորհրդի կողմից չհաստատուեց: Ոմանք այն կարծիքին են, որ այդ իրադարձությունն էր հիմնական շարժառիթը, որը պատճառ դարձաւ, որ Փիշևարին յենուի ռուսների վրայ և հիմնադրի Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութիւնը և հետապնդի անջատողական նպատակներ: Ատրպատականի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետութեան կործանումից յետոյ նա փախաւ Բաքու և 1947 թ. յուլիսին ինքնաշարժի կասկածելի արկածի հետևանքով մահացաւ:

Թուղեհ կուսակցութեան նախկին անդամ, պատմաբան Բաբակ Ամիր Խոսրուին իր «Ատրպատականը մնաց Ստալինի կոկորդում»⁸⁶ վերնագրուած հարցազրոյցում այն տեսակէտն է յայտնում, որ Պարսից ծոցի նախառատ շրջաններին տիրապետելու Ռուսաստանի գայթակղութիւնը պարզորոշ արտացոլուած է 1940 թ. նոյեմբերի 13-ին Խորհրդային Միութեան և Գերմանիայի արտաքին գործերի նախարարներ Մոլոտովի և Ռիբենտրոպի միջև կնքուած գաղտնի համաձայնագրում. «Համաձայնագրի նպատակը «ազդեցութեան շրջանների սահմանների ճշտորոշումն էր» պատերազմի աւարտից յետոյ: Մոլոտովը Մոսկուա վերադառնալով և Ստալինի հետ խորհրդակցելուց յետոյ Գերմանիայի դեսպան Շուլենբերգին յղած 1940 թ. նոյեմբե-

86 بابک امیر خسروی، آذربایجان در گلوی ایران گیر کرد؟، وبگاه تاریخ ایرانی، مصاحبه، ۳۰ آبان ۱۳۹۷
<http://tarikhirani.ir/Modules/files/Phtml/files.PrintVersion.Html.php?Lang=fa&TypeId=59&fileId=619> (01.11.17 թ.):

րի 30-ի նամակում գրում է, որ «Բաթումի և Բաքուի հարաւային շրջանները դէպի Պարսից ծոց ընդհանուր ուղղութեամբ որպէս ԽՍՀՄ պահանջների կենտրոն ընդունուի»⁸⁷:

Նկատի ունենալով, որ Պոտսդամի կոնֆերանսում, որը գումարուեց 1945 թ. յուլիսի 17-ից օգոստոսի 2-ը, ճանաչուեց Խորհրդային Միութեան վերահսկողութիւնը Արևելեան և Կենտրոնական Եւրոպայում իր գրաւած տարածքների վրայ, Ստալինը մտածում էր, որ նոյնը կարող է անել Իրանի որոշ տարածքների նկատմամբ, սակայն Թեհրանի կոնֆերանսում, որը տեղի էր ունեցել 1943 թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը, յայտարարուել էր Իրանի անկախութեան և հողային ամբողջականութեան անձեռնմխելիութեան մասին, ուստի Իրանի որոշ տարածքների գրաւումը կը դիտուէր որպէս ոտնձգութիւն Իրանի նկատմամբ: Հետևաբար թէև Ստալինը Ատրպատականը և Քրդստանը Խորհրդային Միութեանը կցելու մասին էր մտածում, սակայն դա կոկորդին մնացող պատառ էր, ու այն կու տալը հեշտ չէր: Հետևաբար Խորհրդային Միութիւնը Ատրպատականի ճգնաժամն օգտագործեց Իրանի վրայ ճնշում բանեցնելու և իր ազդեցութեան գօտին Իրանում մեծացնելու համար, և երբ 1946 թ. ապրիլի 4-ին կնքուեց Ղաւամ-Սադէիկով համաձայնագիրը, որով հիւսիսում նաւթի արդիւնաբերութեան արտօնութիւնը տրուեց Խորհրդային Միութեանը, վերջինս իր ուժերը դուրս բերեց Իրանից: Այդ պահից արդէն Ատրպատականի շարժման նահանջն սկսուեց»⁸⁸:

Նշենք, որ Իրանի նոր խորհրդարանը չվաւերացրեց Իրանի հիւսիսի նաւթարդիւնաբերութեան վերաբերեալ Իրանի և Խորհրդային Միութեան միջև կնքուած պայմանագիրը:

⁸⁷ Նոյն տեղում:

⁸⁸ Նոյն տեղում:

«Փիշևարիի օգնական դոկտ. Ջահանշահլուն գրում է, որ երբ 1946 թ. դեկտեմբերի 11-ին, Թալիզում Փիշևարիի հետ այցելեցին Խորհրդային Միության գլխավոր հիպատոս Լոլիևին, Փիշևարին, ով չափազանց վրդովուած էր ռուսների պահուածքից, խստագոյնս բողոքեց ու ասաց, թէ դուք մեզ հրապարակ էք բերել և հիմա, երբ ձեր շահից չի բխում, մեզ տմարդօրէն ւրում էք: Մեր մասին այլևս չենք խօսում, սակայն ասէք, թէ ի՞նչ պիտի լինի այս հաւատարիմ ու զոհաբերուող մարդկանց վիճակը, որոնք իրենց չխնայեցին: Գնդապետ Լոլիևը, ով զարմացել էր Փիշևարիի այդ համարձակութիւնից, պատասխանեց՝ նա ով քեզ իշխանութեան է բերել, այժմ ասում է՝ հեռացիր»⁸⁹:

Ռոբերտ Ռոսօն, ով 1945 թ. դեկտեմբերից 1946 թ. յունիսը եղել է ԱՄՆ հիպատոսի օգնականը Թալիզում, «Դը Միդլ Իստ Ջուրնալ»-ի 1956 թ. ձմռան համարում հրատարակած իր «Ատրպատականի ճգնաժամը 1946 թ.» վերնագրով յօդուածում գրում է. «Խորհրդային բանակը 1941 թ. Իրանի հիախում մի քանի շրջան էր գրաւել, որպէսզի այդ միջոցով պաշտպանի այն ճանապարհը, որով ԱՄՆ-ը պատերազմի ընթացքում չորս միլիոն տոննա պատերազմական իրեր ու նիւթեր էր ուղարկել այդ երկիր: Թէև Խորհրդային Միութիւնը, համաձայն այն պայմանագրի, որ ստորագրել էր, պարտաւոր էր իր գրաւած շրջաններում Իրանի պետութեան ինքնիշխանութեան իրաւունքը ոչ ռազմական հարցերում յարգել և աշխատել Իրանի հողային ամբողջականութեան համար, սակայն օգտագործեց իրավիճակը և Ատրպատականում, որ Խորհրդային Միութեան կողմից գրաւուած շրջանների սիրտն էր և հաղորդակցութեան կենսա-

⁸⁹ Նոյն տեղում:

կան կենտրոն էր Կովկասի ու Միջին Արևելքի միջև, ձեռնարկեց համայնավարական ապստամբություն:

Թարիզում Խորհրդային Միության գլխավոր հիպատոս Կրասնիկը...ապստամբների ղեկավարության պատասխանատուն էր...ապստամբներն ամիսներ առաջ իրենց կազմակերպությունը «Ատրպատականի դեմոկրատներ» անունով հիմնադրել էին և Խորհրդային Ադրբեջանից բերելով ակնառու թուով գաղթականներ, հզորացրել էին իրենց ռազմական ուժը: 1945 թ. նոյեմբերի 15-ին Խորհրդային Միությունն սկսեց զինամթերք ուղարկել ապստամբների համար և յաջորդ օրն իրականացնել լայնատարած յեղափոխական ծրագիր:

...Մի իրադարձություն, որը միաներից ամենի շատ ուշադրություն գրաւեց, տեղի ունեցաւ գրաւուած շրջանից դուրս: 1945թ. նոյեմբերի 20-ին այն ուժը, որ Իրանի պետութեան կողմից գործուղուել էր Ատրպատականի գրաւուած զօրանցները ազատագրելու, Ղազուինի մօտակայքում կանգնեցուեց խորհրդային ուժերի կողմից և յայտարարուեց, որ եթէ մէկ քայլ առաջ գան, նրանց վրայ կրակելու են»⁹⁰:

«...Ապստամբներին... յաջողուեց 1945 թ. դեկտեմբերին հիմնել Ատրպատականի անկախ իշխանութիւնը: Սին մի իշխանութիւն, որը դուրս էր Իրանի պետութեան վերահսկողութիւնից: Դրա նմանութեամբ էլ մի համայնական ռեժիմ հիմնուեց Ատրպատականի հարաւի քրդաբնակ շրջաններում»⁹¹:

90 , 181-182 شماره ۱۳۲۴، مقاله، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، صفحات ۶۸-۷۷

Այս յօդուածն առաջին անգամ հրատարակուել է 1956 թ. The Middle East Journal-ում:

⁹¹ Նոյն տեղում:

«...Խորհրդային ուժերը... եթե դուրս գային Իրանի հողից, Իրանի պետությունը առանց դրսից օգնության ստանալու, ապստամբներին կը նստեցնէր իրենց տեղը... հասաւ այդ օրը, սակայն խորհրդայինները որևէ քայլ չձեռնարկեցին... վերջապէս մարտի 10-ին հրատարակեցին մի յայտարարութիւն և նշեցին, որ Իրանում խառը վիճակի պատճառով, որը վտանգում է Խորհրդային Միութեան սահմանների անվտանգութիւնը, պարտաւոր են Իրանի հիւսիսային շրջանները տակաւին պահել իրենց գրաման տակ»⁹²:

Ապրիլի 22-ից խորհրդային ուժերն սկսեցին դուրս գալ Իրանից: Ինչն էր պատճառը: Թերևս հարցին կարելի է ճշգրտօրէն պատասխանել այն ժամանակ, երբ հրապարակուեն ԽՄԿԿ Քաղբիւրոյի արձանագրութիւնները, սակայն կատարուած իրադարձութիւնները յուշում են, որ խորհրդային իշխանութիւնը սխալուել էր իր հաշուարկներում: Նրանք մտածում էին, որ ԱՄՆ-ը և Բրիտանիան յոգնել են պատերազմից, որ իրենք կարող են քաղաքական ու քարոզչական միջոցներով և ռազմական ուժի գործադրմամբ ապակայունացնել թէ Իրանը և թէ Թուրքիան, և վերջինիս պարտութիւնից յետոյ գրաւել Միջին Արևելքի երկրները: Նրանք իրենց հաշուարկներում սխալուեցին, որովհետև մի կողմից՝ թէ Իրանը, թէ Թուրքիան ընդդիմացան Խորհրդային Միութեանը, միւս կողմից՝ Արևմտեան երկրները ԱՄՆ-ի գլխատրութեամբ ընդդիմացան Խորհրդային Միութեան ծրագրերին: Վերջինս գիտակցեց, որ կանգնելու է լուրջ դժուարութիւնների առջև, ուստի վերանայեց իր ռազմավարութիւնը և որոշեց նահանջել»⁹³:

⁹² Նոյն տեղում:

⁹³ Նոյն տեղում, էջ 78:

Ադրբեջանի Դեմոկրատական Ինքնավարության Իշխանության և Իրանի կենտրոնական իշխանության միջև բանակցություններն արդիւնք չտուեցին, որի հետևանքով Իրանի կենտրոնական իշխանության զինուած ուժերը հարձակուեցին Ադրբեջանի Դեմոկրատական Ինքնավարության իշխանության զինուած ուժերի վրայ և վերանուածեցին երկրի այդ տարածքները: Փիշևարին, Ատրպատականի Դեմոկրատական կուսակցության մի շարք ղեկավարներ և զինուորականներ փախան Խորհրդային Միութին:

Ադրբեջանի Դեմոկրատական Ինքնավարության իշխանության ձևաւորման ու վախճանի մասին հրատարակուած աղբիւրներից մէկը Համիդ Մոլլագադէի «Կնքուած գաղտնիքներ: Այն, ինչ չի ասուել Ատրպատականի իրադարձութիւնների մասին»⁹⁴ գիրքն է, որը հրատարակուել է 1997 թ. աշնանը Թաւրիզում: Մոլլագադէն լրագրող է, ով Խորհրդային Միութան փլուզումից յետոյ այցելել է Ադրբեջանի Հանրապետութիւն և իրեն հասանելի փաստաթղթերի և Ադրբեջանի Դեմոկրատական Ինքնավարության իշխանութան հետ առնչուած դերակատարների յուշերի հիման վրայ պատրաստել վերոնշեալ գիրքը:

Գրքում հրատարակուած է խորհրդային բանակի մայոր Էբրահիմ Նոռուզովի յուշերը: Նոռուզովը եղել է Կարմիր բանակի անվտանգութան սպայ և առաջիններից է, ով 1941 թ. մտել է Իրան: Նա իր յուշերում գրում է, որ մի օր իրեն և ոմն Նոսրաթի տանում են Բաղիրովի մօտ, ով իրենց յանձնարարում է մի երրորդ անձի հետ միասին մի ճամպրով տանել Թաւրիզ: Նորուզովն ասում է. «...Ենթադրում էի, որ մեր գործուղումը մեծ

⁹⁴ حمید ملازاده، رازهای سر به مهر، ناگفته های وقایع آذربایجان، انتشارات مهد آزادی تبریز، چاپ اول پاییز ۱۳۷۶، ۱۸۲ صفحه

հաւանականութեամբ կապուած է Դեմոկրատական կուսակցութեան կազմաւորման հետ... Իմ ենթադրութիւնը ճիշտ էր, որովհետև երբ Թաւրիզ հասանք և ճամպրուկը յանձնեցինք Սալիմ Ատակիշիովին, անմիջապէս գումարուեց Դեմոկրատական կուսակցութեան առաջին համագումարը, որից յետոյ հրատարակուեց կուսակցութեան կանոնագիրը: Ես համոզուեցի, որ ճամպրուկի պարունակութիւնը կուսակցութեան կանոնագրի տեքստն է եղել, որն անմիջապէս բազմացուեց և ցրուեց Թաւրիզ քաղաքում և ամբողջ Ատրպատականում»⁹⁵:

Ըստ նոյն աղբիւրի՝ 1944 թ. Խորհրդային Ջուլֆա քաղաքում տեղի է ունենում հանդիպում Միր Ջաֆար Բաղիրովի և Սէյէդ Ջաֆար Փիշկարիի միջև, որի ժամանակ Բաղիրովը Փիշկարիին առաջարկում է ստանձնել Իրանի Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութեան ղեկավարի պարտականութիւնները, սակայն վերջինս հրաժարում է: Բաղիրովը Փիշկարիին ասում է. «Էդալաթ (Արդարութիւն) կուսակցութեան պատմութեան մասին գրելը բաւական է, քանի դեռ ժամանակ կայ, մեզ ուղեկից եղիր»: Փիշկարին ի պատասխան Բաղիրովին ասում է. «Այս ռուսները, որոնք այսօր իրենց քաղաքական նպատակներն առաջ տանելու համար մեզ խաղի մէջ են ներքաշում, վստահելի մարդիկ չեն: Նրանք անհրաժեշտութեան դէպքում մեզ չեն օգնի և պայքարի դաշտում միայնակ կը թողնեն: Ռուսների բարեացակամութիւնը կապիկի բարեացակամութեան նման է, որ ջրում խեղդուելու ժամանակ ոտքը դնում է երեխայի գլխի վրայ: Ես նրանց լաւ եմ ճանաչում»: Ի վերջոյ երկար խօսակցութիւնից յետոյ Փիշկարին, վստահելով Բաղիրո-

⁹⁵ Նոյն տեղում, էջ 20-22:

վին, Իրանի ազգին ծառայելու նպատակով համաձայնուեց նրանց առաջարկությանը»⁹⁶:

Հարուարդի համալսարանի Քենեդի քոլեջի Կասպեան ուսումնասիրական ծրագրի հետազոտության տնօրէն Բրենդա Շիֆերը իր «Սահմանները և եղբայրութիւնը» աշխատութիւնում գրում է. «...Այս գիրքը (խօսքը «Սահմանները և եղբայրութիւնը» գրքի մասին է - Ս.Մ.) նոյնպէս մարտահրաւէր է նետում խորհրդային ժամանակաշրջանի մեծաթիւ յօդուածներում արծարծուած այն տեսակէտին, ըստ որի Իրանի Ատրպատականում էթնիկ շարժումներն ու գործողութիւնները հիմնականում եղել են Խորհրդային Միութեան գործը և Մոսկուայի քաղաքականութեան [գործադրման] միակ միջոցը Իրանի նկատմամբ: Իրականում Իրանում Ատրպատականի էթնիկ լայնածաւալ հակումները քսաներորդ դարում բազմիցս դրսևորուեցին, երբ Խորհրդային Միութիւնը նրանց այլևս աշխուժօրէն չէր խրախուսում»⁹⁷:

Բրենդա Շիֆերը յայտնի է իր թուրքամէտ հայեացքներով: Ինչպէս երևում է մէջբերուած պարբերութիւնից, նրա տեսակէտը հակասում է նոյնիսկ խորհրդային աղբիւրներին: Որևէ երկրի որևէ շրջանի բնակչութեան պահանջը պետութիւնից տուեալ շրջանի որևէ հարց լուծելու կամ անելի բարեկեցիկ ապրելու համար անպայման անկախական հակումների ու շարժման չի վերածուած: Ինքնավարութեան կամ անկախութեան ձգտումը պէտք է ունենայ լուրջ հիմքեր:

Շիֆերը, հաւանաբար մոռանալով իր տեսակէտը, նոյն գրքի մէկ այլ էջում գրում է. «...Այս իշխանութիւնը 1946 թ. երկ-

⁹⁶ Նոյն տեղում, էջ 20:

⁹⁷ Բրենդա Շիֆեր, Մրջա և Իրան, Թրքմէն Վարկայանի Աձր, Նաթր Օլոս, Նաթրի Դաճաճոյն Դաճաճաճ Դաճաճ, Չափ 31 Օլ, Տալ 1385, Տաճա 247, Տաճա 31

րորդ կէսին հանրային համակրանքի նուազման, տնտեսական պայմանների վատացման և այդ իշխանութեան մեկուսացման պատճառով սկսեց մարել, և մայիս ամսին Ատրպատականի շրջանից Խորհրդային ուժերի նահանջից յետոյ Թեհրանը հարձակուեց Թաւրիզի վրայ: 1946 թ. սեպտեմբերի 12-ին (1325 թ. ազար 21), Ատրպատականի նահանգային կառավարութիւնը Թագաւորական բանակի ուժերի կողմից կործանուեց»⁹⁸:

«Հանրային համակրանքի նուազումը» խօսում է այն մասին, որ ժողովրդի մէջ այն չունէր ամուր հիմք:

Վերոշարադրեալից եզրակացնում ենք, որ Երկրորդ համաշխարհային պատերազմը Խորհրդային Միութեան համար իր սահմանների հարաւում նոր տարածքներ նուաճելու լաւագոյն առիթը դարձաւ: Իր իշխանութիւնն այդ տարածքներում ամրապնդելու նպատակով, յենուելով պետութիւնից ժողովրդի որոշ հատուածի դժգոհութեան վրայ, Խորհրդային Միութիւնը հիմնում է արհեստական հանրապետութիւններ: Թէև Իրանի դիմադրութեան և այլ երկրների ճնշումների պատճառով Խորհրդային Միութիւնն իր նպատակին չի հասնում, սակայն այդ արհեստական հանրապետութիւնների թէկուզև մի քանի ամսով գոյութիւնը ստեղծում է նախադէպեր, որոնք ցայսօր օրինակի աղբիւր են պանթիւրքական հոսանքների համար և շարունակում են վտանգել Իրանի հողային ամբողջականութիւնը:

⁹⁸ Նոյն տեղում, էջ 80:

**ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՓԼՈՒՋՈՒՄԸ**

Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ պանթիւրքական հակումները թէ՛ Թուրքիայի Հանրապետութիւնում, թէ՛ Խորհրդային Միութիւնում հնարաւոր չեղաւ բացայայտ կերպով դրսևորել և դրանք վերածուեցին մի տեսակ անթելուած կրակի:

ԽՍՀՄ թիւրքալեզու հանրապետութիւններում չդրսևորուեցին, որովհետև Խորհրդային Միութիւնն ունէր գաղափարախօսական բոլորովին այլ արժէհամակարգ, որը խարսխուած էր այլ սկզբունքների վրայ, և իշխանութիւնն ունէր բոլորովին այլ առաջնահերթութիւններ: Խորհրդային Միութեան ամբողջատիրական ու բռնապետական էութիւնը և գաղափարախօսական արժէհամակարգը թոյլ չէին տալիս, որ երկրի ներսում արծարծուէին ցեղային, ազգային, կրօնական, լեզուական և նմանատիպ հարցեր, և, հետևաբար, թիւրքալեզուների շրջանում սերմանուած պանթիւրքական գաղափարները դառնային օրակարգ կամ դրանց իրականացման ուղղութեամբ գործունէութիւն ծաւալուէր:

Այդուամենայնիւ պէտք է ընդգծել, որ Խորհրդային պատմագրութիւնն՝ ընդհանուր առմամբ, իսկ Խորհրդային Ադրբեջանի պատմագրութիւնը մասնաւորապէս սկսեց յօրինել պատմութիւն, որի արդիւնքում Խորհրդային Ադրբեջանի Հանրապետութեանը վերագրուեց հին անցեալ ու հարուստ մշակոյթ, Առանի պատմութիւնը սեփականացուեց և վերագրուեց Ադրբեջանին, արձանագրուեց, որ Իրանի Ատրպատականի ժողովուրդն ու Ադրբեջանի ժողովուրդը նոյն թիւրքական արմատից են սերել, այդ երկու հատուածները նախապէս եղել են մէկ ու միասնական և հետագայում մեծապետական ուժերի կողմից են

բաժանուել, որի հետևանքով էլ առաջացել են Հիսիսային ու Հարաւային Ադրբեջանները, և նմանատիպ այլ գաղափարներ, որոնք իրականութեանը չէին համապատասխանում և զուտ քաղաքական նկատառումներ էին:

Բոլորովին այլ էր վիճակը Թուրքիայի Հանրապետութիւնում, որտեղ մի կողմից՝ որդեգրուել էր արևմտականացման քաղաքականութիւն, որն այդ շրջանում Թուրքիայի պետական այրերի համար աւելի կարևոր էր, աւելի գործնական ու աւելի շահաւէտ, քան դէպի Արևելք ծաւալուելու ծրագրերը, ուստի առժամապէս առկախուել էր պանթիւրքական բացայայտ գործունէութիւնը, և միւս կողմից՝ Խորհրդային Միութեան «երկաթեայ վարագոյրը» խոչընդոտ էր թիւրքալեզու հանրապետութիւններում պանթիւրքական աշխատանքներ ծաւալելու համար:

Երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ պանթիւրքական գաղափարները սահմանափակուեցին Թուրքիայի ներսում մի քանի ազգայնական կենտրոնների և լրագրողական գործունէութեան շրջանակում. դրանք արծարծում էին Թուրքիայի ազգայնական մի քանի օրաթերթերում⁹⁹:

Աւելացնենք, որ Իրանում Մոհամմադ Ռեզա Փահլևիի ժամանակաշրջանում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ, նախ՝ վերջ տրուեց Ադրբեջանի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետութեան և Քրդստանի Ինքնավար Հանրապետութեան գոյութեանը, իսկ պանթիւրքական գաղափարների արծարծումը հնարաւոր չէր իշխանութեան որդեգրած ազգային քաղաքականութեան և երկրում տիրող բռնապետական համակարգի պատճառով:

احمد كاظمی، پان تركيسم و پان آذربيسم، انتشارات موسسه فرهنگي مطالعات و تحقيقات بين المللي ابرار معاصر 99 تهران، سال 1385، چاپ نخست، صفحه 273، صفحه 27

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՆԹԻՐՔԻԶՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆՈՒՄ (ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԼՈՒԶՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Իրանի մասին քաղաքական լուրեր, յօդուածներ և ուսումնասիրութիւններ տպագրող կայքերի և Իրանում կամ Իրանից դուրս հրատարակուող գրքերի վրայ նոյնիսկ թերևակի հայեացքը ցոյց է տալիս, թէ ներկայում ինչքան մեծ տեղ է յատկացում Իրանի էթնիկ խմբերի խնդիրներին:

Իրական են այդ խնդիրները, թէ ոչ, հարցական է և ուսումնասիրութեան ենթակայ: Սակայն դրանք մէկ կողմից՝ առիթ են ստեղծել ի յայտ գալու կազմակերպութիւնների, որոնք խնդիրների լուծումը տեսնում են Իրանից անջատուելու և անկախանալու կամ հարևան պետութիւններին միանալու մէջ, և միւս կողմից՝ պարարտ հող պատրաստել Իրանի ներքին գործերին արտաքին ուժերի միջամտութեան համար, որոնք շահագրգռուած են Իրանի մասնատմամբ և Իրանից տարածքներ խլելու մէջ:

Հարցն աւելի ընկալելի է դառնում, երբ այն դիտարկում ենք վերջին երեք տասնամեակում աշխարհում և տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձութիւնների համապատկերում:

Դրանք են.

1. Խորհրդային Միութեան փլուզումը,

2. Հարաւարտի կազմաքանդումը,
3. Իրաքում դաշնային համակարգի կիրառումը,
4. Ամերիկայի Միացեալ Նահանգների և Իրանի փոխարարբերութիւնները,
5. Հաղորդակցական միջոցների աննախընթաց զարգացումը,
6. Իրանում ազգային ինքնութեան թերարժևորումը վարչակարգի կողմից,
7. Իրանի վարչակարգի ներքին քաղաքականութիւնը, ընդ որում՝ հասարակական կեանքում մի շարք սահմանափակումներն ու տնտեսական վիճակը,
8. «Արաբական գարունը»,
9. Սիրիայի քաղաքացիական պատերազմը,
Եւ այլն:

Որոշ հետազոտողներ¹⁰⁰ բերում են նաև այլ պատճառներ, ինչպէս.

1. 1997 թ. տեղի ունեցած նախագահական ընտրութիւնների հետևանքով իշխանութեան եկած բարենորոգիչների քաղաքականութիւնը (1997-2005 թթ.),
2. Պոստմոդերնիզմը,
3. «Պատմութեան ասարտ»-ի տեսութիւնը և այլն:
Այս պայմանները առիթ են ստեղծել, որպէսզի Թուրքիան և Ադրբեջանը Իրանի նկատմամբ հանդէս գան բացայայտ թէ գաղտնի տարածքային պահանջներով:

¹⁰⁰ **حميد احمدى**، ايران: هويت، مليت، قوميت، مجموعة مقالات، تهران، مؤسسة تحقيقات و توسعه علوم انسانی، ۱۳۸۳، چاپ دوم، ۵۵۲ صفحه، صفحات ۹-۱۰

Ստորև կը ներկայացնենք Թուրքիայի պանթիքական քաղաքականության դրսևորումներից օրինակներ, որոնք ցոյց են տալիս, որ Թուրքիան Միջին Ասիայի թիրքալեզու երկրների հետ տնտեսական, մշակութային, գիտահետազոտական և այլ բնագաւառներում համագործակցութեան հաստատման ու զարգացման ուղիներ է որոնում, իսկ երկրի ներսում խրախուսում է պանթիքական կենտրոններին՝ արծարծելու իրենց գաղափարները:

2009 թ. հոկտեմբերի 3-ին կեանքի կոչուեց Թիրքալեզու պետութիւնների համագործակցութեան խորհուրդը (The Cooperation Council of Turkic Speaking States), որին անդամակցում են Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Թուրքիան: Գաղափարը, իհարկէ, նոր չէր, և Թուրքիան դեռևս 1992 թ. նախաձեռնել էր թիրքալեզու պետութիւնների գագաթնաժողովի (Turkic Speaking States Summit) գումարումը, որն ի վերջոյ յանգեցրեց վերոյիշեալ խորհուրդը կեանքի կոչելուն:

Կազմակերպութեան ծրագրերից են՝ Թիրքական գործարար խորհրդի, Թիրքալեզու պետութիւնների փոխադրական միջանցքների վարչական գործակալութեան, Թիրքական գիտահետազոտական հիմնադրամի, Գոյքի ձեռքբերման օրէնսդրական ներդաշնակեցման յանձնաժողովի, Թիրքալեզու պետութիւնների զարգացման հիմնադրամի, Թիրքալեզու պետութիւնների միասնական իրաւարար դատարանի, Թիրքական միջհամալսարանական միաւորման և, Միասնական ապահովագրական ընկերութեան հիմնումը¹⁰¹:

Այլ օրինակ՝ 2012 թ. մայիսի 12-13-ը Անկարայում տեղի ունեցաւ, կազմակերպիչների բնորոշմամբ՝ Իրանի ազերիների

¹⁰¹ http://www.turkkon.org/eng/icerik_multi.php?no=13 (10.10.2016):

առաջին խորհրդաժողովը, որին մասնակցում էին Իրանից, Ադրբեջանի Հանրապետությունից, Թուրքիայից, Իրաքից և այլ երկրներից ներկայացուցիչներ: Երկօրեայ խորհրդաժողովի աւարտին կեանքի է կոչուել, այսպէս կոչուած, Հարաւային Ադրբեջանի թուրքերի միջազգային ազգային խորհուրդ (International South Azerbaijani Turks' National Council), որի խօսնակը խորհրդաժողովից յետոյ տեղի ունեցած մամլոյ ասուլիսի ժամանակ յայտարարեց, որ իրենց վերջնանպատակն է Հարաւային Ադրբեջանի անկախութիւնը:

Նիստերին մասնակցել են Ադրբեջանի Հանրապետութեան կրթութեան նախկին նախարար Ֆիրուզին Ջելիլովը, Ադրբեջանի խորհրդարանի պատգամաւորներ Ֆերեջ Ուլուալը և Սաբիր Ռուստամխանլին, Թուրքիայի խորհրդարանի նախկին պատգամաւորներ Ջեմիլ Ինալը և Օրհան Քայրհանը, Իրաքի խորհրդարանի թուրքմէն պատգամաւոր Ֆելզի Էկրեմը և այլք¹⁰²:

Փաստօրէն Թուրքիայի Հանրապետութիւնը թոյլ է տալիս, որ իր երկրի տարածքում Ադրբեջանի Հանրապետութեան նախկին ու գործող պետական բարձրաստիճան պաշտօնեաների մասնակցութեամբ տեղի ունենայ խորհրդաժողով, որտեղ քննարկուում է հարևան՝ Իրանի Իսլամական Հանրապետութեան տարածքի մի մասի անկախացման (անջատման) հարցը: Այս ամբողջը պանթիւրքական վաղեմի ծրագրերի արդի դրսևորումներ են:

Նոյնն է պարագան Ադրբեջանի Հանրապետութիւնում, որտեղ պանթիւրքական նկրտումներն աւելի բացայայտ են: Նշենք երկու դէպք:

¹⁰² <http://www.todayszaman.com/news-280353-iranian-azeris-set-up-national-council-in-turkey-aspire-for-independence.html> (15.11.2016):

Առաջին՝ 1989 թ. հրատարակած իր ծրագրում Ադրբեջանի Ժողովրդական ճակատ կուսակցությունը պահանջում էր «Քաղաքական բոլոր սահմանների չեղարկումը Հարաւային Ադրբեջանի հետ՝ մշակութային ու տնտեսական յարաբերութիւնների զարգացման համար», «Սահմանի երկու կողմերում ապրող ադրբեջանցիների ցեղային միասնութեան վերականգնումը», «Ադրբեջանի Ժողովուրդը պէտք է ճանաչուի որպէս մէկ ամբողջական միաւոր: Տնտեսական, մշակութային ու ընկերային յարաբերութիւնները պէտք է վերականգնուեն բաժանուած ազգի միջև...»¹⁰³:

Ադրբեջանի Ժողովրդական ճակատի ղեկավար Էլչիբեյը յայտարարում էր, որ պէտք է Թուրքիայի հետ կազմել համադաշնութիւն, «...որտեղ 40 միլիոն ազերիները Անատոլիայի 70 միլիոն թուրքերի հետ կազմելու են 110 միլիոնանոց երկիր և այս միացումից յետոյ աշխարհին ասենք, որ այս տարածաշրջանում առանց այս վիթխարի երկրի հաւանութեան ոչ մի բան չի կարող կատարուել»¹⁰⁴:

Երկրորդ՝ 2012 թ. փետրուարի 9-ին Ադրբեջանի Հանրապետութեան Խորհրդարանի իշխող կուսակցութիւնից մի քանի պատգամաւորներ առաջարկել են, որ իրենց երկրի անունը

¹⁰³ احمد کاظمی، پان ترکیسم و پان آذربایسم، انتشارات موسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ابرار معاصر تهران، سال ۱۳۸۵، چاپ نخست، صفحه ۲۷۳، صفحه ۴۱

Տե՛ս նաև

کاوه بیات، جمهوری اسلامی و مسئله آذربایجان، مقاله، فصلنامه فرهنگی و اجتماعی گفتگو، شماره ۳۳، سال ۱۳۸۱، تهران، صفحات ۷۹-۹۲

¹⁰⁴ احمد کاظمی، پان ترکیسم و پان آذربایسم، انتشارات موسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ابرار معاصر تهران، سال ۱۳۸۵، چاپ نخست، صفحه ۲۷۳، صفحه ۴۴

Տե՛ս նաև

کاوه بیات، جمهوری اسلامی و مسئله آذربایجان، مقاله، فصلنامه فرهنگی و اجتماعی گفتگو، شماره ۳۳، سال ۱۳۸۱، تهران، صفحات ۷۹-۹۲

փոխուի և կոչուի Հիսիսային Ադրբեջան¹⁰⁵: Այս կապակցութեամբ ադրբեջանական «Թրենդ» լրատուական գործակալութիւնը հաղորդել է, որ Նոր Ադրբեջան իշխող կուսակցութեան պատգամաւոր Սիաուշ Նովրուզովն ասել է, որ ինչպէս Հիսիսային և Հարաւային Կորէաները, «այնպէս էլ Ադրբեջանը, նկատի ունենալով, որ մասնատուած պետութիւն է, լաւ կը լինէր, որ անուանակոչուէր Հիսիսային Ադրբեջան»¹⁰⁶:

Խորհրդարանի մէկ այլ պատգամաւոր՝ Ֆազայիլ Աղամալին էլ ասել է. «Այն դէպքում, երբ մի նոր հանրաքուէ անցկացուի, Սահմանադրութեան 11-րդ յօդուածին պէտք է աւելանայ այն կէտը, որ Ադրբեջանը բաղկացած է Հիսիսային, Հարաւային և Արևմտեան մասերից»¹⁰⁷:

Այս մօտեցումներն ըստ էութեան արտայատում են Ադրբեջանի Հանրապետութեան իշխող վերնախաւում առկայ մտայնութիւնը:

Բնականաբար հարց է առաջանում՝ եթէ կայ Հիսիսային Ադրբեջան, ապա որտե՞ղ է Հարաւային Ադրբեջանը, և ինչու՞ են նրանք իրարից անջատուել, կամ որտե՞ղ է Արևմտեան Ադրբեջանը, և այս մէկն ինչու՞ է անջատուել միաններից¹⁰⁸: Հարցը, իհարկէ, նոր չէ: Սակայն, ինչպէս նշուեց վերևում, վերջին երեք տասնամեակում և, մանաւանդ, վերջին մի քանի տարիների ընթացքում աշխարհում և տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձութիւնների հետևանքով դարձել է առաւել իրատապ:

¹⁰⁵ http://www.bbc.co.uk/persian/iran/2012/02/120209_123_iran_azarbayjan_change_name.shtml (18.09.2017):

¹⁰⁶ Նոյն տեղում:

¹⁰⁷ Նոյն տեղում:

¹⁰⁸ Տե՛ս նաև «Հարաւային Ադրբեջանի առասպելը», Սարգիս Մկրտչեան, Դրօշակ, Պաշտօնաթերթ ՀՅ Դաշնակցութեան, 35րդ (68րդ) տարի, թիւ 1 (1581), յունուար 2004 թ.:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Իրանի նկատմամբ տարածքային նկրտումները ոչ այլ ինչ են, քան պանթիուրքիզմի վաղեմի գաղափարի արծարծում: Ադրբեջանի ներկայիս Հանրապետությունը, շարունակելով 1918 թ. Մուսաալթաական կուսակցության ու Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, այնուհետև՝ խորհրդային պատմագրության ասանդոյթները, փորձում է պատմության նենգափոխմամբ ու պատմաշինարարությամբ զարգացնել այն գաղափարը, որ Ադրբեջանը եղել է մէկ երկիր, որը Գիլիստանի ու Թուրքմէնչայի դաշնագրերի արդիւնքում բաժանուել է Ռուսաստանի և Իրանի միջև:

Որ այդ տարածքները, մինչ նշեալ երկու պայմանագրերի կնքումը, եղել են Իրանի տիրապետության ներքոյ, պատմական ճշմարտութիւն է, սակայն, այն որ Արաքս գետից հիւսիս և հարաւ ընկած տարածքները պատկանել են մէկ միասնական երկրի՝ միասնական ժողովրդով, առանձին պատմությամբ ու մշակոյթով, բացարձակապէս չի համապատասխանում իրականութեանը, ինչն ապացուցում է անվիճարկելի փաստերով:

Իրանի՝ պատմականօրէն միասնական տարածքային ու պետական անտրոհելի միաւոր լինելու մասին պրոֆ. Գ. Ասատրեանը «Հայաստանը և անվտանգութեան խնդիրները Հարաւային Կովկասում» յօդուածում գրում է. «Իրանը հին երկիր է, որն ունի մօտ երեք հազար երկար տարիների անընդմէջ պետականութեան ասանդոյթ: Այն մի երկիր է, որը համարկում է ազգերի, որոնք միշտ եղել են պատմական Իրանի մի մասը և յստակօրէն ճանաչել են իրենց իրանական կապուածութիւնը (affiliation), որը վերաբերում է Իրանում ապրող բոլոր ազգերին, ներառելով նաև ոչ-իրանական ծագում ունեցողներին: Իր ներկայում առկայ սահմաններով՝ Իրանը ամբողջությամբ բնական կազմուածք է, նրա որևէ մասը երբէք արհեստականօրէն իր

տարածքին չի կցուել (ուժով): Ներկայում Իրանում ապրող որևէ ազգ կամ ցեղային խումբ երբեք իր ցեղային տարածքով չի կցուել նրան. բոլորը կա՛մ արմատականօրէն բնակուած են եղել իրանական տարածքում, կա՛մ տեղափոխուել են Իրան այլ վայրերից: Դա պատճառ է եղել, որ հակառակ ցեղային տարբերութիւնների և տարբեր խմբերում իրայատուկ ասանդոյթների գոյութեան, նրանք ընդունեն ընդհանուր Իրանական գաղափարի հայեցակարգը կամ մտայնութիւնը»¹⁰⁹:

Միաժամանակ նշենք, որ Իրանի մասնատման հարցը չի ամփոփում միայն թիրքախօս բնակչութեամբ շրջաններով: Վերոշարադրեալ պատճառներով անջատողական շարժումներ են նկատուում նաև Իրանի Խուզիստան, Բելուջիստան (պաշտօնապէս Սիստան ու Բելուջիստան) և Քրդստան նահանգներում:

Այդ շրջաններում գործող կազմակերպութիւններն էլ, ինչպէս պանթիքականը, կամ բացայայտ կերպով խօսում են Իրանից անջատուելու մասին, կամ արծարծում են Դաշնային Իրան ձևաորելու խնդիր, կամ լեզուամշակութային իրաւունքների հարցեր, որոնց վերջնանպատակն այլ է:

Որպէս օրինակ՝ նշենք Դաշնային Իրանի ազգութիւնների համագումար¹¹⁰ անունով կազմակերպութիւնը, որին անդամակցում է 13 կազմակերպութիւն¹¹¹.

1. Բելուջիստանի միասնական ճակատ - Իրան (Հանրապետականներ),

¹⁰⁹ Ասատրեան Գ., Հայաստանը և անվտանգութեան խնդիրները Հարաւային Կովկասում, The Quarterly Journal, Vol. 1, No. 3, September 2002:

¹¹⁰ <http://www.iran-federal.org/> (30.03.2017 թ.):

¹¹¹ <http://www.iran-federal.org/%da%a9%d9%86%da%af%d8%b1%d9%87-%d9%85%d9%84%db%8c%d8%aa%d9%87%d8%a7%d9%89-%d8%a7%db%8c%d8%b1%d8%a7%d9%86-%d9%81%d8%af%d8%b1%d8%a7%d9%84/> (30.03.2017 թ.):

2. Բելուջիստանի ժողովրդական ճակատ,
3. Ադրբեջանի դեմոկրատական դաշնային շարժում,
4. Թուրքմենական դեմոկրատական-ազգային շարժում,
5. Բախտիարի և Լուրեստանի (գրում է նաև Լոռեստան – Ս.Մ.) միասնության կուսակցություն,
6. Ահուազի դեմոկրատական համերաշխության կուսակցություն (Արաբստան),
7. Իրանի Քոդստանի դեմոկրատական կուսակցություն,
8. Իրանի Քոդստանի Քոմելէ կուսակցություն,
9. Բելուջիստանի ժողովրդի կուսակցություն,
10. Թուրքմեն ժողովրդի ազգային իրաւունքների պաշտպանության կազմակերպություն,
11. Քորմանջ ժողովրդական կուսակցություն (Խորասանի քրդեր),
12. Ադրբեջանի մշակութային և քաղաքական կենտրոն,
13. Թուրքմեն ժողովրդի մշակութային ու քաղաքական կենտրոն:

Ստորև կը ներկայացնեն այս կազմակերպությունների ծրագրերից և նրանց կայքէջերում տեղ գտած գրություններից հատուածներ՝ Իրանի տարբեր շրջաններում անջատողական տրամադրությունների մասին պատկերացում կազմելու համար:

Ահուազի դեմոկրատական համերաշխության կուսակցություն (Արաբստան): Կուսակցության ծրագրի նպատակներ բաժնի առաջին կէտն ասում է. «Կուսակցութիւնը պայքարում է Ահուազի արաբ ժողովրդի ինքնորոշման իրաւունքի համար՝ որպէս իր քաղաքական ապագայի ընտրութեան բնական իրաւունք, յատկապէս երբ Ահուազը ոչ կամաւոր կերպով

միացուեց Փահլիվիական Իրանին. որևէ մէկն այդ կապակցութեամբ մեր ժողովրդի տեսակէտը չհարցրեց»¹¹²:

Նոյն կազմակերպութեան կայքէջում 2015 թ. նոյեմբերի 2-ին Սամիր Եասերի ստորագրութեամբ տպագրուել է յօդուած՝ «Ահուազի արաբ ժողովրդի պայքարի պատմութեան հանրագումարի համառոտագրութիւն (Արաբստան-Ահուազ)» վերնագրով, որն սկսում է հետևեալ նախադասութեամբ. «Ժամանակ առ ժամանակ մեր բռնագրաւուած երկրի քաղաքական բեմը այս կամ այն քաղաքում կամ գիւղում ականատեսն է բողոքների»¹¹³: Նկատի ունենալով, որ յօդուածի սկզբում գրուած է, թէ կայքէջի խմբագրութիւնը վերապահումներ ունի յօդուածում արծարծուած մտքերի վերաբերեալ, ուրեմն պէտք է եզրակացնել, որ դա նաև կուսակցութեան մօտեցումն է: Ծագում են հարցեր՝ ո՞րն է բռնագրաւուած երկիրը, ո՞վ է բռնագրաւել, ի՞նչու և ի՞նչ նպատակով է օգտագործուում Ահուազի արաբ ժողովուրդ և Արաբստան-Ահուազ անուանումը, եթէ բռնագրաւուած է, ուրեմն պէտք է ազատագրուի, իսկ ինչպէ՞ս և այլն:

Իրանի Քրդստանի ժողովրդավար կուսակցութիւն:

Կուսակցութեան ծրագրում¹¹⁴, որը հաստատուել է կուսակցութեան 15-րդ համագումարում, «Ընդհանուր նպատակներ» բաժնում գրուած է. «1. ԻԲԺԿ-ն Իրանի Քրդստանի ժողովրդի ազգային-ժողովրդավարական պայքարի դրօշակակիր կուսակցութիւնն է, որը Իրանի միւս ազգութիւնների հետ միաբան և Իրանի յառաջադէմ ուժերի հետ ուս ուսի պայքարում է Իրանում դաշնային ժողովրդավարական համակարգի ստեղծման և Ի-

¹¹² http://www.alahwaz.info/fa/?page_id=1227 (10.11.17 թ.):

¹¹³ <http://www.alahwaz.info/fa/?p=10959> (10.11.2017 թ.):

¹¹⁴ Ծրագրում նշուած է, թէ երբ է տեղի ունեցել 15-րդ համագումարը, սակայն մեր տեղեկութիւններով, այն տեղի է ունեցել 2012 թ. հոկտեմբերին:

րանի Քրդստանում քուրդ ազգի ինքնորոշման իրաւունքի ձեռքբերման ուղղութեամբ»¹¹⁵:

Կուսակցութեան գլխաւոր քարտուղար Մոստաֆա Հեջրին 2016 թ. սեպտեմբերի 19-ին բրիտանական BBC լրատուամիջոցին տուած հարցազրոյցի ժամանակ յայտարարել է, որ «կուսակցութեան փիշմերգէները (առաջամարտիկներ – Ս.Ս.) Իրանի Քրդստանում զինեալ պայքարի մէջ են մտել Իրանի իշխանութիւնների դէմ»¹¹⁶: Հեջրին յայտարարել է նաև, որ իր կուսակցութիւնը Քրդստանում պայքարի «նոր փուլ» է սկսում, որի նպատակն է «կուսակցութեան զինեալ առաջամարտիկների ներկայութիւնը Քրդստանի ժողովրդի մէջ՝ նրանց քաղաքական գիտակցութիւն և յոյս տալու և խրախուսելու համար, որպէսզի պայքարեն յանուն իրենց ազգային իրաւունքների ձեռքբերման»¹¹⁷:

Բելուջիստանի միասնական ճակատ – Իրան (Հանրապետականներ): Կուսակցութեան ծրագրի առաջին երկու կէտերն են.

«1. Զանք թափել Բելուջիստանի և Բելուջ ժողովրդի ազգային իրաւունքների իրականացման ուղղութեամբ՝ ազատ ու ժողովրդավարական Իրանում»:

«2. Պաշտպանել Իրանում ապակենտրոն և ժողովրդավարական քաղաքական մի համակարգ, որտեղ Իրանի ամէն մի ազգութեան ազգային ինքնիշխանութիւնը կերաշխատորուի

¹¹⁵ <http://www.kurdistanmedia.com/> (10.11.2017 թ.):

¹¹⁶ <https://www.youtube.com/watch?v=U3lyIbJ7SM0&feature=youtu.be&list=PLmdEvtplre6OZJPnPHUv1MAdCbYpqcNZv> (18.10.2016 թ.):

¹¹⁷ Նոյն տեղում:

ապակենտրոն դաշնային հանրապետական համակարգի ստեղծումով»¹¹⁸:

Նոյն կազմակերպության կայքէջում 2008 թ. յուլիսին Փայամ Օմիդ ստորագրությամբ հրատարակուել է յօդուած՝ «Ինչու՞ է ֆեդերալիզմը դարձել Իրանի ազգային փոքրամասնութիւնների գլխաւոր երկխօսութեան թեման»¹¹⁹ վերնագրով, որտեղ յօդուածագիրը բացատրում է, որ ֆեդերալիզմի ընտրութիւնը Խորհրդային Միութեան օրինակով է, որտեղ գոյութիւն ունէին խորհրդային հանրապետութիւններ, որոնք մաս էին կազմում դաշնային մի համակարգի, որից, ըստ ԽՍՀՄ Սահմանադրութեան, կարող էին դուրս գալ և անկախութիւն յայտարարել: Այդ օրինակը հիմք է ընդունուել, ուստի վերջին տարիներին երկխօսութեան գլխաւոր թեման ֆեդերալիզմն է:

Այս կազմակերպութիւնները ներկայացնում են Իրանի երեք տարբեր շրջանները. առաջինը՝ Իրանի հարաւարևմտեան Խուզիստան նահանգը, երկրորդը՝ Իրանի արևմտեան Քրդստան նահանգը, երրորդը՝ Իրանի հարաւարևելեան Սիստան ու Բելուջիստան նահանգը:

Վերոշարադրեալը նկատի ունենալով՝ հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ անջատողական միտումներն Իրանում լուրջ ուսումնասիրութեան նիւթ են: Որևէ տարածքում դրանցից մէկի յաջողութիւնը ազդելու է նաև միւսների վրայ, որն Իրանը տանելու է մասնատման և, կրկնենք, լուրջ վտանգ է ներկայացնելու Հայաստանի ազգային անվտանգութեան համար:

Մեր նպատակն է ուսումնասիրել Իրանում պանթիքական հոսանքների ու կազմակերպութիւնների ծրագրերը՝ ճշտե-

¹¹⁸ <http://www.balochunitedfront.org/> (10.11.2017 թ.)

¹¹⁹ http://www.balochunitedfront.org/articles/Farsi/why_fed.htm (10.11.2017 թ.)

լու համար նրանց գաղափարական ակունքները, պայքարի հիմնատրուումներն ու պահանջները, կանոնագրերը, գործունէութիւնը և ցոյց տալ դրանց զարգացման միտումները:

**ՊԱՆԹԻԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ
(գործիչները, հրատարակութիւնները, ծրագրերը,
կանոնագրերը, գործունէութիւնը)**

Դժուար է ասել, թէ ներկայում քանի պանթիրքական կազմակերպութիւն գոյութիւն ունի, որոնք իրենց աշխատանքները կենտրոնացրել են Իրանի վրայ, դժուար է, որովհետև նրանցից որոշներն ունեն կայքէջ, գրասենեակ, յայտնի են դեկավար(ներ)ի անունները և այլն, որը որոշակի տեղեկութիւն է փոխանցում այդ կազմակերպութիւնների մասին, իսկ որոշների մասին մերթ ընդ մերթ այս կամ այն լրատուամիջոցով մի լուր է տպագրում, կամ կազմակերպութիւնը մի ինչ-որ հարցի վերաբերեալ հանդէս է գալիս յայտարարութեամբ և այդքանը: Ամբողջական չեն տեղեկութիւններն այդ կազմակերպութիւնների մասին, ուստի պարզ չէ, առհասարակ այս կամ այն կազմակերպութիւնը գոյութիւն ունի՞, թէ՞ ոչ, և պարզապէս մէկը կամ ինչ-որ մի շրջանակ քարոզչական նպատակով այդ անունով է հանդէս եկել, իսկ եթէ գոյութիւն ունի՞ ի՞նչ է ծրագիրը, նպատակը և այլն:

Ստորև ներկայացւում են այդ կազմակերպութիւններից մի քանիսի անունները.

1. Հարաւային Ադրբեջանի անկախութիւն կուսակցութիւն (GAIP)¹²⁰,

¹²⁰ <http://www.gaip.org/> (17.03.2017 թ.):

2. Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժում (GAMOH)¹²¹,
3. Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժում (YeniGAMOH)¹²²,
4. Հարաւային Ադրբեջանի դեմոկրատական կուսակցութիւն (GADP)¹²³
5. Հարաւային Ադրբեջանի ազգային-ազատագրական ճակատ (GAMAC)¹²⁴,
6. Ադրբեջանի ուսանողական շարժում (AZOH)¹²⁵
7. Ադրբեջանի դեմոկրատական-դաշնային շարժում (FDMA)¹²⁶
8. Հարաւային Ադրբեջանի դեմոկրատական ազգային միաւորում¹²⁷
9. Ադրբեջանի ազգային դիմադրական կազմակերպութիւն (AMDT)¹²⁸
10. Աշխարհի ադրբեջանցիների համագումար (DAK)¹²⁹
11. Յանուն ազգային ինքնորոշման՝ ազգային ճնշման ենթակայ ազգերի միասնական ճակատ (FNFSĐ)¹³⁰
12. Իրանում ադրբեջանցիների մարդկային իրաւունքների պաշտպանութեան ընկերակցութիւն (AHRAZ)¹³¹

¹²¹ <http://gamoh.org/> (21.03.2017 թ.):

¹²² <http://www.yenigamoh.com/> (28.03.2017 թ.):

¹²³ <http://www.gadp.org/fa/> (30.03.2017 թ.):

¹²⁴ <http://www.gamac.info/> (30.03.2017 թ.):

¹²⁵ <http://www.azoh.net/> (30.03.2017 թ.) Ուշագրաւ է, որ կազմակերպութեան պարսկերէն և թուրքերէն անունը Ադրբեջանի ուսանողական շարժում է, մինչդեռ անգլերէնով գրոււմ է Հարաւային Ադրբեջանի ուսանողական շարժում Southern Azerbaijan Student Movement:

¹²⁶ <http://www.achiq.org/> (30.03.2017 թ.):

¹²⁷ <http://oyrenci-sesi.info/site/xeber/8775> (30.03.2017 թ.):

¹²⁸ <http://diranish.org/> (03.04.2017 թ.):

¹²⁹ <https://d-a-k.org/> (03.04.2017 թ.):

¹³⁰ <http://www.fnfsd.com/> (31.03.2017 թ.):

13. Հարալային Ադրբեջանի փրկության կուսակցություն (AGP)¹³²

14. Ազգային ուղի կազմակերպություն¹³³

15. Հարալային Ադրբեջանի լիբերալ-դեմոկրատական կուսակցություն (GALDP)¹³⁴ և այլն:

Ուսումնասիրությունները ցոյց են տալիս, որ վերոյիշեալ կազմակերպությունների եթէ ոչ բոլորը, առնուազն զգալի մասը, չունի կազմակերպական լայն ցանց ու կառոյց, հիմնականում բաղկացած է սակաւաթիւ անդամներից: Այս եզրակացութեանը կարելի է յանգել՝ հետևելով նրանց գործունէութեանը: Ուստի, ըստ իս, այդ կազմակերպությունների հիմնադիրները գլխաւորապէս զբաղուած են քարոզչութեամբ և իրենց հետագայ գործունէութեան համար ենթահող պատրաստելով:

Ստորև, որպէս օրինակ, ներկայացնում եմ յիշեալ կազմակերպություններից երեքի մասին մանրամասն տեղեկութիւններ: Ընտրել եմ այդ երեքը, որովհետև միւսների համեմատ դրանք ակտիւ գործունէայ են կամ, առնուազն, իրենց քարոզչութիւնը դա է ցոյց տալիս:

¹³¹ <http://www.ahraz.org/> (12.04.2017 թ.):

¹³² <https://faryadjenob.wordpress.com/2012/12/13/%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%D8%AC%D9%86%D9%88%D8%A8%DB%8C-%D8%A8%D8%B1%D8%A7%DB%8C-%D8%B1%D9%81%D8%B1%D8%A7%D9%86%D8%AF%D9%88%D9%85-%D8%A7%D8%B3%D8%AA%D9%82%D9%84%D8%A7/> (15.12.2017 թ.):

¹³³ Նոյն տեղում:

¹³⁴ Նոյն տեղում:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ (ՀԱԱԿ)

Կուսակցութեան պաշտօնական կայքի հասցէն է www.gaip.org: Կայքը եռալեզու է՝ թուրքերէն, անգլերէն և պարսկերէն: Առկայ է նաև մէկ այլ կայք՝ www.gaip.biz, որը կուսակցութեան լրատուական կայքն է, թէև առաջին կայքը ևս ունի լրատուական բաժին, որը այցելուին ուղղորդում է դէպի երկրորդ կայքը:

Այս, ինչպէս նաև պանթիւրքական այլ կազմակերպութիւնների կայքերին բնորոշ է մի ընդհանրութիւն. գրեթէ բոլորն էլ ձևաւորման (Design), նիւթերի և, մանաւանդ, պարսկերէն լեզուի առումով բաւականին անփոյթ վիճակում են:

Բերենք մէկ օրինակ:

ՀԱԱԿ-ի Կանոնագրի «Ժամանակաւոր իշխանութիւն» բաժնի 2-րդ կէտում խօսւում է Ադրբեջանի Անկախ Հանրապետութեան մասին, մինչդեռ դա պէտք է լինի **Հարաւային** Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւն: Կայքը լեցուն է նմանատիպ բովանդակային և լեզուական վրիպումներով: Ստորև ներկայացուող թարգմանութեան մէջ փորձել եմ հաւատարիմ մնալ բնագրին:

Կայքում տեղադրուած Կուսակցութեան Կանոնագիրը¹³⁵ բաղկացած է հետևեալ բաժիններից.

- Նախաբան
- Անկախութեան անհրաժեշտութիւն
- Սահմանում
- Նպատակներ
- Ժամանակաւոր իշխանութիւն

¹³⁵[http://gaip.biz/index.php/81-x-b-rl-r/83-2013-05-26-15-26-01\(17.03.2017 թ.\):](http://gaip.biz/index.php/81-x-b-rl-r/83-2013-05-26-15-26-01(17.03.2017 թ.):)

- Այն ադրբեջանցիների մասին, որոնք ապրում են Ադրբեջանից դուրս
- Անդամակցության պայմաններ
- Անդամների իրաունքներ
- Անդամների պարտականություններ
- Կարգապահություն
- Համագումար

Կանոնագրի վերջում ստորագրուած է՝ «Հարաւային Ադրբեջանի Անկախութիւն կուսակցութեան Կենտրոնական խորհուրդ, 05 դեկտեմբեր, 2004 թ.»: Որևէ տեղ նշուած չէ, թէ կուսակցութիւնը երբ է հիմնադրուել: Նկատի ունենալով ստորագրութեան և կուսակցութեան զինանշանի վրայ առկայ թուականները՝ կարելի է եզրակացնել, որ այն հիմնադրուել է 2004 թ.:

Կուսակցութեան կայքի վերին մասում՝ զինանշանի կողքին, առանձին տեղադրուած է գորշ գայլի գլխի նկար:

Կուսակցութիւնն ունի զինանշան և դրօշ: Դրօշը Ադրբեջանի Հանրապետութեանն է, որի աջ կողմում կայ սպիտակ ալիքաձև երիզ. այն խորհրդանշում է իրարից անջատուած երկու, այսպէս կոչուած, Ադրբեջանները:

Կուսակցութեան խօսնակը Սալեհ Իլդիրիմն է:

Ստորև՝ կուսակցութեան կանոնագրից ծաւալուն հատուածներ, որոնք արտայատում են կուսակցութեան աշխարհայեացքը, էութիւնն ու նպատակները և պատկերացում տալիս կազմակերպութեանն անդամակցելու ու անկախութիւնից յետոյ իշխանութեան ձևաւորման մասին:

Հարուածներ Կանոնագրի «Նախաբան»-ից: «Երկիրը, որն այժմ Իրան է կոչուում, հին ժամանակներից թուրքերի բնակութեան և քաղաքակրթութեան վայրն է եղել: Արիախօսների՝ այս բարձրաւանդակ գալուց առաջ շումերները, էլամցիները,

կուտիները, ուրարտացիներն ու այլք են այստեղ բնակուել, որոնք այստեղի իրական տէրերն են: Թէև Ադրբեջանի թուրքերի մի մասը վերջին հազարամեակում է գաղթել այս վայրեր, սակայն Ադրբեջանի թուրքերի մեծ և հիմնական մասը Շումերի թուրքերի բնական ժառանգներն են, որոնք հազարամեակներ ապրել են այս վայրերում:

Թէև պարսիկները թուրքերից մի քանի հազար տարի յետոյ են գաղթել այս վայրեր (էլամի ժամանակաշրջանում), սակայն պարսիկ շովինիստները, պատմութիւնը խեղաթիւրելով և կեղծ յաակնութիւններով, իրենց հոչակել են այս տարածքների տէրը և այս տարածքների իրական տէրերին կոչում են գաղթական և գաւթիչ:

Պարսիկ շովինիստներն իրենց յաակնութիւնների շարունակութեան մէջ երբեմն ասում են, որ Չինգիզ խանն է Ադրբեջանի լեզուն փոխել, և երբեմն էլ քարոզում են, որ Ադրբեջանում Շահ Իսմայիլ Սաֆաւին է թուրքերէնը տարածել, և երբեմն էլ գրում են, որ Օսմանեան կայսրութիւնը Թաւրիզի՝ երկու շաբաթով գրաման ժամանակ Ադրբեջանի լեզուն փոխել և թուրքերէն է դարձրել:

Այդ ժամանակաշրջանից (Փահլևիների ժամանակաշրջան – Ս.Մ.) ոչ պարսիկ ազգերը բացայայտ կերպով արհամարհում են: Քանի որ թուրքերը մեծամասնութիւն են կազմում, աւելի շատ են յարձակման ենթարկում: Թուրքերէն լեզուն դպրոցներում, հաստատութիւններում, բանակում, դատարաններում և պետական ու պաշտօնական բոլոր ժողովներում արգելուած է, քաղաքների և պատմական վայրերի անունները փոխում են, թուրքերէն անունները, թուրքերէն գրքերը և այլն արգելուած են, և ծովման խիստ քաղաքականութիւն է կիրառուել ու կիրառում: Զուլման քաղաքականութիւնը Իրանի

հողային ամբողջականության անուան տակ ոչ պարսիկ ազգերին սրի, չարչարանքի, թնդանօթի ու տանկի միջոցով գերի է դարձրել: Այս գերութիւնից ազատուելու միակ ճանապարհն այդ ազգերի ամբողջական անկախութիւնն է: Այս անհրաժեշտութիւնից ելնելով է, որ Հարաւային Ադրբեջանի անկախութիւն կուսակցութիւնը պայքարում է ամբողջական անկախութեան և Հարաւային Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետութեան հաստատման համար»:

Հարուածներ «Անկախութեան անհրաժեշտութիւն»

բաժնից: «Պատմութիւնը առաջ է գնում: Անկախութեան գաղափարը երկար ժամանակներից ի վեր Ադրբեջանի թուրքերի մէջ թէ՛ պետական, թէ՛ կազմակերպական և թէ՛ անհատական ձևերով նշմարում է: 200 տարի առաջ Ադրբեջանի անկախ դաշնութիւնը Մոհամմադ Ղոլի Խան է Աֆշարի 17-ամեայ ղեկավարութեան շրջանում առաջին անգամ կարգապահ բանակ ստեղծեց, Ֆաթիալի Շահի կողմից պարտուեց և դարձաւ Ղաջար կայսրութեան ենթական:

Սահմանադրական յեղափոխութեան ժամանակաշրջանում «Թաւրիզի ընկերակցութիւնը», Թեհրանին մի հեռագիր ուղարկելով, շեշտեց, որ եթէ Սահմանադրութեան սկզբունքները չընդունուեն, Ադրբեջանը անջատուելու է:

Ազատիստանի կառավարութեան ժամանակ, որը հիմնադրեց Շէյխ Մոհամմադ Խիաբանին, «Եաշասին Էսթեղլալիմիզ»-ը («Կեցցէ՛ մեր անկախութիւնը») ժողովրդի բոլոր խաւերի կարգախօսն էր:

Մեր նահատակ առաջնորդ Սէյէդ Ջաֆար Փիշևարին՝ Ադրբեջանի Ազգային իշխանութեան հիմնադիրը, 1324-1325 թթ. (1945-1946) ասում է. «Մենք սկզբում պահանջում էինք նա-

հանգային խորհուրդների ստեղծում, բայց երբ Թեհրանը մերժեց, մէկ քայլ առաջ գնացինք և կեանքի կոչեցինք Ադրբեջանի ազգային խորհրդարանը»: Նահատակ Փիշևարին իր «Երկընտրանքի առջև» յօդուածում նաև ասում է. «Եթէ Թեհրանի յետադիմութիւնը չընդունի մեր պահանջները, մենք առանց Թեհրանի շարունակելու ենք մեր ճանապարհը»: Սրանք վկայում են Ադրբեջանի անկախութեան գաղափարի մասին պատմական տարբեր ժամանակաշրջաններում:

Թէև Իրանի Իսլամական Հանրապետութեան Սահմանադրութեան մէջ յեղափոխութեան ազդեցութեամբ որոշ կէտեր, ինչպէս ազգային ազատութիւնները, անհատական ազատութիւնների գաղափարը, ազատութիւնը և նման այլ հասկացութիւններ վաւերացուեցին, սակայն մինչ այսօր կեանքի չեն կոչուել և երբէք էլ կեանքի չեն կոչուելու, որովհետև Իրանի տոտալիտար ռեժիմի բովանդակութեան մէջ ժողովրդավարութեան ներուժի համար տեղ չկայ: Իրանի անունն ու աշխարհագրութիւնը ենթակայ ազգերին պարտադրուել է ճնշման, սրի, դաշոյնի, թնդանօթի, տանկի, չարչարանքի ու նուաստացման միջոցով և (Իրանը – Ս.Մ.) ազգերի բանտի է վերածուել:

Վերոյիշեալ պատճառներով, ազգային ու մարդկային իրաւունքների ձեռքբերման համար Իրանի ճնշուած ազգերի միակ ճանապարհը այդ ազգերի անկախութիւնն է»:

Հարուածներ «Սահմանում» բաժնից¹³⁶:

«1. Հարաւային Ադրբեջանի անկախութիւն կոասկցութիւնը կախուած չէ որևէ կառավարութիւնից, երկրից և ուժից:

¹³⁶ Նշենք, որ այս բաժինը բաղկացած է 22 կէտից, որոնցից մէջբերում եմ մի քանիսը:

4. (Կազմակերպութեան – Ս.Մ.) գործունէութիւնը չի սահմանափակուում միայն Հարաւային Ադրբեջանով, այլ աշխարհի բոլոր կէտերում աշխատում է Ադրբեջանի շահերի պաշտպանութեան համար:

6. Անկախատենչութիւնը և ազգային հայրենիքի համար անկախութիւն պահանջելը ամէն մարդու մարդկային, քաղաքացիական և ժողովրդավարական իրաւունքն է: Այնպէս որ՝ լիբերալ լինելը, ֆեմինիստ լինելը, մուսուլման լինելը, կոմունիստ լինելը և այլն, մարդկանց ժողովրդավարական իրաւունքն է, անկախատենչ լինելն էլ ամէն մի մարդու մարդկային իրաւունքն է: Այս իրաւունքը, ժողովրդավարական լայն սկզբունքների հիման վրայ, որպէս «արտայայտուելու ազատութիւն» և «ինքնորոշման իրաւունք», ընկալելի է:

7. ՀԱԱԿ-ը ժողովրդի կամքը ճանաչում է որպէս բարձրագոյն սկզբնաղբիւր:

9. ՀԱԱԿ-ը ժամանակին, տեղին և պայմաններին համապատասխան, աշխատում է բացայայտ կամ գաղտնի:

10. ՀԱԱԿ-ի պայքարի ձևը, ժամանակն ու անհրաժեշտութիւնները նկատի ունենալով, ժողովրդավարական, դիւանագիտական և կամ յեղափոխական է:

14. ՀԱԱԿ-ը դատապարտում է հայ բռնազավթիչներին, որոնք գրաւել են Ադրբեջանի հողը (Ղարաբաղ) և Ադրբեջանի հողի պաշտպանութիւնը իր պարտականութիւնն է համարում:

15. ՀԱԱԿ-ը, նկատի ունենալով երկու քաղաքական պայմաններում մէկ ազգի իրականութիւնը, Հիւսիսային Ադրբեջանի Հանրապետութիւնը համարում է իր մշտական դաշնակիցը և պաշտպանում է նրա պետութիւնը:

16. ՀԱԱԿ-ի տեսակէտից Ադրբեջանի միացման գործընթացը ժամանակի հարց է և ազգի կամքից է կախուած:

22. Պարսկական շովինիզմը չի վերաբերում պարսիկ ազգին, այլ այն քաղաքականությունն է, որը Իրանի կենտրոնական կառավարության համակարգը դրել է ֆարսիզմի հիմքի վրայ (Իրան = Պարսիկ) և ճնշում է ոչ պարսիկ ազգերի ինքնությունը, անկախությունը և մերժում է նրանց ազգային գոյությունը, արգելում է նրանց լեզուն և խեղաթիւրում պատմությունը, պարտադրում է պարսկերէն լեզուի գերակայությունը և վարում ճուճման քաղաքականություն: Այն անձերի և ուժերի դէպքում, որոնք ղեկավարում են այս պետական համակարգը և գործադրում նման քաղաքականություն, եթէ նոյնիսկ պարսիկ էլ չլինեն, խնդիրը չի փոխուի, որովհետև էութամբ պարսկական շովինիզմի ծառաներն ու գործակալներն են: Հետևաբար ՀԱԱԿ-ը, յարգելով պարսիկ ազգին, կտրականապէս պայքարում է պարսկական շովինիզմի և նրա գործակալների դէմ»:

Հարուածներ «Նպատակներ» բաժնից¹³⁷:

«1. ՀԱԱԿ-ը պայքարում է՝ հիմնելու համար Հարաւային Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւն՝ Ադրբեջանի պատմաաշխարհագրական սահմաններում, և ստանձնում է անցումային շրջանի պատասխանատուութիւնը՝ ժամանակաւոր իշխանութեան միջոցով, իսկ հետագայում իշխանութիւնը փոխանցելու է նոր կառավարութեանը:

2. Ադրբեջանի տարածքներ ասելով՝ նկատի ունենք Արդեբիլը, Արևելեան Ադրբեջանը, Արևմտեան Ադրբեջանը, Ջանջանը (Ջանգան), Ղազուիներ, Համադանը, Կենտրոնականը, Ղառուէրը, Բիջառը, Սաղեզը, Անգալին և Աստարան:

¹³⁷ «Նպատակներ» բաժինը բաղկացած է 21 կէտից:

3. ՀԱԱԿ-ը իր հարևանների հետ սահմանների ճշգրտման համար կողմ է հարցի գիտական, ժողովրդավարական լուծմանը:

5. Հարաւային Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւնում քաղաքացիները, առանց նկատի ունենալու նրանց սեռը, լեզուն, կրօնը, մտայնութիւնը և դիրքը, համահաւասար իրաւունքներ ունեն:

6. Հարաւային Ադրբեջանի Անկախ Հանրապետութեան պաշտօնական լեզուն Ադրբեջանի թուրքերէնն է, որը պատմական բազմաթիւ փաստաթղթերում յայտնի է դարձել ադրբեջաներէն լեզու, ազերիական թուրքերէն և կամ ազերի անուանումներով:

7. Ազգային փոքրամասնութիւնները, որոնք բնակւում են Հարաւային Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւնում, ադրբեջանական թուրքերէնից բացի՝ իրաւունք ունեն կրթուելու նաև իրենց մայրենի լեզուով, և այդ փոքրամասնութիւնների թուաքանակի հիման վրայ նկատի է առնուելու բիւջէ՝ նրանց ազգային մշակոյթի զարգացման համար:

17. Հարաւային Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւնում մահապատիժը և չարչարանքը կտրականապէս արգելուելու են:

18. Պաշտպանուելու է գաղափարի ազատութիւնը, մտքի ազատութիւնը՝ իր բոլոր իմաստներով, և քաղաքական բանտարկութիւնը բեկանուելու է ընդմիշտ:

20. Իշխանութիւնը և ենթակայ հաստատութիւնները ժողովրդավարական ընտրութիւնների միջոցով են ճշտուելու:

21. ՀԱԱԿ-ի տեսակէտից Հարաւային Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւնը աշխարհիկ հանրապետութիւն է»:

Հարուածներ «Ժամանակաւոր» իշխանութիւն բաժնից¹³⁸: «1. ՀԱԱԿ-ը, Իրանի կենտրոնական ռեժիմին պարտութեան մատնելով, պէտք է ձեւաւորի ժամանակաւոր իշխանութիւն:

2. Ժամանակաւոր իշխանութիւնը պէտք է հիմնի ազգային բանակ:

3. Ժամանակաւոր իշխանութիւնը պարտաւոր է առաւելագոյնը 3 ամսուայ ընթացքում «Բանիմացների խորհրդարանի» միջոցով Սահմանադրութիւն պատրաստել և վաւերացնելու համար հանրաքուէի դնել:

4. Սահմանադրութեան վաւերացումից երեք ամիս յետոյ հանրաքուէի միջոցով պէտք է տեղի ունենան խորհրդարանական ու նախագահական ընտրութիւնները՝ ժողովրդի բոլոր խւերի մասնակցութեամբ և ժողովրդավարական պայմաններում:

5. Երբ նախագահը և խորհրդարանը կեանքի կոչեն կառավարութեան կազմը, ՀԱԱԿ-ը պէտք է փոխանցի իշխանութիւնը»:

Հարուածներ «Այն ադրբեջանցիների մասին, ովքեր ապրում են Ադրբեջանից դուրս» բաժնից¹³⁹:

«1. Թեհրանում և արուարձաններում պէտք է ստեղծուի երկկեզու (պարսկերէն և թուրքերէն) հանրապետութիւն:

2. Ադրբեջանից դուրս ապրող Ադրբեջանի թուրքերի իրաւունքների պաշտպանութեան հիման վրայ (այսօրուայ Իրանի միւս շրջանները) Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւնը ճշտելու է իր դիւանագիտական և տնտեսական յարաբերութիւնները միւս կառավարութիւնների հետ:

¹³⁸ Այս բաժինը բաղկացած է 5 կէտից:

¹³⁹ Այս բաժինը բաղկացած է 4 կէտից:

3. ՀԱԱԿ-ը պահանջում է Ղաշղայի թուրքերի ինքնավար իշխանության կազմաւորումը:

4. ՀԱԱԿ-ը կողմնակից է Թուրքմէնստանի Հանրապետության կազմաւորմանը»:

Հատուածներ «Անդամակցութեան պայմաններ» բաժնից¹⁴⁰:

«1. Այն անձինք, ովքեր ընդունում են ՀԱԱԿ-ի կանոնագիրը, անդամակցութեան համար կարող են իրենց դիմումը գրաւոր ուղարկել կուսակցութեանը:

3. Անդամակցութիւնը ընդունուում կամ մերժուում է քննիչ կոմիտէի որոշումով:

4. ՀԱԱԿ-ը միայն Հարաւային Ադրբեջանից է անդամ ընդունում:

4.ա. Այն հարաւային ադրբեջանցիները, որոնք ապրում են Հարաւային Ադրբեջանի հողից դուրս, անկախ իրենց բնակութեան վայրից՝ կարող են անդամակցել ՀԱԱԿ-ին:

4.բ. Այն ադրբեջանցիները, որոնք Հարաւային Ադրբեջանից չեն, կարող են կուսակցութեան պատուոյ անդամներ լինել»:

Դիտարկումներ

ՀԱԱԿ-ի Կանոնագիրը պարզում է կուսակցութեան նպատակներն ու մօտեցումները: Այդուհանդերձ ցանկանում եմ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել հետևեալ կէտերի վրայ.

¹⁴⁰ Այս բաժինը բաղկացած է 4 կէտից և 6 ենթակէտից:

1. Կուսակցութիւնը պայքարում է, այսպէս կոչուած, Հարաւային Ադրբեջանի անկախութեան համար, որը ժամանակաւոր երկույթ է, իսկ վերջնական նպատակն է միացումը, այսպէս կոչուած, Հիւսիսային Ադրբեջանին, որը ներկայիս Ադրբեջանի Հանրապետութիւնն է: Ուրեմն՝ կուսակցութեան նպատակը Իրանից տարածքներ անջատելն է:

2. Այդ նպատակին հասնելու համար որդեգրում են պայքարի ժողովրդավարական, դիւանագիտական և յեղափոխական ձևերը: Այսինքն՝ կուսակցութեան համար զինեալ պայքարը ընդունելի ձև է:

3. Որպէս պատմական հիմնաւորում՝ բերում է հետևեալ փաստը. «Երկիրը, որն այժմ Իրան է կոչւում, հին ժամանակներից թուրքերի բնակութեան և քաղաքակրթութեան վայրն է եղել»: Իսկ հին ժամանակներ ասելով՝ նկատի ունեն այն ժամանակները, երբ «Արիախօսների՝ այս բարձրաւանդակ գալուց առաջ շումերները, էլամցիները, կուտիները, ուրարտացիներն ու այլք են այստեղ բնակուել, որոնք այստեղի իրական տէրերն են: Թէև Ադրբեջանի թուրքերի մի մասը վերջին հազարամեակում է գաղթել այս վայրեր, սակայն Ադրբեջանի թուրքերի մեծ և հիմնական մասը Շումերի թուրքերի բնական ժառանգորդներն են, որոնք հազարամեակներ ապրել են այս վայրերում»: Մի խօսքով՝ «պարզում է», որ թուրքերը այս վայրերում բնիկներ են:

4. Կուսակցութիւնը դատապարտում է հայերին, որոնք գրաւել են Ղարաբաղը: Ղարաբաղը համարում է Ադրբեջանի մաս և Ադրբեջանի հողի պաշտպանութիւնը իր պարտականութիւնն է համարում:

5. Աշխատում է ամբողջ աշխարհում Ադրբեջանի շահերի պաշտպանութեան համար:

6. Մի քանի տեղ խօսում է Իրանում ապրող «ազգերի» մասին: Չկայ բացատրություն այն մասին, թե ի՞նչ է նշանակում ազգ: Հարց է առաջանում՝ ի՞նչ է ազգը, և քանի՞ ազգեր են ապրում Իրանում:

7. Ամրագրում է, որ «Այն անձերի և ուժերի դէպքում, որոնք ղեկավարում են այս պետական համակարգը և գործադրում նման քաղաքականություն, եթէ նոյնիսկ պարսիկ էլ չլինեն, խնդիրը չի փոխուի, որովհետև էութեամբ պարսկական շովինիզմի ծառաներն ու գործակալներն են»: Սա նշանակում է, որ Իրանում ապրող բազմամիլիոն մարդիկ «պարսկական շովինիզմի» ծառաներն են՝ սկսած Միր Հոսէյն Մուսաւիից (Իրանի Իսլամական Հանրապետութեան 8 տարուայ վարչապետ, 2009 թ. ընդդիմութեան ղեկավարներից, ծնուել է Իրանի Ատրպատականում, թիրքախօս է) մինչև Խաղաղութեան Նորելեան մրցանակի դափնեկիր, Իրանի այսօրուայ թէ՛ իշխանութեանը և թէ՛ ընդդիմութեանը ընդդիմադիր, թիրքախօս Շիրին Էբադին և Իրանի ֆուտբոլի ազգային հաւաքականի նախկին աւագ, ծնունդով Արդեբիլից թիրքախօս Ալի Դային և միլիոնաւոր այլ մարդիկ, ընդ որում՝ մտաւորականներ, գիտնականներ, գրողներ, արուեստագէտներ, մարզիկներ, գործարարներ:

8. «Նպատակներ» բաժնի 5-րդ կէտում խօսում է բոլոր քաղաքացիների համահաւասար իրաւունքների, 8-րդ կէտում՝ ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների մասին, ովքեր «իրաւունք ունեն կրթուելու նաև իրենց մայրենի լեզուով, և այդ փոքրամասնութիւնների թուաքանակի հիման վրայ նկատի է առնուելու բիւջէ՝ նրանց ազգային մշակոյթի զարգացման համար»: Կարծում եմ՝ Բաքուի և Սումգայիթի ջարդերը և Ռամիլ Սաֆարովի դէպքը բաւական են՝ պատկերացում կազմելու համար, թէ վերոշարադրուածը ինչքանով է իրականանալի:

9. Կոասկցութիւնը պահանջում է Ղաշղայի թուրքերի ինքնավար իշխանութեան ձևաւորումը և կողմնակից է Թուրքմէնստանի Հանրապետութեան ստեղծմանը:

Սա ոչ այլ ինչ է, քան պանթուրանիզմի իրականացման առաջին հանգրուանը: Զարևանդն իր վերոնշեալ աշխատութեան մէջ գրում է. «Զիա Կէօք Ալի թուրք քաղաքականութեան համար կը գծէ զոյգ իտէալ, առաջինը՝ *մօտաւոր-օղուզականութիւնը*. երկրորդը՝ *հեռաւոր-թուրանականութիւնը*: Աւելի ճիշտ ան կը քարոզէ իտէալներու երրորդութիւն մը, որուն պէտք է հասնին աստիճանաբար. 1. Թուրքճիութիւն, 2. Օղուզճիութիւն, 3. Թուրանճիութիւն, երրորդը ըլլալով վերջին կայանը, գերագոյն նպատակը»¹⁴¹, – և շարունակում. «Իսկ Օղուզի զաւակները՝ թուրք և թուրքմէն, պէտք է ապրին իբրև մէկ ազգ և պէտք է կոչուին *թուրք*», և «Ոչ միայն կուլտուրական, այլև աշխարհագրական պայմաններու բերումով, կը տրամաբանէ թուրք գաղափարախօսը, ամենէն ամէլի դիրքին է միացնել թուրքերն ու թուրքմէնները: Ուրեմն, մեր յաջորդ քայլը պէտք է ըլլայ օղուզականութիւնը, այսինքն թուրքմէններու միացումը: Թուրքիա, Ատրպէյճան, Պարսկական Ատրպատական և Խուվարիզմ պէտք է կազմեն վաղուան Օղուզիստան»¹⁴²: ՀԱԱԿ-ը փաստօրէն գնում է այդ ուղղութեամբ:

Կանոնագրի կապակցութեամբ այսքանը բաւարար համարելով՝ ամէլացնենք, որ որևէ տեղ նշուած չէ, թէ կոասկցութիւնը քանի՞ անդամ ունի, որտե՞ղ է գտնուում կենտրոնական գրասենեակը, և ովքե՞ր են ղեկավարները:

¹⁴¹ **Զարևանդ**, Միացեալ, անկախ Թուրանիա, 1988 թ., Աթէնք, էջ 65-66:

¹⁴² Նոյն տեղում, էջ 66-67:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՕՆՔԻ ՇԱՐԺՈՒՄ (ՀԱԱԶՇ)¹⁴³

Կազմակերպության հիմնադիրն ու առաջնորդն է Մահմուդ Ալի Չեհեբգանին (գրում է նաև Չեհեբգանլի կամ Չեհեղանլի): Նա եղել է Թավրիզի համալսարանի դասախօս: 1995 թ. Թավրիզից ընտրուել է Իրանի Իսլամական Խորհրդարանի պատգամաւոր: Հետագայում բանտարկուել է: 1999 թ. Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ Պահապան Խորհրդի կողմից չի հաստատուել նրա արժանաւորութիւնը՝ Խորհրդարանի պատգամաւոր վերընտրուելու համար: Նա մի առիթով գրում է, թէ 2002 թ., Իրանի իրադարձութիւնների նկատմամբ միջազգային շրջանակների ուշադրութիւնը հրաւիրելու մտադրութեամբ այցելել է Թուրքիա, Ադրբեջան, ԱՄՆ, Երոպայի մի քանի երկրներ (Դանիա, Շուեդիա, Ֆրանսիա, Գերմանիա) և այլևս չի վերադարձել Իրան:

Կազմակերպության կայքի հասցէն է <http://gamoh.org/> և <http://www.gamoh.biz/>: Այն եռալեզու է՝ անգլերէն, թուրքերէն և պարսկերէն: Կազմակերպության պաշտօնական անունն է Հարաւային Ադրբեջանի Ազգային Զարթօնքի Շարժում, հիմնադրուել է 1995 թ.¹⁴⁴:

Կայքի վերևի մասում տեղադրուած է կազմակերպութեան զինանշանը և Հարաւային Ադրբեջանի դրօշը:

Լեզուն, ինչպէս պանթիօքական մի շարք այլ կազմակերպութիւնների կայքերի պարսկերէն բաժինները, լի է սխալներով, կէտադրական կանոնների անճիշտ կիրառմամբ, որոնք

¹⁴³ <http://gamoh.org/> եւ <http://www.gamoh.biz/> (21.03.2017 թ.), տե՛ս նաեւ <http://gamoh.org/> եւ <http://www.gamoh.biz/> (21.03.2017 թ.):

¹⁴⁴http://en.wikipedia.org/wiki/Southern_Azerbaijan_National_Awakening_Movement

յաճախ մտքի շփոթի կամ սխալ ընկալման պատճառ են դառնում: Օրինակ՝ երբ ներկայացում է Զիյա Գէօքալիի բացատրություն-հիմնատրուումը թիրքիզմի մասին, յստակ չի դառնում, թէ որոնք են Գէօքալիի մտքերը, և որոնք են կազմակերպութեան տեսակէտները:

Կայքում, ի թիւս այլ բաժինների, գետնդրուած է կազմակերպութեան Ծրագիրը:

«Յեղասպանութիւն» բաժնում տեղադրուած են լուսանկարներ՝ Արցախում հայերի կողմից իրականացուած ադրբեջանցիների, այսպէս կոչուած, «ցեղասպանութիւնից»:

«Շարժման մասին» բաժինը վերնագրուած է «Համառօտ ակնարկ Հարաւային Ադրբեջանի Ազգային զարթօնքի շարժման կամ Հարաւային Ադրբեջանի Ազգային շարժման մասին»: Ապա գրուած է. «Անցեալ դարում Հարաւային Ադրբեջանը ականատեսն էր իր «ազգային ինքնորոշման իրաւունքի» ձեռքբերման կապակցութեամբ մի քանի ազգային շարժումների:

... Այսպիսի դժուար պայմաններում, երբ երկութապէս ամէն ինչ համընկնում էր իշխող շովինիզմի ցանկութեանը, Իրանի Իսլամական Խորհրդարանի հինգերորդ շրջանի ընտրութիւններում՝ 1995 թ. վերջերին և 1996 թ. սկզբներին, Հարաւային Ադրբեջանի Ազգային շարժում անունով մի նոր երևոյթ յայտնուեց Իրանի քաղաքական բեմում:

Հարաւային Ադրբեջանի ազգային վերջին շարժումը 1991թ., որպէս հաւաքական ազգային շարժում, սկսեց համալսարաններում և գիտական ու մշակութային կենտրոններում, և 1995 թ. սկսեց գործել որպէս համընդհանուր շարժում՝ Հարաւային Ադրբեջանի Ազգային շարժում անունով: Դոկտ. Մահմուդ Ալի Չեհեզգանիի մասնակցութիւնը Խորհրդարանի հինգերորդ շրջանի ընտրութիւններին (1995-1996 թթ.) հանդիպեց իշխող

շովինիստ ռեժիմի արգելանքին և խարդախութեանը, ծեծ ու ջարդին ու բանտին՝ հակառակ Թափափ ժողովրդի կողմից իր իրական թեկնածուի աջակցութեանը (մօտ 600 հազար քուէ), ով արտայայտում էր Ադրբեջանի թուրք ազգի պատմական ցաւերը: Երբ Ադրբեջանի իրական պատգամատուրը զրկուեց Խորհրդարանի խօսափողի հնարատրութիւնից, բնական ձևով այդ պայքարը տեղափոխուեց փողոց»:

Հարուածներ ՀԱԱԶՇ-ի «Նպատակներ» բաժնից¹⁴⁵:

«Նկատի ունենալով, որ մեր հայրենիքը՝ Ադրբեջանը, ռուսների իմպերիալիստական քաղաքականութեան պատճառով 1813 թ. և 1828 թ. Գիւլիստանի և Թուրքմէնչայի պայմանագրերով երկու կէսի է բաժանուել, մեր հայրենիքի հիախսային կէսն այսօր անկախ է, և մեր հայրենիքի հարաւային կէսը շովինիստների գաղութատիրութեան ենթական է»:

«ՀԱԱԶՇ-ի ռազմավարական նպատակը ազգային ինքնորոշման իրաւունքն է»:

«Ըստ ՀԱԱԶՇ-ի՝ միայն Մարդու իրաւունքների հռչակագրերի դրոյթների և ժողովրդավարութեան պայմանով է, որ կարելի է Իրանում բնակուող վեց ազգերի միջև՝ թուրք, ֆարս, քուրդ, արաբ, բելուջ և թուրքմէն, դաշնային և համադաշնային ձևով և համահաւասար իրաւունքների հիման վրայ ձեռք բերել ժողովրդավարական համակեցութիւն՝ համաշխարհային օրէնքների հիման վրայ. ընդհանրական պետութիւնների ձևը չընդունելու դէպքում, որը ֆարս ազգի քաղաքական ներկայացուցիչների կողմից կարող է հարցականի տակ դրուել, այդ քաղաքական գործիչները իշխանութեան կամ ընդդիմութեան մէջ եղած կարող են պատճառ դառնալ Իրանի մասնատմանը. բնականա-

¹⁴⁵ Նոյն կայքէջում:

բար անկախ պետութիւն կազմելու իրաւունքը Մարդու իրաւունքների համաշխարհային հռչակագրերում բնական իրաւունք է համարում (ընդգծումը բնագրից – Ս.Մ.): ԳԱՄՈՀ-ը առաջ է գնում դոկտ. Մահմուդ Ալի Չեհեբգանիի ռազմավարական այս կարգախօսով, որ «արժանապատուութիւն ունեցող ազգերն ապրում են իրենց դրօշի ներքոյ և իրենց ազգային-պետական տարածքն իրենք են ճշտում», և այս նպատակին հասնելու մարտավարութիւնները Միաւորուած ազգերի կազմակերպութեան մարդկային համընդհանուր օրէնքների շրջանակում և միայն իր ազգի վրայ յենուելով, ժողովրդավարական ճանապարհներով են առաջ տանում»:

«ՀԱԱԶՇ-ի գաղափարախօսութիւնը խարսխում է երեք սկզբունքի վրայ՝ թուրքշուվիք, մոսաէրչըլըք և օզգուտլիք¹⁴⁶ (թուրքիզմ, արդիականութիւն, ազատութիւն – Ս.Մ.) .

1. Ազգայնականութիւն՝ այլ ազգերի հետ համահաւասար իրաւունքների հիման վրայ:

2. Նորութեան ձգտում, նոր մտածողութիւն և ժողովրդավարութիւն (ժամանակակից լինել):

3. Ազատ մտածողութիւն և սեկիւլառիզմ (աշխարհիկութիւն – Ս.Մ.): ԳԱՄՈՀ-ը հաւատում է տղամարդու և կնոջ իրաւահաւասարութեանը, *կրօնը համարում է անձնական խնդիր և կողմնակից է կրօնի ու քաղաքականութեան՝ իրարից անջատմանը:*

Իրանում բնակուող ազգերի էթնիկական-քաղաքական շրջանակը¹⁴⁷: Իրանում բնակուող ազգերի միջև այսօրուայ պարտադրուած և **գաղութատիրութեան միջոցով**

¹⁴⁶ Պարսկերէն բաժնում այս երեք բառակապակցութիւնները գրուած են թուրքերէն:

¹⁴⁷ Նոյն կայքէջում:

ուրուագծուած սահմանները օրինական կարողականութիւն չունեն»:

Հարաւային Ադրբեջանի աշխարհագրական սահմանները¹⁴⁸: «Հարաւային Ադրբեջանի՝ ՀԱԱԶՇ-ի սահմանումը. Հիմնականում Արևելեան ու Արևմտեան Ադրբեջան նահանգները (խօսքը Իրանի Արևելեան և Արևմտեան Ատրպատական նահանգների մասին է – Ս.Մ.), Արդեբիլ նահանգը՝ Անզալին ու Աստարան ներառեալ, և թրքարնակ գիւղեր ու քաղաքներ, ինչպէս՝ Հաշտպառը, Զանջան նահանգը, Համադան նահանգը (թրքարնակ բաժինը), Ղազուինը, Սաւէն ...»:

Հարաւային Ադրբեջանի Ազգային զարթօնքի շարժումը միջազգային ասպարէզում¹⁴⁹: «Դոկտ. Մահմուդ Ալի Չեհեռեգանիի՝ որպէս առաջնորդի դերը Հարաւային Ադրբեջանի ազգային շարժման գործընթացի արագացման մէջ անժխտելի է: 2001 թ. վերջերին տասնեակ մշակութային-քաղաքացիական և ֆիզիկական և իրաւական անձանց հրաւերով և միջազգային ահագնացող ճնշումների արդիւնքում հնարաւոր դարձաւ նրա՝ դէպի արտասահման ճանապարհորդութիւնը... Դոկտ. Չեհեռեգանին կրոպական տարբեր երկրներում՝ Շուեդիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Դանիայում և մեր հայրենիքի միւս կէտում՝ Ադրբեջանում (Ադրբեջանի անկախ Հանրապետութիւն) ու եղբայր երկիր Թուրքիայում և, ի վերջոյ, Ամերիկայի Միացեալ Նահանգներում կարևոր հանդիպումներ է ունեցել:

Առաջին անգամ Հարաւային Ադրբեջանի քաղաքական մի առաջնորդ հնարաւորութիւն ունեցաւ հանդիպելու Եւրոխորհրդի Ընդհանուր քարտուղար Վալտեր Շուիմէրին և, դարձեալ առաջին անգամ, Հարաւային Ադրբեջանի քաղաքա-

¹⁴⁸ Նոյն կայքէջում:

¹⁴⁹ Նոյն կայքէջում:

կան մի առաջնորդ Սպիտակ տանը հանդիպեց ԱՄՆ-ի բարձրաստիճան պաշտօնեաներին:

Այս լայնածառալ և ինտենսիվ աշխատանքների արդիւնքում այսօր կազմակերպութիւնը (GAMOH) Միաւորուած ազգերի կազմակերպութեան Մարդու իրաւունքների յանձնաժողովի կողմից պաշտօնապէս ճանաչում է գտել: Եւրոխորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից, թիւ 9710 փաստաթղթի հիման վրայ, այդ Խորհրդարանական վեհաժողովի համացանցային կայքում պաշտպանուել են Իրանի 30 միլիոն ադրբեջանցիների (ատրպատականցիներ – Ս.Մ.) ազգային իրաւունքները: Այս փաստաթուղթը ստորագրուել է Բելգիայի, Հունգարիայի, Իսպանիայի, Լեհաստանի, Լիտուայի, Թուրքիայի, Ուկրաինայի և անդամ այլ երկրների կողմից»:

Կազմակերպութիւնը արտասահմանում¹⁵⁰: «Մօտ մէկ տարի առաջ դոկտ. Մահմուդ Չեհեբգանիի նախաձեռնութեամբ արտասահմանում մասնաճիւղեր հիմնուեցին, և այսօր արտասահմանում բնակուող ադրբեջանցիների միջոցով ստեղծուել են 24 մասնաճիւղեր տարբեր քաղաքներում»:

«Հարաւային Ադրբեջանի ձայնը ռադիօ» (GASR)¹⁵¹: «Հարաւային Ադրբեջանի ձայնը ռադիօ»-ի հիմնումը 2003 թ. յունուարին նշանակալի կարևորութիւն ունի... վերջերս Բաքում ՀԱԱԶՇ-ի յենակէտի (գրասենակ – Ս.Մ.) վրայ կատարուած իսլամական ռեժիմի տեռորիստական յարձակման պատճառով ռադիօն ժամանակաւորապէս փակուել է»:

Այժմ անդրադառնանք կազմակերպութեան Ծրագրին: Երան որպէս բնաբան են ծառայում Չեհեբգանիի հետևեալ

¹⁵⁰ Նոյն կայքէջում:

¹⁵¹ Նոյն կայքէջում:

մտքերը. «Արժանապատիւ ազգերն իրենց դրօշի ներքոյ են ապրում» և «Այն, ինչ մեր ազգը կամենայ, լինելու է»:

Սպորն՝ հայրուածներ «Ծրագրից»: «Թուրք ազգի մեծ մասը, ազգ, որը բազմաթիւ մտածողների է նուիրել քաղաքակրթութեանը և իշխանութիւն-պետութիւն արժեքաւոր ժառանգութիւնն է մարդկութեանը տուել, Իրանում՝ ազգերի բանտում, իր ամենատարրական իրաւունքներից դեռ զրկուած է: Շահագործման և ցեղասպանութեան շարունակութիւնը, որ միջազգային ոճիր է համարում, միևնոյն ժամանակ մեծ վտանգ է առաջացնում համաշխարհային խաղաղութեան և անդորրութեան համար, և այս հիման վրայ դրանց դէմ պայքարը մի երկրում միայն ներքին խնդիր չի համարում, այլև միջազգային հակամարտութիւն է: Միատրուած ազգերի կազմակերպութեան Ընդհանուր Ժողովի թիւ 313 բանաձևը (1973 թ. դեկտեմբերի 1) յայտնում է, որ Ժնևի 1949 թ. Հռչակագրի հիման վրայ ցեղապաշտ ու շահագործող իշխանութիւնների դէմ զինեալ պայքարը համարում է միջազգային պայքար:

ՀԱԱԶԸ-ը 16 դեկտ.1966 և 15 դեկտ.1948 թթ. բանաձևերի և Մարդու իրաւունքների հռչակագրի և Միջազգային իրաւունքների հիման վրայ պայքարում է Հարաւային Ադրբեջանի ազգի «ինքնորոշման իրաւունքի» ուղղութեամբ, և այս պայքարը կարգաւորում է «թուրքիզմ, արդիականութիւն և մտքի ու խօսքի ազատութիւն» երեք սկզբունքի հիման վրայ: Ուշադրութեան արժանի է, որ «ինքնորոշման իրաւունքի» սկզբունքը մարդկային ազատութիւնների իրաւական հիմքերից մէկն է, և պարզ է, որ առանց այս սկզբունքի իրագործման՝ մարդկային ազատութիւնների և մարդու իրաւունքների պաշտպանութիւնը անհնարին է լինելու:

Ի հարկէ, ինքնորոշման իրաւունքը երկրների մասնատման խրախուսման իմաստով չէ, որովհետև յատկապէս 1970 թ. բանաձևում (ՄԱԿ–ի – Ս.Մ.) նշուել է. «Եթէ պետութիւնները յանձնառու լինեն ազգերի իրաւունքների հաւասարութեան և ինքնորոշման իրաւունքի» նկատմամբ, և իշխանութեան մէջ բոլոր քաղաքացիների դերակատարութեան ու մասնակցութեան իրաւունքը իրագործուի՝ անկախ նրանց կրօնական, գաղափարական, ցեղային և լեզուական պատկանելութիւնից, «ինքնորոշման իրաւունքը» չպէտք է մեկնաբանուի որպէս անջատողական շարժումներ խրախուսող ու երկրների քաղաքական միասնութիւնը խարխլող: Այլ խօսքով՝ «ինքնորոշման իրաւունքը» նպատակ չէ, այլ միջոց՝ ազգերի անկախատենչական հակամարտութեան լուծման համար»:

Հիմնական սկզբունքներ¹⁵²

Թուրքիզմ: Այս բաժինն սկսւում է թուրքիզմի մասին Գէօքալիից մէջբերումով. «*Թուրքիզմ* նշանակում է ճիգ՝ թուրք ազգի երջանկութեան և հպարտութեան համար: **Զիյա Գէօքալի**»:

Այնուհետև շարունակւում է. «Գէօքալիի տեսակէտով թուրքիզմը մի կուսակցութեան հռչակագիր կամ քաղաքական տեսութիւն չէ, այլ գիտական, փիլիսոփայական և գեղագիտական դպրոց է: Այլ խօսքով՝ թուրքիզմը մշակութային աշխատանք է և գիտական նորարական ճանապարհ՝ թուրք ազգի երջանկութեան համար: Թուրքիզմի քաղաքական չլինելը հաս-

¹⁵² Նոյն կայքէջում:

տատել է նաև մեծ բանաստեղծ և հասարակական գործիչ Ալիբեյ Հուսեյնզադէն:

Դրանով հանդերձ՝ թուրքիզմը քաղաքական մտածողութիւններին խորթ չէ: Օրինակ՝ թուրքիզմը չի կարող այնպիսի մտածողութիւնների հետ հաշտ լինել, ինչպիսիք են թէոկրատիան (աստուածապետութիւնը), կլերիկալիզմը (կղերապետութիւնը), ինքնակալ, դաժան ու անողորմ ռեժիմները:

Քանի որ թուրքիզմը արդիական (մոդէռն) շարժում է, ուստի միայն նոր ու ժամանակակից մտային հոսանքների ու մտածողութիւնների հետ է կարող հաշտ լինել:

Թուրք մեծ հասարակագէտ Զիյա Գէօքալփը (Գէօքալփը քուրդ է – Ս.Մ.) թուրքիզմի ծնունդը հասարակական իրադարձութիւն է համարում և այս իրադարձութեան բացատրութիւնը տալիս է երկու հակադիր տեսութիւնների՝ «պատմական մատերիալիզմի» և «ընկերային մտքի» տեսանկիւնից:

Առաջին տեսութեան հիման վրայ թուրքիզմը երևան է եկել տնտեսական պատճառների հետևանքով և երկրորդ (տեսութեան – Ս.Մ.) տեսանկիւնից թուրքիզմը շարժումը ընկերային հիմնասիւնների փոփոխութիւնների պատճառով է երևան եկել: Զիյա Գէօքալփին անելացնում է, որ թուրքիզմի սկզբնական հիմունքներից մէկը «դէպի ժողովուրդ» սկզբունքն է»:

Նշեմ, որ ծրագրի այս բաժնում մեծ տեղ է յատկացուած Զիյա Գէօքալփի վերոյիշեալ բացատրութիւն-հիմնատրմանը՝ մշակոյթի ու քաղաքակրթութեան ընդհանրութիւնների ու տարբերութիւնների տեսանկիւնից:

«Թէև մեր քաղաքակրթութիւնը կրոպական երկրների քաղաքակրթութիւնից յետ է մնացել, բայց մշակութային առումով ոչ մի ազգի մեզանից բարձր չենք համարում: Մեր կարծիքով թրքական մշակոյթը աշխարհում յայտնուած ամենագեղե-

ցիկ մշակոյթներից է, և այդ պատճառով էլ ոչ Ֆրանսիայի մշակոյթից, ոչ Գերմանիայի մշակոյթից և ոչ էլ որևէ այլ մշակոյթից չենք ընդօրինակել և նրա գերին չենք դարձել: Մենք այդ մշակոյթները, ինչպէս այլ մշակոյթներ, համարում ենք իրենց ազգին յատուկ ու բնորոշ մշակոյթ և դրանց բոլորի գեղեցկութիւններից հաճոյք ենք տանում:

Թուրքիզմը չնայած իր ամբողջ էութեամբ թուրքական մշակոյթի սիրահարն ու խելակորոյս երկրպագուն է, սակայն ոչ մի կերպ չովիճիստ ու ֆանատիկ չէ, և այն, որ ցանկանում է համակարգուած ու ամբողջական կերպով ձեռք բերել Արևմուտքի քաղաքակրթութիւնը, այլ ազգերի մշակոյթների նկատմամբ որևէ անարգանք ու անփութութիւն ընդունելի և ճիշտ չի համարում, այլ ընդհակառակը՝ բոլոր ազգային մշակոյթները համարում է յարգելի և արժէքաւոր: Ուստի մենք թէև մեր իրաւունքները ոտնահարող ազգերի քաղաքական հաստատութիւնների նկատմամբ բարեհաճ չենք, սակայն նրանց մշակութային ու քաղաքակրթական ժառանգութիւնը յարգում ենք և մեծարում այդ ազգերի մտածողներին ու արուեստագէտներին:

Մեր համոզմամբ թուրքիզմի նպատակը թուրքական ազգային մշակոյթի ու ազգային անհատականութեան արարումն է, որը մտքի ու խօսքի ազատութեամբ ու Արևմուտքի քաղաքակրթութեամբ ամբողջանում է»:

Արդիականութիւն: Զիյա Գէօքալի տեսակէտից քաղաքակրթութիւնը մի քանի էթնիկ խմբերի և տարբեր կազմակերպութիւնների մտածողութեան ու գործողութեան նորագոյն ձևի համալիրն է: Նրա կարծիքով Արևմտեան քաղաքակրթութիւնը քրիստոնէական քաղաքակրթութիւն անուանելը ճիշտ չէ, նոյնպէս և Արևելեան քաղաքակրթութիւնը իսլամական քաղաքակրթութիւն կոչելն է սխալ: Այս ամբողջը նկատի ունենալով՝

քնական է, որ Արևելքի և Հեռավոր Արևելքի քաղաքակրթությունները չեն կարող թուրք ազգին օրինակ ծառայել, որովհետև նրանք զարգացած քաղաքակրթությունների չեն վերածուել: Այսօր միայն Արևմտեան քաղաքակրթությունն է զարգացած քաղաքակրթություն: Մեր կարծիքով՝ ժամանակակից լինելն ու ժամանակակից դառնալը իրականում նշանակում է Արևմտեան քաղաքակրթությանը յարել:

– Եթե որոշ ազգեր ժամանակակից (մոդեռն) քաղաքակրթությանը յարելու համար պարտաւոր են հեռավորութիւն պահել և երես թեքել իրենց անցեալից, յետադարձ հայեացքը անցեալին և պատմութիւնը թուրքերի աջակիցներն են՝ Արևմտեան քաղաքակրթությանը յարելու համար, որովհետև հին ժամանակների թուրքերը կրօնական ծայրայեղութիւնից, ծէսերից և վանական աղօթքներից հեռու մնալու և կրօնական մենաշնորհի հաստատելուց և ֆանատիզմից խուսափելու շնորհիւ թէ՛ կանանց և թէ՛ այլ ազգերի հետ ունեցել են ոչ բիրտ և յարգալից վերաբերմունք, այսինքն՝ հին ժամանակների թուրքերը մի ինչ-որ ձևով թէ՛ ժողովրդավար են եղել և թէ՛ կանանց իրաւունքների պաշտպան:

– Նկատի ունենալով, որ հին ժամանակների թուրքերը ենթակայ են եղել խաղաղասիրական օրէնքների, այլ ազգերի մշակութային, քաղաքական և կրօնական հարստութիւններին խիստ յարգալից աչքով են նայել, ուստի իրենց կոչել են «իչ իլ» («ներսի ազգ») և ուրիշներին՝ «դիշ իլ» («դրսի ազգ») և բոլոր ազգերի հետ յարաբերուել են բարեկամաբար և խաղաղասիրաբար:

Մեր կարծիքով ապագայում անաչառ և միտումնաւորութիւնից հեռու պատմագրութիւնն ընդունելու է ժողովրդավարու-

թեան և կանանց իրաւունքների պաշտպանութեան հասկացութիւնը թուրքերի կողմից:

Հայրուածներ «Մտքի և խօսքի ազատութիւն» բաժնից: «Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժումը¹⁵³ թուրքիզմի ուսմունքի հիման վրայ կարողացել է Հարաւային Ադրբեջանում ողջ ոչ ազգային մտածողութիւնները մեկուսացնել, սակայն չպիտի այնպէս ընկալուի, որ մեր շարժումը ամբողջատիրական և մենաշնորհեալ է, այլ ընդհակառակը. այս շարժումը, որպէս մի շարժում, որն առաջացել է ժամանակի պահանջներից ելնելով, մտքի ու խօսքի ազատութիւնը որդեգրել է որպէս իր հիմնական սկզբունքներից մէկը:

Մարդու մտքի ու մտածողութեան բնոյթն այնպիսին է, որ որևէ օտար ուժ չի կարող նրան պարտադրել իւրայատուկ ձևով մտածել: Հետևաբար մարդը պիտի որևէ պարտադրանքից և ատելութիւնից ազատ ու ապահով լինի: Ոչ մէկը չպէտք է մէկ ուրիշին նիւթական և մարմնական վնաս հասցնի, որի կրօնն ու ուսմունքը չի ընդունում: Ոչ մէկը ուրիշների իրաւունքները բռնաբարելու իրաւունք չունի: Բոլոր մարդկանց նիւթական և բարոյական իրաւունքները, անկախ նրանց կրօնական հաւատալիքներից, պէտք է ամենայն յարգանքով պահպանուեն ու պաշտպանուեն: Չպէտք է ոչ մէկի հետ նրա կրօնական կամ ոչ կրօնական հակումների համար հակաօրինական և օրինազանցական ձևով վարուել:

Հետևաբար Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժումն այն համոզմունքն ունի, որ հաւատալիքները, բա-

¹⁵³ Բնագրում «Հարաւային» բառը չի գրուել, որը վրիպում է իրենց կողմից: Թարգմանութեան մէջ հաւատարիմ եմ մնացել բնագրին:

րոյականութիւնն ու ապրելաձևը անձնական հարցեր են, և ոչ մէկը իրաւունք չունի այդ հարցերին միջամտել:

Հարաւային Ադրբեջանի Ազգային զարթօնքի շարժումը Հարաւային Ադրբեջանում բոլոր կրօններին և ազգութեան ու մեծամասնութեան մտքերին յարգալից է վերաբերում:

Այս բոլոր կէտերը նկատի առնելով՝ ՀԱԱԶՇ-ն այն համոզմանն է, որ ամէն մի ադրբեջանցի թուրքի ազգային մտածողութիւնը կարելի է հետևեալ կերպ արտայայտել. «Թուրք եմ, ժամանակակից եմ, ազատ եմ»:

Դեռևս 70 տարի առաջ Ադրբեջանի թուրքերը կազմում էին Իրանի ժողովրդի 51.5 տոկոսը: Նկատի ունենալով այն իրականութիւնը, որ Ադրբեջանի թուրքերի թուաքանակն աճում է, իշխանութիւնը Ադրբեջանի թուրքերի թիւը յայտարարում է մօտ 25 տոկոս: Դրանով հանդերձ՝ մենք համոզուած ենք, որ Ադրբեջանի թուրքերը Իրանի ամենամեծ ազգային փոքրամասնութիւնն են. նրանց թիւը 32 միլիոն է: Եթէ այդ թուին աւելացնենք Կասպիցի ծովափնեայ շրջանների թուրքմէններին (որոնք մօտաւորապէս 2 միլիոն են), թուրքերի թիւը կը հասնի 34 միլիոնի, որոնցից 20 միլիոնն ապրում է Հարաւային Ադրբեջանում, 10 միլիոնը՝ Թեհրանում, 2 միլիոնը՝ Ղաշղայի թուրքերն են, 2 միլիոնը՝ Խորասանի թուրքերը:

Մենք ընդունում ենք Իրանի հողային ամբողջականութիւնը, և մեր նպատակը Ադրբեջանին կամ Թուրքիային միանալը չէ... Մենք պահանջում ենք Դաշնային Իրան, որտեղ յարգուեն Ադրբեջանի թուրքերի իրաւունքները... Մենք պահանջում ենք դաշնային և ժողովրդավարական Իրան, ինչպէս Գերմանիան է կամ ԱՄՆ-ը... Մենք կը ջանանք, որ Իրանը չմասնատուի»:

Վերոշարադրեալը հակասում է կազմակերպության կայքում տեղ գտած հետևեալ նպատակին. «Վերջնական նպատակը Ադրբեջանի Հանրապետությանը միանալն է»: Լրագրողի հարցին, թե ինչպե՞ս էք բացատրում այս տարբերությունը, Չեհեզգանին պատասխանում է. «Ես չեմ կարող ասել, թե ինչ կը պատահի ապագայում: 1813 թ. Ռուսաստանը Ադրբեջանին ուժով բաժանեց երկու մասի: Եթե երբևիցե Ադրբեջանի թուրքերը որոշեն միանալ, ոչ ոք չի կարող նրանց առաջն առնել: Գերմանացիները և վիետնամցիները միացան, և զարմանալի չէ հաւատալը, թե Ադրբեջանի թուրքերն էլ կը միանան: Յամենայնդէպս մեր նպատակը միացումը չէ: Մենք Իրանի հողային ամբողջականության շրջանակում պահանջում ենք մեր լեզուական և մշակութային իրատունքները ... Բոլոր դէպքերում մեր վիճակը Իրանում նման է Թուրքիայում ապրող թուրքերի (թուաքանակի առումով) և ոչ թե քրդերի վիճակին, որովհետև մենք մեծամասնությւն ենք և ոչ թե փոքրամասնութիւն. քրդերի վիճակը Թուրքիայում նման է Իրանում ապրող պարսիկների վիճակին (թուաքանակի առումով)»¹⁵⁴:

Դիտարկումներ

1. Կայքը հիմնականում նուիրուած է Չեհեզգանիի մտքերին ու գործերին: «Շարժումը» հիմնադրել է Չեհեզգանին. նա է կազմակերպության առաջնորդը. նրա մտքերն են մեջբերուում. նրա այցելութիւններն են արտացոլում: Եւ այն տպաւորու-

¹⁵⁴ http://csis.org/files/media/csis/events/020808_remarks.pdf կամ https://csis-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy_files/files/attachments/020808_Iran_remarks.pdf (22.03.2017 թ.):

թինն է առաջանում, որ Չեռեգանին, այսպես կոչուած, Հարա-
ային Ադրբեջանի ժողովրդի փրկիչն է:

Այլ խօսքով՝ ծանօթանալով կայքի մէջ տեղ գտած տեղե-
կութիւններին՝ կարելի է գալ այն եզրակացութեանը, որ կազմա-
կերպութիւնն ունի սակաւաթիւ անդամներ, ովքեր իրենց հերթին
այս կայքի միջոցով փորձում են գովաբանել Չեռեգանիին: Սա
իր հերթին վկայում է այն մասին, որ, հակառակ կազմակերպու-
թեան կողմից կատարուող քարոզչութեանը, այն ժողովրդակա-
նութիւն չի վայելում և արտայայտուող մտքերն ընդամէնը մի
փոքր խմբի տեսակէտներն են: Որպէս ասուածի ապացոյց՝
նշենք, որ կազմակերպութիւնը վերջին տարիներին ակներև գոր-
ծունէութիւն չի ծաւալել: 2010 թ. յուլիսին Չեռեգանիի հետ կա-
տարուած մի հարցազրոյցում, նրա մի քանի տարուայ լռութեան
մասին տրուած հարցումին ի պատասխան՝ նա ասում է. «Առող-
ջական բազմաթիւ խնդիրների ու նաև որոշ այլ հարցերի պատ-
ճառով աւելի լաւ էր՝ լռելի... սակայն այժմ, երբ մարմնական տկա-
րութիւններս ու հիւանդութիւններս ապաքինուել են, յուսով եմ՝ որ
կը կարողանամ աւելի հզօր կերպով ազդեցիկ ներկայութիւն լի-
նել Ադրբեջանի ազգային շարժման մէջ»¹⁵⁵: Այսինքն՝ կազմակեր-
պութեան գործունէութիւնը պայմանաւորուած է մէկ անձով: Նա
կայ՝ կազմակերպութիւնն ու գործունէութիւնն էլ կայ, նա չկայ՝
չկայ նաև կազմակերպութիւնն ու գործունէութիւնը:

2. Գաղափարախօսութիւնը հիմնուած է Ձիյա Գէօ-
քալիի հայեացքների վրայ: Ձիյա Գէօքալիը պանթուրանիզմի
գլխաւոր գաղափարախօսներից է: Հետևաբար ինչքան էլ փորձ
արուի «մարդու իրաւունքների ոտնահարման», «փոքրամասնու-
թեան իրաւունքների բռնաբարման», «պարսկական շովինիզմի»

¹⁵⁵ http://baybak.com/say_3176.azr (21.11.2016):

և այլնի ներքոյ բացատրել-հիմնաւորել պայքարը, ակնյայտ է, որ այն պանթիօրքական շարժում է, որի վերջնանպատակը շարադրուած է Գէօքալի գրութիւններում: Վերջինիս տեսակէտից թուրքիզմն ընդամէնը պանթուրանիզմի առաջին աստիճանն է:

3. Հարց է առաջանում՝ արդեօք որևէ գաղափարական կապ կայ Չեհեռեգանիի, նրա ՀԱԱԶՇ-ի ու Թուրքիայի միջև, թէ՛ ոչ: Այս կապակցութեամբ բաւարարուենք՝ մէջբերելով Լ.Խուրշուդեանի տեսակէտը. «Թուրքիզմը այսօր էլ պաշտօնապէս Թուրքիայի ազգային պետական գաղափարախօսութիւնն է: Այն պաշտպանութեան տակ է առնուած ինչպէս Թուրքիայի Հանրապետութեան նոր Սահմանադրութեան երկրորդ յօդուածով, այնպէս էլ «Գործող քրէական օրէնսգրքի» 159-րդ յօդուածով, որով ասոււմ է. «Թուրքիզմին, Հանրապետութեանը, Թուրքիայի Ազգային մեծ ժողովին, կառավարութեանը, նախարարութիւններին, պետութեան ռազմական և անվտանգութեան ուժերին կամ դատական իշխանութիւնների իրաւաբանական անձանց բացայայտ վիրաւորանք և անարգանք հասցնողները դատապարտոււմ են ազատազրկման 1-6 տարի ժամկէտով»¹⁵⁶:

4. Անընդհատ շեշտոււմ է ազգային ինքնորոշման իրաւունքի սկզբունքը, և պայքարը հիմնաւորոււմ է դրանով: Այն, որ այդ սկզբունքը բացարձակապէս կիրառելի չէ Իրանի էթնիկ խմբերի պարագայում, անվիճելի է: Այս մասին Գ. Ասատրեանը գրոււմ է. «Իրանի բնական կոնստրուկտը երեք հազար տարուայ պատմութիւն ունի: Երեք հազար տարի է՝ ինչպէս ձևաւորուել, այդպէս էլ մնացել է. Իրանի տարածքի ոչ մի հատուած անեքսիայի չի ենթարկուել. ոչ մի ժողովուրդ չի բերուել, կամ նրա էթ-

¹⁵⁶ Խուրշուդեան Լ., Հայոց ազգային գաղափարախօսութիւնը, 1999 թ., Երևան, 283 էջ, էջ 70-71:

նիկական տարածքը չի կցուել երկրին»¹⁵⁷: Հետևաբար այդ սկզբունքը, կրկնենք, բացարձակապես կապ չունի Իրանի հետ և կիրառելի չէ Իրանի պարագայում: Սակայն հարց է առաջանում, թե հէնց նոյն այդ կազմակերպութիւնը ինչու՞ ազգերի ինքնորոշման իրատունքի սկզբունքը ընդունելի չի համարում Արցախի դէպքում: Չէ՞ որ արցախեան պայքարը ազգային ինքնորոշման պայքար է:

5. Իրանի էթնիկ խմբերի թուաքանակի կապակցութեամբ հարկ եմ համարում ներկայացնել ԱՄՆ Կենտրոնական հետախուզութեան վարչութեան Համաշխարհային տարեգրքի (CIA – The World Factbook) 2013 թ. փետրուարի 5-ի տուեալները. պարսիկ՝ 61 տոկոս, ազերի՝ 16 տոկոս, քուրդ՝ 10 տոկոս, լուր (լոռ)՝ 6 տոկոս, բելուջ՝ 2 տոկոս, արաբ՝ 2 տոկոս, թուրքմէն և թիրքական ցեղախմբեր՝ 2 տոկոս, այլ՝ 1 տոկոս¹⁵⁸:

Ի՞նչ են իրական թուերը՝ թողնենք մի կողմ, ուղղակի հաստատենք, որ նոյնիսկ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզութեան վարչութեան տուեալներով ազերիները կազմում են Իրանի ժողովրդի 16 տոկոսը: Եթէ նոյնիսկ այդ թուին ւաւելացնենք թուրքմէներին և թիրքական միւս ցեղախմբերին, այսինքն՝ 2 տոկոս, ստացում է 18 տոկոս: Հետաքրքիր է իմանալ, թե Չեռնեզանին և նրա նման այլ պանթիրքիստներ 51.5 տոկոս թիւը որտեղի՞ց են բերում: Եւ կրկնենք, որ այդ թուերը Իրանի իշխանութիւնների հրապարակած թուերը չեն, այլ՝ ԱՄՆ-ի:

6. «Արդիականութիւն» բաժնում խօսուում է «դրսի թուրքեր»-ի մասին: Այս կապակցութեամբ Զէյլկոբ Լանդօս գրում է. ««Dış Türkler» կամ «դրսի թուրքեր»-ը մի դարձուածք է, որը

¹⁵⁷ <http://hetq.am/arm/news/37671/garnik-asatryan-iranum-adrbejanakan-pogramasnutyun-orpes-aydpisin-goyutyun-chuni.html> (22.03.2017 թ.):

¹⁵⁸ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ir.html> (22.03.2017 թ.):

բազմաթիւ անգամներ օգտագործուել է վերջին տարիներին Թուրքիայում՝ պանթիւրքիստների կողմից: Այն ընդգրկում է խմբերի լայն շրջանակ՝ կազմուած թիւրքական արմատներով ժողովուրդներից: Առնուազն նրանցից որոշները դարեր շարունակ թուրքերի հետ մօտ յարաբերութիւններ են ունեցել: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին այսպիսի խմբերից շատերը բնակուում էին Օսմանեան կայսրութեան սահմաններից դուրս՝ Յարական Ռուաստանում»¹⁵⁹: Վերոյիշեալ բացատրութիւնը նկատի ունենալով՝ կարելի՞ է ջանգել այն եզրակացութեանը, որ կազմակերպութիւնը հետապնդում է պանթիւրքական նպատակներ: Այլապէս ինչպէ՞ս բացատրել կազմակերպութեան օգտագործած բառապաշարի ու պանթիւրքական հոսանքների օգտագործած բառապաշարի նմանութիւնը կամ նոյնութիւնը:

7. Ինչպէս յստակօրէն երևում է, Չեռոեգանին չի կարողանում թաքցնել իր կազմակերպութեան վերջնանպատակը: Թէև խօսում է ժողովրդավարութեան, Իրանում դաշնային համակարգի կիրառման և Իրանի հողային ամբողջականութեան մասին, սակայն կազմակերպութեան կայքում է նշուած, որ «Վերջնական նպատակը Ադրբեջանի Հանրապետութեանը միանալն է», և լրագրողի հարցին ի պատասխան՝ ասում է, որ ինքը չի կարող ասել, թէ հետագայում ինչ է պատահելու, յամենայնդէպս «Սա մի քայլ է դէպի անկախութիւն... Սա ամենայարմար բնորոշ է ներկայ կացութեան մէջ, և մենք այժմ պահանջում ենք դաշնային համակարգ, որից մինչև անկախութիւն մէկ քայլ է»: Այլ խօսքով՝ կազմակերպութիւնն անջատողական պայքար է մղում:

¹⁵⁹ Landau Jacob M., Pan-Turkism, From Irredentism to Cooperation, 1995, 2nd Edition, Revised and updated, Printed in Hong Kong, Page 28.

ՀԱՐԱԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՕՆՔԻ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ (YENIGAMOH)¹⁶⁰

Կազմակերպության հիմնադիրն ու ղեկավարն է Լաթիֆ Հասանին (գրում է նաև Հասանլի). նա ծնուել է Իրանի Խալխալ քաղաքում: Կազմակերպության կայքէջի հասցեն է <http://www.yenigamoh.com/>: Կայքէջում ներկայացուած են կազմակերպության ծրագիրը, կանոնագիրը, գլխաւոր քարտուղարի մասին տեղեկութիւն, Հարաւային Ադրբեջանի դրօշը, Հարաւային Ադրբեջանը UNPO-ում, ուսումնասիրութիւնների կենտրոնը, զանգուածային լրատուամիջոցները և այլ բաժիններ:

Ծրագրում¹⁶¹ նշուած է. «Բոլոր մարդիկ ազատ են ծնուել և իրաւունք ունեն ազատ ապրելու: Դա Աստծոյ ամենամեծ պարգևն է մարդուն... Թւորքերը, մեծ անհատականութիւններ ներկայացնելով, մարդկային արդի քաղաքակրթութեան ձևաւորման գործում անհերքելի դեր են ունեցել, այնպէս որ՝ թւորքերի՝ պետական կառավարման արժէքաւոր ժառանգութիւնը ներկայիս սերունդների աչքի առջև է: Սակայն, դրանով հանդերձ, նրանց կարևոր մի մասը՝ Հարաւային Ադրբեջանի թւորք ազանունով, Իրան երկրում գտնուելով շովինիստական, ֆաշիստական և արմատական տիրապետութեան ներքոյ, իրենց մարդկային ամենատարրական իրաւունքներից զրկուած է և գտնուում է ցաւի ու տանջանքի մէջ...

Ազգային պայքարի նորագոյն փուլի սկզբում՝ 1990-ականներին, Հարաւային Ադրբեջանի ազգային շարժումը, որ հիմնուած է ադրբեջանական թւորքականութեան վրայ, կարողացել է հասարակութեան մէջ ազգային գիտակցութիւնը հզօ-

¹⁶⁰ <http://www.yenigamoh.com/> (28.03.2017 թ.):

¹⁶¹ <http://www.yenigamoh.com/index.php/2012-09-07-03-54-51> (28.03.2017 թ.):

րացնելով և հիմնուելով միջազգային իրաւունքի սկզբունքների վրայ, առաջացնել քաղաքական ու քաղաքացիական պայքար, որն ունեցել է բազմաթիւ յաջողութիւններ...

ԵնիԳԱՄՈՆԿ կազմակերպութիւնը (Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժում) մի քաղաքական կազմակերպութիւն է, որը պայքարում է Հարաւային Ադրբեջանի ազգի ազգային երջանկութեան համար: Այդ պայքարը քաղաքական և քաղաքացիական ձևերով և ազգային մտայնութեան ու փիլիսոփայութեան երեք հիմնական և իսկական տարրի վրայ է հիմնուած, որոնք են **թուրքականութիւնը, արդիականութիւնը և մտքի ազատութիւնը**¹⁶²:

«Թուրքականութիւն նշանակում է սիրել թուրք ազգը և աշխատել նրա բարձրացման համար»¹⁶³: Պատմական, ընկերային և մշակութային տեսակէտից Ադրբեջանի թուրք ազգի մեծամասնութիւնը տեղ է գրաւում թուրք ազգային խմբում...Այս ծրագրում թուրքականութիւն ասելով մենք նկատի ունենք ադրբեջանական թուրքականութիւնը: Թուրքականութիւնը ոչ թէ քաղաքական մտայնութիւն է, այլ համարում է մշակութային ձգտում և մի ճանապարհ նորարարութեան ու արդիականութեան համար... Թուրքականութիւնը ինքնավստահութեան ու ազգային հպարտութեան ձևաւորման իրական գործօնն է Ադրբեջանի թուրք ազգի մօտ...Ադրբեջանի թուրք ազգի մշակոյթը աշխարհի ազգերի ամենազեղեցիկ, ամենահարուստ մշակոյթների շարքում է...

Քաղաքակարթութիւնը, մարդկային հասարակութեան արելակերպի, մտածելաձևի ու տեսակի դրսևորումն է... Թէև մարդկային քաղաքակրթութեան զարգացումը սկսել է շումերա-

¹⁶² Ընդգծումը բնագրից է:

¹⁶³ Բնագրում դրուած է չակերտների մէջ:

կան շրջանից, սակայն ներկայիս այդ քաղաքակրթությունը Արևմտեան աշխարհում է իր զարգացման գագաթնակետին հասել... Արդիականությունը առաջացել է մի շարք գործոններից, որոնք են տնտեսությունը, ճարտարարուեստը, քաղաքաբնակությունը, գեղարուեստը, բանականությունը, աշխարհականությունը, ժողովրդավարությունը և մարդասիրությունը... ԵնիգԱՄՈՂ կազմակերպության տեսակետից զարգացում չի նշանակում արևմտականացում, այլ հալատք նորագոյն քաղաքակրթության երեք հիմնական սկզբունքներին, այսինքն՝ ինքնահիմն բանականություն, ընկերային աշխարհականություն և քաղաքական բազմակարծություն... ԵնիգԱՄՈՂ կազմակերպությունը նպատակադրել է ստեղծել ու հիմնել Հարավային Ադրբեջանի ազգի համար այդ հասարակությունը և կեանքի այդ պայմանները՝ հիմնուած ազգային սկզբունքների ու չափանիշերի վրայ:

Մարդիկ երջանկության ու բարօրության համար են ընտրում մի կրօն: Պարզ է, որ եթէ մի կրօն չունի կարողութեն՝ մարդուն կամ հասարակությանը երջանկացնելու, խղճի ու մտքի հիման վրայ կարելի է այն դէն դնել... ԵնիգԱՄՈՂ կազմակերպությունը իրաքանչիւր մարդու մտքի ազատութեանը, որպէս հիմնարար սկզբունքի, վճռականօրէն հաւատում է... Մեր կարծիքով իրաքանչիւր մարդ ազատ է իր ճակատագիրը տնօրինելու իր ձեռքով: Մարդու իրաւունքների համաշխարհային սկզբունքների հիմամբ որևէ պետութիւն չի կարող մարդու մտքի ազատութիւնը մերժել, և սա իրաքանչիւր մարդու բնական ու հիմնական իրաւունքների շարքում է... Բոլոր մարդիկ, անկախ նրանց կրօնից ու դաւանանքից, հաւասար են:

Ազգային մտածողութեան այս երեք հիմնարար սկզբունքները խորհրդանշական կերպով արտացոլուած են

Հարաւային Ադրբեջանի ազգային դրօշում: ԵնիԳԱՄՈՀ-ի հիմնական թիրախը այդ երեք սկզբունքների հիման վրայ ազգային երջանկութեան ապահովումն է Հարաւային Ադրբեջանի ազգի համար... Այդ հիմնական նպատակին հասնելու համար մենք ռազմավարական այս երեք նպատակներն ենք մեր առջև դրել:

ա. Ազգային ինքնութիւն: Թուրքականութեան մտայնութեան հենքի վրայ հասարակութեան բարձրացումը և նրա մշակութային հիմնաշէնքի հզօրացումը նաև Հարաւային Ադրբեջանի ազգի մէջ ինքնավստահութեան զգացում առաջացնելն է, որպէսզի այդ ազգի քաղաքական ու քաղաքացիական գոյութիւնը աշխարհի այլ ազգերի ու պետութիւնների կողմից պաշտօնապէս ճանաչուի:

բ. Ազգային բարօրութիւն և զարգացում: Մենք հետապնդում ենք զարգացում տնտեսութեան, քաղաքականութեան և ընկերային ոլորտներում: Մենք նաև Հարաւային Ադրբեջանի ազգի համար պահանջում ենք մարդու իրաւունքների միջազգային հռչակագրերում նշուած արդիական սկզբունքների և անհատական ու ընկերային ազատութիւնների հիման վրայ կեանք և ընկերային արդարութիւն:

գ. Ազգային անվտանգութիւն: Մենք ուզում ենք Հարաւային Ադրբեջանի ազգի ազգային անվտանգութեան ապահովումն ու պահպանումը ընկերային, տնտեսական, մշակութային և բնական պաշարների ոլորտներում և ազգային, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում խաղաղութեան պահպանումը: Մեր ազգը պիտի մշտապէս իր ձեռքում ունենայ իր քաղաքական ինքնորոշման ուժը... Ըստ այսմ՝ Ենի-

ԳԱՄՈՎ կազմակերպությունը այս ծրագրով ու ճշտած թիրախով վճռականորեն հաւատացած է ներքոյիշեալ սկզբունքներին¹⁶⁴.

1. Հարաւային Ադրբեջանի ազգը յարգելի է և արժանի է ազգային երջանկութեան և բաւարար ուժ ունի հասնելու այդ երջանկութեանը:

2. Հարաւային Ադրբեջանի աշխարհագրութիւնն ընդգրկում է Արագ (Արաքս – Ս.Մ.) գետի հարաւում գտնուող տարածքները: Մամալեք է Մահոռուէ անունով այդ պատմական տարածքի մէջ 1813 թ. մտնում էր նաև Ադրբեջան նահանգը: Իրանի թիրախախտների ճակատագիրը նրա բոլոր անկիւններում մեզ համար նոյնքան կարևորութիւն ունի:

3. Հարաւային Ադրբեջանի ազգային դրօշը ազգային շարժման ամենակարևոր ձեռքբերումներից մէկն է, որը միջազգային մակարդակում մեր ազգային մտածողութեան խորհրդանիշն է:

5. Ազգային զարթօնքը և ազգային պահանջների բարձրացումը հասարակութեան մէջ և քաղաքացիական պայքարը մեր ռազմավարական պայքարի հիմնական ուղեգիծն է:

7. Հաւատարիմ ՄԱԿ-ի հռչակագրերին՝ որևէ բռնութիւն, տանջանք և ահաբեկչութիւն մեր պայքարում տեղ չունի:

8. Հարաւային Ադրբեջանի տարածքներում ապրող էթնիկ բոլոր փոքրամասնութիւնները մարդու իրաւունքների միջազգային հռչակագրերում նկատի առնուած բոլոր իրաւունքներն ունեն:

10. ԵնիԳԱՄՈՎ կազմակերպութիւնը, նկատի ունենալով ազգային շահերը և համընդհանուր նպատակները, միջազգային կամ ներպետական մակարդակում ճնշման ու բռնութեան

¹⁶⁴ Նշեն, որ կայքէջի պարսկերէնով գրութիւնները, ըստ իս, խմբագրման կարիք ունեն: Թարգմանութեան գործում հաւատարիմ եմ մնացել բնագրին:

տակ գտնուող ազգերի հետ համագործակցությունը իր իրա-
տունքն է համարում»¹⁶⁵:

Կազմակերպութեան կանոնագիրը¹⁶⁶ բաղկացած է տա-
սը գլուխներից՝ Ընդհանուր սկզբունքներ, ԵնիԳԱՄՈՒՀ-ի հաւա-
տամքն ու պարտականությունները, Անդամակցություն, ԵնիԳԱ-
ՄՈՒՀ-ի անդամների իրաւունքները, ԵնիԳԱՄՈՒՀ-ի անդամների
պարտականությունները, Կարգապահական նկատառումներ, Ե-
նիԳԱՄՈՒՀ-ի քաղաքային կոմիտէներ, թաղամասերի մասնա-
ճիւղեր և արտասահմանեան ներկայացուցչություններ, Ղեկա-
վար մարմիններ, Վերահսկիչ ու ստուգիչ կոմիտէ, ԵնիԳԱՄՈՒՀ
կազմակերպութեան չեղարկում:

Ստորև՝ կանոնագրի որոշ կէտեր.

Ընդհանուր սկզբունքներ բաժինը բաղկացած է 9 կէ-
տից ու մի քանի ենթակէտից: Ներկայացնում են մի քանիսը:

«Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շար-
ժում (ԵնիԳԱՄՈՒՀ) կազմակերպութիւնը քաղաքական, ընկերա-
յին կազմակերպութիւն է, որը պայքարում է Հարաւային Ադրբե-
ջանի թուրք ազգի միասնութեան, ազգային ազատութեան, ժո-
ղովրդավարացման, յառաջադիմութեան և ընդհանուր բարօրու-
թեան համար:

ԵնիԳԱՄՈՒՀ-ն աշխատում է միջազգային օրէնքների ու
սկզբունքների և այս կանոնագրում արձանագրուած սկզբունք-
ների հիման վրայ:

ԵնիԳԱՄՈՒՀ-ը, մարդու իրաւունքների և Հարաւային
Ադրբեջանի ազգի «ինքնորոշման իրաւունքի» ձեռքբերման հա-
մար, նկատի է առել ՄԱԿ-ի համաշխարհային հռչակագիրը և
այդ կազմակերպութեան Մարդու իրաւունքների բանաձևը:

¹⁶⁵ Ծրագրի այս բաժնում առկայ է 11 կէտ, որոնցից բերում ենք 7-ը:

¹⁶⁶ <http://www.yenigamoh.com/index.php/sample-sites-2> (29.03.2017 թ.):

ԵնիԳԱՄՈՎ-ի նիւթական աղբիւրները.

- Անդամավճարներ:
- Կամաւոր կերպով տրուող նուէրներ ու օժանդակութիւններ:
- Ենթախմբերի աշխատանքներից գոյացած եկամուտներ:
- Օրինական ու իրաւաչափ տնտեսական աշխատանքներ:

ԵնիԳԱՄՈՎ-ի կենտրոնակայանը գտնուում է Հարաւային Ադրբեջանում և ապահովական նկատառումներով նրա հասցէն չի նշուում»:

ԵնիԳԱՄՈՎ-ի հաւատամքն ու պարտականութիւնները բաժինը բաղկացած է **Ենիգամոհի հիմնական նպատակները** (3 կէտ) և **Ենիգամոհի պարտականութիւնները** (5 կէտ) ենթաբաժիններից: Ստորև ներկայացւում են դրանցից որոշները:

«Հարաւային Ադրբեջանում ապրող թուրքերի միատրում և նաև ադրբեջանցի գաղթական թուրքերի և, ազգային միասնութեան ստեղծում և ազգային պայքարի ղեկավարում՝ «ինքնորոշման իրաւունքի» ձեռքբերման նպատակով:

Հարաւային Ադրբեջանի ազգի պայքարի համար միասնական ճակատի ստեղծում ընդդէմ պարսկական շովինիզմի, կրօնական ֆաշիզմի, ռասիզմի, շահագործման, բռնապետութեան, ընկերային, տնտեսական ու մշակութային խտրականութիւնների, մարդու իրաւունքների ու ազատութիւնների ոտնահարման, բռնութեան, տանջանքի ու ահաբեկչութեան:

Աշխատանք Հարաւային Ադրբեջանի ազգային յառաջադիմութեան ու բարձրացման ուղղութեամբ՝ քաղաքացիական, մշակութային, ընկերային ու տնտեսական, ազգի միասնու-

թեան, ժողովրդավարութեան, ազգային անվտանգութեան և համընդհանուր բարօրութեան ապահովման նպատակով:

Հարաւային Ադրբեջանի աշխարհագրական սահմաններում և նրանից դուրս գտնուող անձերի, խմբերի, կազմակերպութիւնների և միութիւնների համերաշխութիւն՝ միասնական սկզբունքներով:

Հարաւային Ադրբեջանի ազգային շահերի պահպանում և ազգային հպարտութեան մակարդակի բարձրացում:

Ադրբեջանական թուրքականութեան, արդիականութեան և մտքի ազատութեան քարոզչութիւն և հաստատութեանականացում ընկերային բոլոր խաւերի միջև և այդ ուղեգծի առաջնահերթութիւն և տեսութիւնների գործնականացում:

ԵնիԳԱՄՈՀ-ը, հնարաւորութիւնների ու պայմանների համապատասխան, կարող է, բացայայտ կամ ոչ բացայայտ կերպով ստեղծել հրատարակչութիւններ, հաստատութիւններ և հիմնադրամներ»:

Նշենք, որ կազմակերպութեան գլխաւոր քարտուղարը և Կենտրոնական կոմիտէի անդամները 2013 թ. դեկտեմբերին ձերբակալուել են Իրանի ազգային անվտանգութեան ուժերի կողմից: 2014 թ. մայիսին դատարանը, անօրինական խումբ ձևաւորելու և Իրանի Իսլամական Հանրապետութեան դէմ քարոզչութիւն կատարելու մեղադրանքով, նրանց դատապարտել է 9 տարուայ ազատազրկման¹⁶⁷:

Կազմակերպութեան կայքէջում 2014 թ. դեկտեմբերի 11-ին (իրանական ազարի 20, 1393 թ.) զետեղուել է գլխաւոր քարտուղար Լաթիֆ Հասանիի ստորագրութեամբ մի յօդուած՝

¹⁶⁷ <http://www.yenigamoh.com/index.php/all-category/2012-11-01-13-34-58/267-2014-01-27-09-22-05> (30.03.2017 թ.):

«Մահ կայ, վերադարձ չկայ»¹⁶⁸ վերնագրով; Յօդուածի վերնագիրը Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցութեան կարգախօսն էր: Այն հրատարակուել է 1945 թ. դեկտեմբերի 12-ի (հրանական ազարի 21, 1324 թ.) առիթով, որը Ատրպատականի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետութեան հիմնադրման օրն է:

Այդ յօդուածում Հասանին, նկարագրելով Ատրպատականի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետութեան ձեռքբերումները և գովելով նրա առաջնորդ Փիշևարիին, խօսում է այն մասին, որ Փահլիկի հարստութիւնը ճնշեց Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութեանը և տապալեց ինքնավար հանրապետութիւնը, իսկ Փահլիկիների գործը շարունակում է Իրանի Իսլամական Հանրապետութիւնը. «Այն ծառայութիւնը որ Փիշևարին մէկ տարուայ ընթացքում մատուցեց Ատրպատականին, Ռեզա Շահը 20 տարուայ ընթացքում չկատարեց»¹⁶⁹:

Հասանին համոզուած է, որ Իսլամական Հանրապետութեան իշխանութիւնները գործնական քայլեր չեն կատարում փոքրամասնութիւնների նկատմամբ առկայ քաղաքական, տնտեսական ու մշակութային խտրականութիւնների վերացման ուղղութեամբ, նրանք. «...գործնականում ապացուցել են, որ Փահլիկիների փտած նախագծի հետևորդներն են և յայտարարել են, որ լեզուի ուսուցումը էթնիկ խմբերի համար ազգային և, նոյնիսկ, տեղական անհրաժեշտութիւն էլ չէ»¹⁷⁰:

Յօդուածը աւարտում է հետևեալ կերպ. «Վերջում ցաւակցութիւն յայտնելով Հարաւային Ադրբեջանի և Քրդստանի

¹⁶⁸ <http://www.yenigamoh.com/index.php/all-category/maqale/287-2014-12-10-21-29-26> (30.03.2017 թ.):

¹⁶⁹ Նոյն տեղում:

¹⁷⁰ Նոյն տեղում:

ազգերի ցեղասպանութեան տարելիցի կապակցութեամբ՝ այդ երկու ազնիւ ազգերին ցանկանում եմ իրենց և շղթայուած բոլոր ազգերի ու էթնիկ խմբերի ազատութիւնը»¹⁷¹:

Դիտարկումներ

1. Տարբեր առիթներով խօսուում է «Հարաւային Ադրբեջանի ազգի» մասին, մինչդեռ նման ազգ գոյութիւն չունի: Ակնյայտ է, որ փորձ է արուում արհեստականօրէն կերտել նոր ազգ:

2. Ծրագրում նշուած է. «Այդ քաղաքական ու քաղաքացիական պայքարը հիմնուած է ազգային մտայնութեան ու փիլիսոփայութեան երեք հիմնական տարրերի վրայ, որոնք են թուրքականութիւնը, արդիականութիւնը և մտքի ազատութիւնը»: Յիշեցնենք, որ դրանք Չիյա Գէօքալփի առաջ քաշած պանթիփրքիզմի հիմնական սկզբունքներն են, ուրեմն կազմակերպութիւնը դաւանում է պանթիփրքական գաղափարախօսութիւն:

3. «ԵնիԳԱՄՈՎ-ը, մարդու իրաւունքների և Հարաւային Ադրբեջանի ազգի «ինքնորոշման իրաւունքի» ձեռքբերման համար, նկատի է առել ՄԱԿ-ի համաշխարհային հռչակագիրը և այդ կազմակերպութեան Մարդու իրաւունքների բանաձևը»: Այս և բազմաթիւ այլ տեղերում խօսուում է ազգային ինքնորոշման մասին, մինչդեռ, ինչպէս նշուեց, նախ՝ Հարաւային Ադրբեջանի ազգ գոյութիւն չունի, որի ազգային ինքնորոշման իրաւունքը քննարկուի և ապա՝ ազգային ինքնորոշում նշանակում է անկախութիւն, որն իր հերթին նշանակում է անջատուել իրա-

¹⁷¹ Նոյն տեղում:

նից: Այլ խօսքով՝ կազմակերպությունը անջատողական նպատակներ է հետապնդում:

Կարելի է շարունակել կազմակերպության ծրագրի ու մօտեցումների վերլուծությունը, սակայն այսքանն էլ բավական է եզրակացնելու, որ վերոյիշեալ կազմակերպությունը պանթիօրքական հակումներով կազմակերպություն է, որը հետապնդում է անջատողական նպատակներ:

Այս ծառայուն մէջբերումները Հարաւային Ադրբեջանի անկախութիւն կուսակցութիւն, Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժում և Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժում կազմակերպութիւնների ծրագրերից, կանոնագրերից ու դիրքորոշումներից յստակ պատկերացում են տալիս նրանց կազմակերպական կառոյցի, գաղափարական ակունքների, աշխարհայեացքի և նպատակների մասին: Ակնյայտ է, որ բոլորն էլ սնոււմ են Գէօքալիի և պանթիօրքիզմի այլ տեսաբանների գաղափարներից, բերում են նոյն պատմական հիմնատրուումները, Ռասուլզադէն ու Փիշկարին նրանց համար խորհրդանիշեր են, քննադատելով թէ՛ Փահլիւի և թէ՛ Իսլամական Հանրապետութեան իշխանութիւններին՝ նրանց մեղադրում են խտրականութիւն, ճնշում ու բռնութիւն կիրառելու և պանֆարսիզմի ու շովինիստական քաղաքականութեան մէջ: Այդ կազմակերպութիւնների վերջնանպատակը Իրանից անջատուելն է ու անկախանալը կամ Ադրբեջանի Հանրապետութեանը միանալը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թէև հիմնականում կենտրոնացանք իրանական ծագում ունեցող պանթիրքական կազմակերպությունների, նրանց ծրագրերի, կանոնագրերի, քաղաքական հայեացքների և գործունեության սկզբունքների վրայ, սակայն գոյություն ունեն պանթիրքական կազմակերպություններ նաև ու մանաւանդ Թուրքիայի և Ադրբեջանի հանրապետություններում:

Հետագոտող Ահմադ Քազեմին իր «Պանթիրքիզմ և պանազերիզմ»¹⁷² գրքում ներկայացնում է Ադրբեջանում և Թուրքիայում գործող պանթիրքական կուսակցություններն ու խմբերը և այն պետական կամ պետության հովանաւորութեան տակ գտնուող հաստատությունները, որոնք տարածում են պանթիրքական գաղափարներ: Նշենք դրանցից մի քանիսի անունները.

Ադրբեջանի Հանրապետությունում.

1. Ադրբեջանի Հանրապետությունից դուրս ապրող ազերիների հարցերի պետական կոմիտէ,
2. Աշխարհի ազերիների համագումար (ԴԱԿ),
3. Մեծ Ադրբեջանի համագումար,
4. Գորշ գայլեր (Բոզ Լուրդ Boz Gurd),
5. Ադրբեջանի ժողովրդական ճակատ,

¹⁷² **احمد كاظمی**، پان تركيسم و پان آذربيسم، انتشارات موسسه فرهنگي مطالعات و تحقيقات بين المللي ابرار معاصر تهران، سال ۱۳۸۵، چاپ نخست، ۲۷۳ صفحه، صفحه ۲۶-۲۷

6. Նոր Մուսաաթ կուսակցություն (YMP),
7. Ազգային ինքնորոշում կուսակցություն,
8. Միացեալ Ադրբեջանի դաշինք (ԲԱԲ) (Բիթու Ազերբայջան Բիռլիքի),
9. Ազարի 21-ի խմբակցություն
Եւ այլն:
Թուրքիայի Հանրապետությունում.

1. Ազգային շարժում,
2. Ժողովրդահանրապետական կուսակցություն,
Եւ այլն:

Ստորև կը ներկայացնեն համառոտ տեղեկություններ այդ կազմակերպություններից մի քանիսի մասին՝ ընդհանուր պատկերացում տալու համար նրանց նպատակների ու գործունեության վերաբերեալ և ցոյց տալու համար նրանց առնուազն գաղափարական կապը իրանական պանթիւրքակական կազմակերպությունների հետ:

Ադրբեջանի Հանրապետությունից դուրս ապրող ազերիների հարցերի պետական կոմիտէ

Հիմնադրուել է 2005 թ. յուլիսի 5-ին Հէյդար Ալիևի հրամանով: Այն համազօր է նախարարության, որն ապացոյցն է այն կարևորութեան, որ Ադրբեջանի Հանրապետութեան կառավարութիւնը տալիս է այս հաստատութեանը: Ըստ Կոմիտէի ղեկավարի՝ աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունի ազերիական 300 կազմակերպութիւն:

Այս Կոմիտէի նպատակներից են՝ այլ երկրներում գործող ազերիական կազմակերպությունների հետ կապերի հաստա-

տում, միասնական գաղափարախօսության ձևաւորում, այլ երկրներում ապրող ազերիներին օգնութիւն տրամադրում, որպէսզի ընտրուեն բնակութեան երկրների խորհրդարաններում, ազերիական լրբբի կազմակերպում ընդդէմ հայկական լրբբի:

Աշխատանքն իրականացում է երկու ձևով. մէկը՝ դեսպանատների միջոցով, որտեղ գոյութիւն ունեն ազերիների հարցերի գծով կցորդներ (Կոմիտէի գրասենեակ), և երկրորդ՝ տարբեր երկրներում բնակուող անհատների միջոցով:

Նշելի է, որ 2002 թ. նոյեմբերի 29-ին ընդունուեց օրէնք՝ «Ադրբեջանի Հանրապետութեան կառավարութեան քաղաքականութիւնը այլ երկրներում բնակուող ադրբեջանցիների վերաբերեալ», որով կարգաւորում են աշխատանքները: Այդ օրէնքով շեշտ է դրուել Ադրբեջանից դուրս ապրող ադրբեջանցիների համայնքների կազմակերպման և պետական մակարդակով նրանց հետ կապ հաստատելու և պետական համապատասխան մարմինների պարտականութիւնների վրայ: Ի դէպ՝ կոմիտէի կազմաւորումը յաջորդել է այս օրէնքի ընդունմանը:

Ադրբեջանի Հանրապետութիւնից դուրս ապրող ազերիների հարցերի պետական կոմիտէն կազմակերպում է աշխարհի ազերիների հաւաքներ: Առաջինը գումարուել է 2001 թ. նոյեմբերին: Երկրորդը՝ 2006 թ. մարտին: Երկուսն էլ Բաքում:

Կոմիտէն ամէն տարի նշում է դեկտեմբերի 31-ը որպէս աշխարհի ազերիների համերաշխութեան օր և այդ առիթով կազմակերպում տարբեր միջոցառումներ, օրինակ՝ շարադրութեան մրցոյթ Ադրբեջանից դուրս ապրող ազերիների երեխաների և երիտասարդների համար:

Աշխարհի ազերիների համագումար (ԴԱԿ)

Համագումարի աշխատանքների մեծ մասը կենտրոնացած է Իրանի վրայ: Այն սերտ կապեր ունի Ադրբեջանի Հանրապետությանից դուրս ապրող ազերիների հարցերի պետական կոմիտեի և Միացեալ Ադրբեջանի դաշինք կազմակերպության հետ: Գործունէութեան գլխաւոր կենտրոններից է Շուեդիան:

Համագումարն արտացոլում է ԳԱՄՈՀ կազմակերպութեան ղեկավար Մահմուդ Ալի Չեհոեզանիի դիրքորոշումները: Նախագահը Ջաւադ Դեռախթին է:

Համագումարի կազմակերպած հաւաքներին մասնակցող պատուիրակութիւնների մէջ կան Իրանի քաղաքացիներ, ովքեր ապրում են օտար երկրներում՝ յատկապէս Լրոպական:

Համագումարի նպատակներից մէկը Իրանի ազերիների իրաւունքների, այսպէս սասած, ոտնահարման փաստերի մասին միջազգային կազմակերպութիւններին և Արևմտեան երկրներին տեղեակ պահելն ու բողոքներ ներկայացնելն է: Կազմակերպուել է ստորագրահաւաք, և բազմաթիւ բողոքագրեր են ներկայացուել տարբեր միջազգային կազմակերպութիւնների: Այս աշխատանքների համադրողն է Ահմադ Ուբալին:

2001 թ. Ահմադ Ուբալին հանդիպում է ունեցել ԱՄՆ Պետքարտուղարութեան Իրանի բաժնի վարիչ Ջուանա Լևիսոնի հետ, որի ընթացքում արծարծել է Իրանի Ատրպատականի հարցերը: Դրանք են՝ 30 միլիոն ազերիների իրաւունքների ոտնահարում, Իրանում ազերի լեզուի նկատմամբ սահմանափակումներ, ադրբեջանցիներին պատկանող պատմական յուշակոթողների ոչնչացում, աշխարհագրական անունների պարսկականացում և մամուլի անազատութիւն: Ամերիկացի պաշտօ-

նեան փոխանցել է Համագումարի հետ յարաբերությունները սերտացնելու վերաբերեալ ԱՄՆ-ի ցանկությունը¹⁷³:

Թուրքիան հովանաւորում է Համագումարը, սակայն, ելնելով իր շահերից, ժամանակ առ ժամանակ նուազեցնում կամ ուժեղացնում է հովանաւորութեան չափը: Օրինակ՝ 2002 թ. Թուրքիայի իշխանութիւնը, խախտելով իր տուած խոստումը, ոչ միայն թոյլ չտուեց, որ Համագումարի հերթական ժողովը տեղի ունենայ Թուրքիայում, այլ նոյնիսկ Թուրքիա մուտքի արտօնագիր չտուեց Համագումարի Գործադիր խորհրդին, որպէսզի նիստ գումարի Թուրքիայում: Այդ պատճառով էլ յայտարարուեց, որ այն տեղի է ունենալու Դանիայում: Շուեդիայում Թուրքիայի դեսպանն այդ կապակցութեամբ յայտարարեց, որ պատճառը Անկարայի տարածաշրջանային շահերն են: Եթէ Թուրքիան նման բան թոյլ տայ, ապա փոխադարձաբար Իրանն էլ կսկսի հովանաւորել Քրդստանի բանուորական կուսակցութեանը¹⁷⁴:

Համագումարի անդամներն ամէն տարի Շուշիի, այսպէս կոչուած, «գրաման» օրը հաւաք են կազմակերպում Շուեդիայում¹⁷⁵:

Թէև Ադրբեջանի իշխանութիւնը յայտարարում է, որ որևէ կապ չունի Համագումարի հետ, սակայն Ադրբեջանի Հանրապետութեան խորհրդարանի պատգամաւորներից ոմանք Համագումարի Գործադիր խորհրդի անդամ են: Օրինակ՝ Էդրալ Աղազադէն, ով նաև օժանդակել է Չեռեզանիի կրոպական ճանապարհորդութիւնների կազմակերպմանը, կամ վե-

احمد کاظمی، پان ترکیسم و پان آدریسم، انتشارات موسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ابرار ۱۳۸۵، چاپ نخست، ۲۷۳ صفحه، صفحه ۸۵ معاصر تهران، سال ۱۳۸۵، چاپ نخست، ۲۷۳ صفحه، صفحه ۸۵

¹⁷⁴ Նոյն տեղում:

¹⁷⁵ Նոյն տեղում:

րոնշեալ Զաւադ Դեռախօին, ով կազմակերպել է Չեռնոբանիի ևրոպական ճանապարհորդութիւններն ու հանդիպումները¹⁷⁶:

Այն հարցին, թէ ի՞նչ կարծիք ունի Համագումարը Հարաւային Ադրբեջանի վերաբերեալ՝ արդեօք անկախութեա՞ն կողմնակից է, թէ՞ Ադրբեջանի Հանրապետութեան հետ միատրման, Էդրալ Աղազադէն, պատասխանել է. «Համագումարը կողմնակից է ադրբեջանցիների իրաւունքները նրանց վերադարձնելուն: Դրանից յետոյ է, որ նրանք կորոշեն՝ ինչ ճանապարհ որդեգրել»¹⁷⁷:

Համագումարը համագործակցում է մի շարք կազմակերպութիւնների հետ, ինչպէս Միացեալ Ադրբեջանի դաշինք¹⁷⁸, Արևմտեան Ադրբեջանի միջազգային հաւաքականութիւն և այլն: Այս վերջինը բաղկացած է Հայաստանից արտագաղթած ադրբեջանցիներից:

Մեծ Ադրբեջանի համագումար

Հիմնադրուել է 2001 թ. Արևմտեան Ադրբեջանի ազատագրութեան շարժում և 19 այլ կազմակերպութիւնների դաշինքից: Վերջիններս իրենց կապուած են համարում Արևմտեան Ադրբեջանի հետ: Համագումարի ղեկավարը Ռահիմ Բաղիրովն է, ով նաև Արևմտեան Ադրբեջանի ազատագրութեան շարժման ղեկավարն է: Համագումարի նպատակն է ստեղծել Մեծ Ադրբեջան, որն ընդգրկելու է շրջաններ Ռուսաստանից, Հայաստանից և Իրանից: Յայտարարել են, որ ներկայում իրենց պայքա-

¹⁷⁶ Նոյն տեղում:

¹⁷⁷ Նոյն տեղում:

¹⁷⁸ Նոյն տեղում:

րի առանցքը Լեռնային Ղարաբաղի «բռնագրաւուած»¹⁷⁹ տարածքների ազատագրումն է: Նրանք համագործակցում են վերը նշուած կազմակերպութիւնների և Ադրբեջանի Հանրապետութիւնից դուրս ապրող ազերիների հարցերի պետական կոմիտէի հետ: Անդամների թիւը չի անցնում հարիւր հոգին¹⁸⁰:

Գորշ գայլեր (Boz Gurd)

Ադրբեջանի Հանրապետութիւնում յայտնի է նաև որպէս Ադրբեջանի ազգային ժողովրդավարական կուսակցութիւն (Azerbaijan National Democratic Party): 2006 թ. դրութեամբ կազմակերպութեան ղեկավարը Իսկանդար Համիդովն էր, ով 1993թ.՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցութեան իշխանութեան ժամանակ, երբ Քարվաճառը (Քելբաջար) ազատագրուեց, Ադրբեջանի Հանրապետութեան ներքին գործոց նախարարն էր և պարտաւորուեց հրաժարական տալ: Ոմանք Գորշ գայլերին համարում են կուսակցութիւն, ոմանք էլ՝ միջազգային կազմակերպութիւն՝ նկատի ունենալով, որ մասնաճիւղեր ունի Ուզբեկստանում և Թուրքիայում. կենտրոնը գտնուում է Ստամբուլում: Այն կապ ունի Ալիարսլան Թուրքէշի ղեկավարած Թուրքիայի Գորշ գայլեր կազմակերպութեան հետ: Այս կուսակցութիւնը ձգտում է վերադառնալ թուրանցիների ժամանակների: Այն հետևորդներ ունի պատերազմի պատճառով Ղարաբաղից գաղթածների մէջ¹⁸¹:

¹⁷⁹ Չակերտները մեր կողմից են:

¹⁸⁰ Նոյն տեղում, էջ 87:

¹⁸¹ Նոյն տեղում, էջ 98:

Ադրբեջանի Ժողովրդական Ճակատ

1985 թ. գորբաչովեան հրապարակայնութեան հռչակումով հիմնուեցին գրական և պատմական հարցեր քննարկող կազմակերպութիւններ, որոնցից որոշները հետագայում վերածուեցին քաղաքական կուսակցութիւնների: Դրանցից մէկն է Ադրբեջանի Ժողովրդական ճակատը (Azerbaijan Xalq Cabhasi), որը 1989 թ. բացայայտեց իր գործունէութիւնը: Ադրբեջանի Ժողովրդական ճակատի ղեկավարն էր Աբուլֆազլ Էլչիբէյը: Կուսակցութեան կարծիքով Հայաստանի կողմից Ղարաբաղի հայերին պաշտպանելու պատճառներից մէկը հայ ազգայնականների ձգտումն էր՝ իրականացնել Մեծ Հայաստանի գաղափարը (ծովից ծով՝ Սև ծովից Կասպից ծով)¹⁸²:

1992 թ. կուսակցութեան ղեկավար Էլչիբէյը Հանրապետութեան առաջին նախագահական ընտրութիւններում ընտրուեց երկրի նախագահ: «Ազատիդ» և «Ջոմհուրիյեթ» թերթերը կուսակցութեան պաշտօնաթերթերն են: Էլչիբէյը յիշում է որպէս Ադրբեջանի ազգային դիմադրական շարժման առաջնորդ:

Նշենք, որ Ադրբեջանի Ժողովրդական ճակատ կուսակցութիւնը 2001 թ. իր առաջնորդ Աբուլֆազլ Էլչիբէյի մահուանից յետոյ երեք մասի բաժանուեց:

Ադրբեջանի Ժողովրդական ճակատ կուսակցութեան քաղաքական և տնտեսական չորս գլխաւոր ուղղութիւններն են աշխարհիկութիւնը (լայիզմ) և իսլամական սկզբունքներին ընդդիմանալը, պանթուրքիզմը, ազատ շուկայական յարաբերութիւնները, պանթուրանիզմը և միացեալ Ադրբեջանի ստեղծումը:

¹⁸² Նոյն տեղում, էջ 100:

Կուսակցութեան ծայրայեղական մօտեցումները պատճառ են դարձել, որ նոյնիսկ պանազերիական այլ կուսակցութիւններ քննադատութեան ենթարկեն նրան: Կուսակցութիւնն ունի հակաիրանական դիրքորոշումներ և բազմիցս Իրանի կառավարութեանը մեղադրել է Իրանի ազերիների տարրական իրաւունքների ոտնահարման մէջ:

Կուսակցութիւնը սերտ կապեր ունի ԱՄՆ-ի պետական-քաղաքական շրջանակների հետ:

Նոր Մուսաւաթ կուսակցութիւն (YMP)¹⁸³

Մուսաւաթ կուսակցութիւնն ստեղծուել է 1992 թ. Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցութեան մասնատման հետևանքով: Այն իրեն համարում է Մոհամմադ Ամին Ռասուլզադէի Մուսաւաթ կուսակցութեան հետնորդը, որը 1918 թ. հիմնադրեց Ադրբեջանի Հանրապետութիւնը: Ենի Մուսաւաթ (Նոր Մուսաւաթ) կուսակցութիւնը յայտարարում է, որ 1920 թուականից, այսինքն՝ Ադրբեջանի Հանրապետութեան խորհրդայնացումից յետոյ շարունակել է ընդհատակեայ աշխատանքը Ադրբեջանում: Կուսակցութեան ղեկավարն է Իսա Ղամբարը, որը 1992-93 թթ. Ադրբեջանի Հանրապետութեան խորհրդարանի նախագահն է եղել: Ներկայում ընդդիմութիւն է: Կուսակցութեան պաշտօնաթերթն է «Ենի Մուսաւաթը»: <http://525.az/site/> կայքը ևս արտացոլում է կուսակցութեան տեսակէտները:

Թուրան գործակալութեան տնօրէն Մեհման Ջաւադօղլուն Մուսաւաթ կուսակցութեան կարկառուն դէմքերից է:

¹⁸³[http://musavat.org.az/\(05.04.2017\)](http://musavat.org.az/(05.04.2017)) եւ [http://www.musavat.az/\(05.04.2017\);](http://www.musavat.az/(05.04.2017);)

Նոր Մուսաաթը, Ադրբեջանի ընդդիմադիր որոշ այլ կուսակցությունների նման, քննադատում է Իրանին՝ նրան ամբաստանելով Իրանի ազերիների իրաւունքները ոտնահարելու մէջ:

2002 թ. կուսակցութեան ղեկավար Իսա Ղամբարը և ԳԱՄՈՀ կազմակերպութեան ղեկավար Չեհեբգանին հանդիպել են միմեանց, որի ժամանակ Ղամբարն ասել է. «Հարաւային Ադրբեջանի խնդիրը նոյնիսկ խորհրդային տարիներին էլ Ադրբեջանում գոյութիւն ունէր, և այն ժամանակ ադրբեջանցի որոշ գրողներ ու բանաստեղծներ իրենց ստեղծագործութիւնները նուիրում էին Հարաւային Ադրբեջանին, ինչպէս Սուլէյման Ռուստամը, Բախտիար Վահաբզադէն և այլք: Այս շարժման հէնց առաջին իսկ օրուանից մենք արծարծել ենք Միացեալ Ադրբեջանի գաղափարը: Այդ գաղափարն արտացոլուած է Մուսաաթ կուսակցութեան ծրագրում, և մենք աշխատում ենք այդ ուղղութեամբ: Մեզ համար հպարտութեան առիթ է, որ «հերոս Թաւրիզն» էլ իր առաջնորդին աճեցրեց: Այսօր Սաթթառ Խանի, Խիաբանիի, Ռասուլզադէի, Փիշևարիի և Էլչիբեյի անունների կողքին յիշատակում են նաև Չեհեբգանիի անունը: Չեհեբգանին Միացեալ Ադրբեջանի գաղափարի մեծ ռահուրան է: Նա Հարաւային Ադրբեջանի հարցը բարձրացրել է միջազգային մակարդակի և ազգային ազատագրական շարժման զարգացման մէջ մեծ դեր է ունեցել: Մենք յոյսով ենք, որ մեր գաղափարները Հարաւային Ադրբեջանում էլ կիրականան, և կը գայ այն օրը, երբ երկու Ադրբեջանների միաւորումը կը տօնենք Թաւրիզում և Բաքում»¹⁸⁴:

احمد کاظمی، پان ترکیسم و پان آذربیسیم، انتشارات موسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ابرار ۱۰۵-۱۰۶ صفحه، صفحه ۲۷۳، چاپ نخست، سال ۱۳۸۵، معاصر تهران،

Իսա Ղամբարը բազմիցս է եղել Թուրքիայում, որը համարում է իր հայրենիքը: Մուսաաթ կուսակցությունը սերտ կապեր ունի ԱՄՆ-ի հետ:

Ազգային ինքնորոշում կուսակցություն¹⁸⁵

Ազգային ինքնորոշում կուսակցությունն ընդդիմություն է: Ղեկավարը՝ Էթեբար Սարդար Օղլու Մոհամեդովը, Ադրբեջանի ժողովրդական ճակատի հիմնադիրներից է: Կուսակցության պաշտոնաթերթը «Մելլաթ»-ն է («Ազգ»):

Ազգայնական գաղափարների կրող է, ընդունում է ազատ շուկայական յարաբերություններն ու տնտեսական բարեփոխումները: Անդամների մի մասը Հայաստանից գաղթած ադրբեջանցիներ են:

Արևմտամետ կուսակցություն է, որը հակուած է Ռուսաստանից Ադրբեջանի հեռանալուն: Դէմ էր ազերի լեզուի կիրիլիցա այբուբենը լատինական այբուբենով փոխելուն, որը վաւերացուեց Ադրբեջանի խորհրդարանի կողմից 1992 թ.:

Կուսակցութիւնը դէմ է ազերի թուրքի ինքնութիւնը օսմանցի թուրքի ինքնութեամբ փոխարինելուն, ինչը հովանաւորում է թրքամէտ շրջանակների կողմից, ինչպիսին է Ադրբեջանի ժողովրդական ճակատը: Կուսակցութիւնը դա համարում է ազգային շահերին հակառակ:

Թուրքիայի և Ադրբեջանի հանրապետութիւնների միջև համադաշնութիւն կազմելու գաղափարին դէմ արտայայտուեց կուսակցութեան ղեկավար Էթեբար Մոհամեդովը և այն համա-

¹⁸⁵ Նոյն տեղում, էջ 108:

րեց նորանկախ հանրապետության անկախութեանը հակառակ:

Այս կուսակցութեան պանթիօրքական հակումներն աւելի քիչ են Ադրբեջանի ժողովրդական ճակատ կամ Մուսաաթ կուսակցութիւնների համեմատութեամբ, սակայն այս կուսակցութիւնն աւելի շատ պանազերիական հակումներ ունի: Կուսակցութեան ղեկավարը երկու ադրբեջանների միաւորման կողմնակից է և բազմիցս Չեհեզգանիին հրաւիրել է Ադրբեջան և երբեմն նոյնիսկ նրանից աւելի սուր դիրքորոշումներ յայտնել:

2002 թ. հեռարձակուած մի հաղորդման ընթացքում Չեհեզգանին և Մոհամեդովը վէճի են բռնուում: Չեհեզգանին յայտնում է, որ դէմ է երկու ադրբեջանների միաւորմանը. «Մեր ազգային գիտակցութիւնը նորածին երեխայի է նման, որը դեռ անհրաժեշտ հասունութեան չի հասել: Թւորքիան, Ադրբեջանն ու Եւրոպան այսօր դէմ են Իրանի մասնատմանը: Մենք նոյնիսկ Ղարաբաղը ազատագրելու ուժ չունենք»: Ի պատասխան՝ Մոհամեդովն ասում է. «Եթէ դուք ասում էք, որ այս ազգը 180 տարի է, ինչ քնած է, ես պիտի ասեմ՝ շատ էք սխալուում: Մենք Հիւսիսային Ադրբեջանում երբ մտածում էինք անկախութեան մասին, յիշում էինք Սաթթառ խանին ու Խիաբանիին: Դուք Հիւսիսային Ադրբեջանի իշխանութեան մասին վիրաւորական բառեր էք գործածում: Մեծ Ադրբեջան կազմելու համար մենք Թւորքիայի, Ռուսաստանի և Վրաստանի թոյլտուութեան կարիքը չունենք»: Չեհեզգանին հակադարձում է. «Ձեր անկախականութիւնը նշանակում է կախաղանին յանձնել Իրանի մասնատման գաղափարի մարտիկներին: Հարաւիցիներն ապրում են 300,000 կմ² տարածութեան վրայ: Դուք հարաւը չէք ճանաչում: Ռուսաստանին, Իրանին և Հայաստանին մեր դէմ գրգռելու կարիք

չկայ: Ես դրան դէմ եմ: Մենք ո՞ր ուժով ենք սրանց դէմ մարտի գնում և Ղարաբաղն ազատագրում»¹⁸⁶:

Միացեալ Ադրբեջանի դաշինք (ԲԱԲ) (Բիթու Ազերբայջան բիւլիքի)

Կուսակցութեան հիմնական աշխատանքն ուղղուած է Իրանի դէմ: Նպատակ է հետապնդում միաւորել Հիսիսային և Հարաւային Ադրբեջանները: Հիմնադրուել է Ադրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավար Աբուլֆազլ Էջիբէյի կողմից: Էլ-ջիբէյի մահից յետոյ կազմակերպութեան մէջ երկպառակտութիւն է սկսուել, որի պատճառով այն թուլացել է:

2006 թ. դրութեամբ այս կազմակերպութիւնը ղեկավարում էր Իրանի քաղաքացի, փախստական Ֆիրուզ Դիլիւնջին: Կազմակերպութեան պատասխանատուներից են Չանգիզ Գոյթուրքը, Ջահանդառ Բիգօղլին, Ջաւադ Էսմայիլին, Ռէյիս Ռասուլզադէն, Սէյէդ Ահմադ Ահմադովը, Եաշար Քալանթարլին: Ըստ վերջինիս յայտարարութեան՝ կազմակերպութիւնն ունի 2250 անդամ:

Կուսակցութեան խնդիրներից մէկը ԳԱՄՈՀ-ի ղեկավար Չեհռեգանիին որպէս Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի ղեկավար ներկայացնելն է: Բաքում՝ Իրանի դեսպանատան, և Նախիջևանում՝ Իրանի հիւպատոսարանի առջև կազմակերպել է հաւաքներ, որոնցում Իրանի իշխանութեանը ներկայացրել է հետևեալ պահանջները՝ ճանաչել Ադրբեջանի հողային ամբողջականութիւնը, յարգել Կասպից ծովում Ադրբեջանի Հանրապետութեան իրաւունքները, վերջ տալ հակաադրբե-

¹⁸⁶ Նոյն տեղում, էջ 109:

ջանական քարոզչութեանը, վերջ տալ Հայաստանի հետ յարաբերութիւններին մինչև Ղարաբաղի ազատագրումը: Հիմնել է նաև Հարաւային Ադրբեջանի խորհրդարան, որի նախագահն է Ալլան Խալեդին¹⁸⁷:

Կուսակցութիւնն իր աշխատանքները սաստկացրել է Նախիջևանում: Ֆարաջ Իսեֆբիգլին, ով Նախիջևանում Միացեալ Ադրբեջան դաշինքի գրասենեակի պատասխանատուն է, միաժամանակ Նախիջևանի խորհրդարանի պատգամաւոր է:

Դաշինքը սերտ կապեր ունի Թուրքիայի Ազգային շարժում կուսակցութեան Ալփարսլան Թուրքէշ հիմնադրամի հետ:

Ադրբեջանի իշխանութիւնը ցարդ որևէ քայլ չի ձեռնարկել այս կազմակերպութեան գործունէութեան դէմ: Պատճառն այն է, որ Ադրբեջանի իշխանութեանը ձեռնտու է Նախիջևանում պանթիքթական հակումների սաստկացումը, որպէսզի Նախիջևանի ժողովուրդը, որը տնտեսական կապեր ունի Իրանի հետ, կախուածութեան մէջ չընկնի Իրանից:

Դաշինքի անդամներից Ֆարաջ Ղոլիևը յայտարարել է. «Ռուսաստանն ու Իրանն են Ադրբեջանը բաժանել ... Իրանը կայսրութիւն է ... որը անվնաս դարձնելու համար պիտի մասնատել ... ուզում ենք, որ այս խնդիրը Իրանում հոլովոյթով իրականանայ: Չեհոեզանիի տեսակէտն էլ դա է... Էլչիբէյի իշխանութեան օրոք մեր հարաւի հայրենակիցները կառավարութեան մէջ ներկայացուցիչներ ունէին...»:

Միացեալ Ադրբեջան դաշինքի առաջին գրասենեակը բացուեց Շուեդիայում Ազար Հէյարդիզիի գլխաւորութեամբ, ով Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժման խորհրդականներից էր:

¹⁸⁷ Նոյն տեղում, էջ 111-113:

Ազարի 21-ի խմբակցություն

Ադրբեջանի դեմոկրատական խմբակցության անդամներից ու մնացորդացից կազմուած խմբակցություն է, որի ղեկավարն է Բեհուդ Հադին: Խմբակցությունը քարոզում է Ջաֆար Փիշևարիի տեսակետները և տարածում անջատողական գաղափարներ: Աշխատում է թե՛ Ադրբեջանում և թե՛ Նախիջևանում:

Ամէն տարի ազարի 21-ին խմբակցության անդամները հաւաքում են Փիշևարիի գերեզմանի մօտ: Նրանք Չեհեզգանիին յայտարարել են Փիշևարիի ուղու շարունակողը:

Խմբակցությունը յայտարարում է, որ Հէյդար Ալիևը թե՛ խորհրդային և թե՛ Ադրբեջանի անկախության տարիներին մեծ ու կարևոր դեր է ունեցել հարաւի խնդրի արծարծման հարցում:

Ամէն տարի Ադրբեջանի հեռուստակայանները ազարի 21-ի տարելիցի կապակցութեամբ հաղորդումներ են սփռում և ցոյց տալիս, որ իբր Իրանի Ատրպատականի ժողովուրդը մի ճնշուած ժողովուրդ է, որը զրկուած է նոյնիսկ ամենատարրական իրաւունքներից: Իրանական 1324 թ. ազար ամսուայ 21-ը (12 դեկտեմբեր, 1945 թ.) համարում են Հարաւային Ադրբեջանում ազգային իշխանութեան կազմաւորման օր:

ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ

Ազգայնական շարժում կուսակցություն (MHP)

Հիմնադրուել է 1969 թ. Ալիարսլան Թուրքէշի կողմից: Հետևորդները յայտնի են որպէս գորշ գայլեր: Պանթուրքական և աջ ծայրայեղական կուսակցություն է: Թուրքէշի մահուանից յետոյ մի քանի մասի բաժանուեց: Թէև վերջին տարիներին քեմալական աշխարհականութիւնից թեքուել է դէպի իսլամականութիւն և ընդունում է խորհրդարանական ժողովրդավարութիւնը, սակայն բազմաթիւ հետազոտողներ դա կասկածի տակ են առնում և այն կարծիքին են, որ արդիական և ժողովրդավարամէտ քողի ներքոյ թաքնուած են կուսակցութեան ֆաշիստական նկրտումները:

Ժողովրդահանրապետական կուսակցություն (CHP)

Հիմնադրուել է 1923 թ. Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի կողմից: Ձախ հայեացքներ ունեցող ազգայնական-պանթուրքական կուսակցություն է: Իրեն համարում է Աթաթուրքի գաղափարների ժառանգորդն ու շարունակողը: Թուրքիայի խորհրդարանի՝ թուով երկրորդ կուսակցութիւնն է: Գաղափարախօսութիւնը հիմնուած է քեմալականութեան վեց սկզբունքների վրայ՝ հանրապետականութիւն, ազգայնականութիւն, էտատիզմ, աշխարհիկութիւն, յեղափոխականութիւն և պոպուլիզմ:

Ադրբեջանի և Թուրքիայի Հանրապետություններում գործող վերոյիշեալ (և չիշատակուած) պանթիւրքական կազմակերպութիւնների գաղափարախօսութիւնների մէջ ակնյայտ են հետևեալ ընդհանրութիւնները.

1. Անխտիր բոլորի համար գաղափարական հիմք են հանդիսանում Գէօքալփի և պանթիւրքիզմի միա տեսաբանների հիմնարար գաղափարները:
2. Բոլորը, բացայայտ կամ քողարկուած, ձգտում են, այսպէս կոչուած, Հարաւային Ադրբեջանի անկախութեանը:
3. Բոլորը խօսում են թէ՛ Փահլևի շրջանի, թէ՛ Իսլամական Հանրապետութեան շրջանի Իրանում ապրող, այսպէս կոչուած, այլ ազգերի նկատմամբ կիրառուած ճնշումների ու խտրականութեան մասին:
4. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան հիմնադիր Մոհամմադ Ամին Ռասուլզադէն և Ադրբեջանի Ինքնավար Հանրապետութեան հիմնադիր Միր Զաֆար Փիշկարին բոլորի համար խորհրդանշական արժէք ունեն:

Եւ այլն:

Հիմնական տարբերութիւնները նկատելի են հետևեալ հարցերում.

1. Որոշները երազում են Հիւսիսային ու Հարաւային Ադրբեջանների միացումը, իսկ որոշներն էլ դրան ակելացնում են Արևմտեան Ադրբեջանն ու Ռուսաստանի որոշ տարածքներ:
2. Որոշները խօսում են Թուրքիայի Հանրապետութեան հետ համադաշնութիւն կազմելու մասին, որոշները դա մերժում են:

3. Որոշները զինեալ պայքարն ընդունում են որպէս անկախութեան հասնելու միջոց, որոշները խօսում են ժողովրդավարական միջոցների մասին:

Եւ այլն:

Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ տարբերութիւնները սկզբունքային չեն, իսկ տարակարծութիւնները չափազանց քիչ են: Որպէս օրինակ կարելի է նշել Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժումը և Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժումը, որոնք նախապէս եղել են մէկ կազմակերպութիւն և հետագայում ղեկավարութեան մէջ հարցեր են առաջացել, որոնց պատճառով մի խումբ առանձնացել և հիմնել է նոր շարժում կազմակերպութիւնը: Երկու կազմակերպութիւնների ծրագրերի համեմատութիւնը ցոյց է տալիս, որ դրանց միջև սկզբունքային տարբերութիւն գոյութիւն չունի: Վիճակը գրեթէ նոյնն է միւս կազմակերպութիւնների հարցում:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՊԱՆԹԻԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Անվիճելի ճշմարտություն է, որ եթե որևէ կազմակերպություն դաանում է պանթիրքական գաղափարներ, ապա այն չի կարող հաշտ լինել Հայաստանի, Արցախի և Հայոց ցեղասպանության իրողության հետ:

Այդ անհաշտությունը որոշ դեպքերում արտացոլում է պանթիրքական կազմակերպությունների ծրագրերում, որոշ դեպքերում՝ նրանց ղեկավարների արտայայտած մտքերում կամ կազմակերպությունների գործունեության մէջ:

Ստորև ներկայացում է Իրանի թիրքախօս շրջանները որպէս թիրախ ընտրած պանթիրքական կազմակերպությունների դիրքորոշումը Հայաստանի, Արցախի և Հայոց ցեղասպանության վերաբերեալ՝ յենուելով նրանց ծրագրերի, ղեկավարների ելոյթների կամ կատարած աշխատանքների վրայ:

Ամենայայտնի կազմակերպություններից մէկը **Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժումն է** (ՀԱԱԶՇ), որի կայքի¹⁸⁸ «Յեղասպանություն» բաժնում տեղադրուած են լու-

¹⁸⁸ <http://gamoh.org/> եւ <http://www.gamoh.biz/> (21.03.2017 թ.):

սանկարներ Խոջալուում հայերի կողմից իրականացուած, այսպէս կոչուած, ադրբեջանցիների «ցեղասպանութիւնից»:

«Ադրբեջանի մասին» բաժնում գրուած է. «Գիլիստանի և Թուրքմէնչայի պայմանագրերից յետոյ Ադրբեջանը երկու մասի բաժանուեց: Իր տարածքից 280 հազար կմ² մնաց Ղաջարական պետութեան կազմում և 130 հազար կմ² կցուեց Յարական Ռուաստանին: Յարական Ռուաստանը Ադրբեջանի կէսն իրեն կցելուց յետոյ սկսեց հայերին և այլ ազգերին գաղթեցնել Ադրբեջանի տարածքներ: Կոմունիստական կարգերի հաստատումից և Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան կրկին գրաւումից յետոյ Հիւսիսային Ադրբեջան երկրի մի մասը կցուեց Ռուաստանին (Դերբենդ, Դաղստան), մի մասը՝ Վրաստանին (Բուրչալի), մի մասը՝ Հայաստանին (Գյոքչէ¹⁸⁹, Մեղրի, Զանգեզուր, Ղարաբաղն էլ 1990 թ. յետոյ)... Ադրբեջանի Հանրապետութեան տարածքը 86 հազար կմ² է, որի 20 տոկոսը բռնագրաւուել է հայերի կողմից»¹⁹⁰:

Կայքում տարբեր առիթներով խօսուում է «հայ տեռորիստ դաշնակների» և Իրանում Ապրիլի 24-ին նրանց կազմակերպած հակաթուրք ցոյցի մասին: Կազմակերպութիւնն այդ կապակցութեամբ դժգոհութիւն է յայտնում Իրանի իշխանութիւնից. «Հակառակ այն բանի, որ կենտրոնական իշխանութիւնը հովանաւորում է հայ տեռորիստ դաշնակներին՝ իրենց հակաթուրք քաղաքականութեան մէջ և 2003 թ. ապրիլի 24-ին նրանց ցոյցի արտօնութիւն տուեց, որպէսզի իրենց հակաթուրք կարգախօսներով [գործեն] մի երկրում, որի ժողովրդի կէսը թուրքերն են կազմում, ՀԱԱԶԾ-ի ակտիւիստները յաջողութեամբ այս

¹⁸⁹ Սևանայ լիճ:

¹⁹⁰ Նոյն կայքէջում:

հակաթուրք դասադրութեան դէմ ելան»¹⁹¹: Պատմական հիմնատրման մէջ հայերը համարում են Ռուսաստանի կողմից տարածաշրջան բերուած գաղթականներ, Գյոքչէն (Սևանայ լիճ), Մեղրին, Զանգեզուրը և Արցախը համարում են ադրբեջանական, որոնք ռուսների կողմից են տրուել հայերին:

Նորութիւն չեմ ասում, սակայն ուզում եմ շեշտել, որ այս կազմակերպութիւնը, ինչպէս միւս պանթիւրքական կազմակերպութիւնները, ունի ընդգծուած հակահայկական տրամադրութիւններ:

Պանթիւրքական մէկ այլ կազմակերպութեան՝ **Հարաւային Ադրբեջանի անկախութիւն կուսակցութեան** (ՀԱԱԿ) ծրագրի Սահմանում բաժնի 14-րդ կէտում կարդում ենք. «ՀԱԱԿ-ը դատապարտում է հայ զաւթիչներին, որոնք գրաւել են Ադրբեջանի հողը (Ղարաբաղ), և Ադրբեջանի հողի պաշտպանութիւնը իր պարտականութիւնն է համարում»¹⁹²:

ՀԱԱԿ-ի կայքում կան յօդուածներ և լրատութիւն Հայաստանի, հայութեան և Արցախի վերաբերեալ:

Օրինակ՝ 2013 թ. օգոստոսի 20-ին լուր է հրատարակուել հետևեալ վերնագրով՝ «Սպահանի Վանքը Հայաստանին նիթական օժանդակութիւն է տալիս»¹⁹³: Բացատրութեան մէջ նշուած է. «[Սբ.Ամենափրկիչ] վանքում կազմակերպուել է գրքի ցուցահանդէս, որտեղ վաճառուել են գրքեր, այսպէս կոչուած, Հայոց ցեղասպանութեան մասին: Յուցահանդէսի հասոյթը նո-

¹⁹¹ <http://gamoh.org/> եւ <http://www.gamoh.biz/> (21.03.2017 թ.):

¹⁹² [http://gaip.biz/index.php/81-x-b-rl-r/83-2013-05-26-15-26-01\(17.03.2017թ.\):](http://gaip.biz/index.php/81-x-b-rl-r/83-2013-05-26-15-26-01(17.03.2017թ.):)

¹⁹³ <http://oyannews.com/%d8%a7%db%8c%d8%b1%d8%a7%d9%86-%da%a9%d9%84%db%8c%d8%b3%d8%a7%db%8c%d9%88%d8%a7%d9%86%da%af-%d8%a7%d8%b5%d9%81%d9%87%d8%a7%d9%86-%d8%a8%d9%87-%d8%a7%d8%b1%d9%85%d9%86%d8%b3%d8%aa%d8%a7%d9%86/>

փրաբերուել է Հայաստանին... «Օյան նիւզ» կայքը այդ հարցի իրաւական ու պատմական կողմը քննարկելու համար հարցազրոյց է ունեցել Շուեդիայում բնակուող իրաւաբան Սալեհ Քամոնանիի և Թուրքիայի Էսքիշեհիի ադրբեջանցիների միութեան քարտուղար ու դեղագործ դոկտ. Ջալիդ Այդինի հետ... Իրաւաբան Քամոնանին ասել է, որ Իրանը ՄԱԿ-ի անդամ է, ուստի պարտաւոր է միջազգային օրէնքներն ու պայմանագրերը յարգել, և այն, ինչ կատարուել է՝ բարիդրացիական յարաբերութիւնների ոտնահարման և ուրիշ երկրի ներքին գործերին միջամտելու և այլնի դրսևորում է... Իրանը այս և այլ պարագաներում խախտում է միջազգային իրաւունքը... Իրանը, խախտելով միջազգային իրաւունքը, պատերազմի ընթացքում ցուցաբերեց ամէն տեսակի աջակցութիւն, որը փոխեց պատերազմի ելքը: Հետևանքը եղաւ Ադրբեջանի տարածքների 20 տոկոսի, ընդ որում՝ Ղարաբաղի գրաւումը»¹⁹⁴:

Ջալիդ Այդինն իր հարցազրոյցում Սումգայիթի ջարդերի կապակցութեամբ ասում է. «Ըստ դատարանի փաստաթղթերի՝ ոմն Էդուարդ Գրիգորեան խոստովանել էր, որ միայնակ 7 հոգու է սպանել: Համաձայն այդ փաստաթղթերի՝ Սումգայիթի հայերին սպանողները հայկական խմբեր են եղել, որոնք խորհրդային անվտանգութեան ոստիկանութեան ուղղորդումով ու ծրագրով, ձգտել են հակաադրբեջանական զգացումներ բորբոքել և ջանացել են, դա պատրուակ դարձնելով, Ադրբեջանի անկախութեանը վնաս հասցնել և ենթահող ստեղծել Ղարաբաղի գրաւման համար... Այդ սպանութիւններում ուշադրութեան արժանի կէտն այն է, որ ըստ իրադարձութիւնների կենդանի վկաների, բոլոր զոհերը եղել են մարդիկ, ովքեր ընդդի-

¹⁹⁴ <http://oyannews.com/> (10.04.2017 թ.):

մացել են հայոց եկեղեցուն ամսական օգնութիւն տալ և հովանաւորել հայկական ցեղապաշտութիւնը... Այդ տեսակի պահանջների արծարծումը հայերի կողմից աշխարհի տարբեր կետերում նպատակ ունի ենթահող պատրաստել՝ արծարծելու համար «Հայոց ցեղասպանութեան» սուտ պնդումը այս անգամ Ադրբեջանի Հանրապետութեան դէմ...»:

Սա ընդամենը մէկ օրինակ է ՀԱԱԿ-ի կայքէջում տպագրուած հակահայկական բովանդակութեամբ լուրերից: Նշենք, որ այն վերցուած է «Օյան նիւզ» լրատուական-վերլուծական կայքէջից:

Փաստօրէն կազմակերպութիւնը դատապարտում է հայերին, ովքեր «գրաւել» են Ղարաբաղը, Ղարաբաղը համարում է Ադրբեջանի մաս և Ադրբեջանի հողի պաշտպանութիւնը համարում է իր պարտականութիւնը: Կազմակերպութեան հակահայաստանեան տրամադրուածութիւնը երևում է նաև Իրանի հայ համայնքի՝ Հայաստանին նիւթական օժանդակութիւն ցուցաբերելու փաստի նկատմամբ ընդգծուած թշնամական վերաբերմունքից: Ակնյայտ է նաև, որ նա հետևում է Իրանի հայ համայնքի (և ոչ միայն) գործունէութեանը: Համախոհներ ունի առնուազն Շուեդիայում և Թուրքիայում: Կեղծ լուրեր է տարածում՝ յայտարարելով, որ արցախեան պատերազմի ընթացքում Իրանն օգնել է հայերին, որ Սումգայիթի հայերի սպանութիւնը հայկական խմբերի ձեռքի գործն է և այլն:

Յիշեցնենք, որ կուսակցութիւնը հետապնդում է Իրանից անջատուելու նպատակներ, որն արտացոլուած է ծրագրում:

Պանթիրքական մէկ այլ կազմակերպութիւն է **Ադրբեջանի ուսանողական շարժում (AZOH)**¹⁹⁵ կազմակերպութիւնը,

¹⁹⁵ <http://www.azoh.net/> (12.04.2017 թ.):

որի անունը անգլերէն տարբերակով այլ է՝ Հարաւային Ադրբեջանի ուսանողական շարժում (Southern Azerbaijan Student Movement):

Կազմակերպութեան կայքէջի «ԱԶՈՎ-ի մասին» բաժնում գրուած է. «Ադրբեջանի ուսանողական շարժումը Ադրբեջանի արդի ազգային շարժման մէջ առաջին կազմակերպութիւնն է, որ կուսակցական գործունէութեան մեղադրանքով դատաւարտուել է խմբակային կարգով»¹⁹⁶: Շարունակութեան մէջ բացատրութիւն է տրուում կազմակերպութեան անդամների ձեռքակալութեան մասին և նշում, որ դատարանը կազմակերպութեան վեց անդամների, կազմակերպութիւնը հիմնելու և նրանում 2006 թուականից գործունէութիւն ծաւալելու համար, դատաւարտել է ազատագրկման: «ԱԶՈՎ-ի անդամահաւաքի համակարգը ուղղուած է ուսանողներին և նրա հիմնական նպատակը մտաւորական, վերլուծող, քաջ, պայքարի մշակոյթին ծանօթ ու դրանում ընդգրկուած կազմակերպական կադրերի դաստիարակումն է՝ ազգային շարժման մէջ ներգրաւելու համար»:

ԱԶՈՎ-ի կայքում հրատարակուել է լուր հետևեալ վերնագրով. «Փետրուարի 26-ը զաւթիչ հայերի կողմից Խոջալուի ցեղասպանութեան օրն է»¹⁹⁷: Լրատութեան մէջ նշում է. «Հա-

¹⁹⁶ <http://www.azoh.net/%D8%A2%D8%B0%D9%88%D8%AD/%D8%AF%D8%B1%D8%A8%D8%A7%D8%B1%D9%87-%D8%A2%D8%B0%D9%88%D8%AD.html> (12.04.2017 թ.):

¹⁹⁷ <http://www.azoh.net/%D8%AE%D8%A8%D8%B1/1118-%DB%B2%DB%B6-%D9%81%D9%88%D8%B1%DB%8C%D9%87-%D8%B1%D9%88%D8%B2-%D9%86%D8%B3%D9%84-%DA%A9%D8%B4%DB%8C-%D8%AE%D9%88%D8%AC%D8%A7%D9%84%DB%8C-%D8%AA%D9%88%D8%B3%D8%B7-%D8%A7%D8%B1%D9%85%D9%86%DB%8C-%D9%87%D8%A7%DB%8C-%D8%A7%D8%B4%D8%BA%D8%A7%D9%84%DA%AF%D8%B1-%D8%A7%D8%B3%D8%AA.html> (12.04.2017 թ.):

յաստանի զինուած ուժերը, ռուսական զինուած ուժերի հովանաւորութեամբ, յարձակուեցին Խոջալուի վրայ և Խոջալուի խաղաղ բնակիչներից 613 հոգու վայրագ ձուլ սպանեցին: Այդ ցեղասպանութեան զոհերից են 63 երեխայ, 106 կին, 70 ծեր: Յարձակման ժամանակ մօտ 487 հոգի վիրաւորուեցին, 1275 հոգի գերի ընկան: Բնակիչներից 150 հոգին կորել են, նրանց ճակատագրի մասին ցարդ ճշգրիտ տեղեկութիւն չկայ: Խոջալուի ցեղասպանութիւնը Մեքսիկայի, Չեխիայի, Յորդանանի, Հոնդուրասի, Պերուի, Զիբուտիի, Բոսնիա և Հերցեգովինայի, Ռումինիայի, Շոտլանդիայի և ԱՄՆ մօտ 22 նահանգի կողմից պաշտօնապէս ճանաչուել է: Խոջալուի սպանողը, միջազգային օրէնքների համաձայն, ցեղասպանութիւն է, և նրա կատարողները պետք է դատուեն միջազգային դատարաններում... Խոջալուի սպանողը հայերի կողմից ցեղասպանութիւն է, սակայն մշտապէս պետութիւնների կրօնական ու քաղաքական յարաբերութիւնների ազդեցութեան ներքոյ է եղել: Որպէս օրինակ նշենք, որ կրոնական բազմաթիւ երկրներ, ինչպէս Ռուսաստանը, որը զաթիչ Հայաստանի ընդգծուած հովանաւորն ու դաշնակիցն է, մինչև հիմա մարդկութեան դէմ կատարուած այս ողբերգութեան պաշտօնական ճանաչումից խուսափել է»:

Կան նաև բազմաթիւ այլ լուրեր՝ «Ադրբեջանի քաղաքացիական համալսարանում Խոջալուի նահատակների մեծարման յուշ-երեկոյ»¹⁹⁸, «Ղարաբաղում սաստիկ բախումների

¹⁹⁸<http://www.azoh.net/%D8%AE%D8%A8%D8%B1/1134-%D8%A8%D8%B2%D8%B1%DA%AF%D8%AF%D8%A7%D8%B4%D8%AA-%DB%8C%D8%A7%D8%AF-%D8%B4%D9%87%D8%AF%D8%A7%DB%8C-%D8%AE%D9%88%D8%AC%D8%A7%D9%84%DB%8C-%D8%AF%D8%B1-%D8%AF%D8%A7%D9%86%D8%B4%DA%AF%D8%A7%D9%87-%D9%85%D8%AF%D9%86%DB%8C->

վերսկսման հաւանականութիւն», «Ռաֆսանջանին և այն, ինչ կատարեց Ադրբեջանի հետ»¹⁹⁹, «ՔԿԿ ահաբեկիչների բնակեցումը Ղարաբաղում»²⁰⁰, և այլ վերնագրերով, որոնց մէջ հիմնական շեշտը դրուում է «Հայաստանի գաւթիչ» լինելու, «Խոջալուի ցեղասպանութեան», Իրանի և Ռուսաստանի հայամէտոութեան և Հայաստանին հովանաւորելու, կրոպական երկրների կողմից Հայաստանին հովանաւորելու գործում կրօնական գործօնի դերակատարութեան, հայերի ու քրդերի համագործակցութեան և նմանատիպ հարցերի վրայ:

Կազմակերպութեան կայքում յօդուածներ են հրատարակուում «Պարսկական ու քրդական ազգայնականութիւնը. մէկ հոգի երկու մարմնում», ««Հարաւային Ադրբեջանի միասնութեան» ներկայացուցչի ներկայութիւնը Բրիւսելում տեղի ունեցած «Ազգերի ինքնորոշման իրաւունքի» սեմինարում» վերնագրերով և վերահրատարակուում են Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան հիմնադիր Մոհամմադ Ամին Ռասուլզադէի ու Ադրբեջանի Ինքնավար Հանրապետութեան հիմ-

<http://www.azoh.net/%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%D8%AA%D8%B5%D9%88%DB%8C%D8%B1.html> (12.04.2017 թ.):

¹⁹⁹ <http://www.azoh.net/%D9%85%D9%82%D8%A7%D9%84%D9%87-%D9%88-%DA%AF%D8%B2%D8%A7%D8%B1%D8%B4/841-%D8%B1%D9%81%D8%B3%D9%86%D8%AC%D8%A7%D9%86%DB%8C-%D9%88-%D8%A2%D9%86%DA%86%D9%87-%DA%A9%D9%87-%D8%A8%D8%A7-%D8%A2%D8%B2%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%DA%A9%D8%B1%D8%AF-%D8%9F-%D8%AA%D8%A7%DB%8C%D9%85%D8%A7%D8%B2-%D8%A7%D9%88%D8%B1%D9%85%D9%88%D9%84%D9%88.html> (12.04.2017 թ.):

²⁰⁰ <http://www.azoh.net/%D8%AE%D8%A8%D8%B1/561-%D8%A7%D8%B3%DA%A9%D8%A7%D9%86-%D8%AA%D8%B1%D9%88%D8%B1%DB%8C%D8%B3%D8%AA%D9%87%D8%A7%DB%8C-%D9%BE-%DA%A9-%DA%A9-%D8%AF%D8%B1-%D9%82%D8%B1%D9%87-%D8%A8%D8%A7%D8%BA.html> (12.04.2017 թ.):

նադիր Միր Զաֆար Փիշևարիի յօդուածներն ու մտքերը և այլն: Կազմակերպութիւնը պանթիօրքական է և հետապնդում է Իրանից անջատուելու նպատակներ:

Վերոյիշեալ և նմանատիպ կազմակերպութիւնների հակահայկական, հակահայաստանեան յայտարարութիւններից ու գործունէութիւնից բացի՝ լրատուամիջոցներում ժամանակ առ ժամանակ յայտնուում են նաև այլ ստորագրութիւններով հակահայկական գրութիւններ: Այս առումով բնորոշ է հետևեալ օրինակը. 2016 թ. ապրիլի 16-ին «Ադրբեջանի ազգային շարժման գործիչներ» ստորագրութեամբ բաց նամակ է յղուել Իրանի ներքին գործոց նախարարութեանը՝ ««Դաշնակ» կուսակցութեան և «ԱՍԱԼԱ»-ի համակիրներին արտօնութիւն տալու մասին»²⁰¹ վերնագրով: Այդ նամակը հրատարակուել է «Արագ նիւզ» կայքում: Այն պանթիօրքական նպատակներ հետապնդող և ընդգծուած հակահայկական և հակաիրանական կայք է, որտեղ լրրեր ու յօդուածներ են հրատարակուում պարսկերէն, թուրքերէն և անգլերէն լեզուներով: Ստորև՝ նամակի թարգմանութիւնն ամբողջութեամբ.

«Յանուն ամենաբարեգութ Աստծոյ,

Իրանի Իսլամական Հանրապետութեան ներքին գործոց նախարարութեան պատասխանատուներին,

Յարգանքով տեղեկացնում ենք,

Բռնագրաւուած Լարաբադում ճգնաժամի սաստկացումով և աստուածանարգ զարթիչների դէմ պատերազմի ճակատներում մուսուլման զինուորների ու սպաների նահատակութեամբ Ադրբեջանի թուրք ազգի զգացմունքներն ու հոգեբանութիւնը խստագոյնս վիրաւորուել է:

²⁰¹ <http://www.araznews.org/fa/?p=24667> (12.04.2017 թ.):

Տարիներ է, ինչ Դաշնակ կուսակցութիւնը և ԱՍԱԼԱ ահաբեկչական խումբը Հայաստանի զաւթիչ պետութեան հովանաւորութեամբ թիրաբախօս մուսուլման հարիւրաւոր կանանց ու երեխաների մորթել են և անհամար ոճրագործութիւններ կատարել Ղարաբաղի բռնագրաւուած շրջաններում:

ԱՍԱԼԱ ահաբեկչական խումբը ոչ միայն Ղարաբաղում, այլև Թուրքիայում PKK-ի և Սիրիայում ՓԵԴ-ի ահաբեկիչների հետ զբաղուած է մեր թուրքմէն եղբայրների ջարդով:

Տաօք, հակառակ այս սարսափելի լուրերի, տեղեկացանք, որ ԱՍԱԼԱ և PKK ահաբեկչական կազմակերպութիւնների լոբբին Թեհրանում, պատրուակելով հայերի սուտ կոտորածը ապրիլի 24-ին, բանակցութիւնների մէջ է՝ արտօնութիւն ստանալու համար Թեհրանի փողոցներում, Թուրքիայի դեսպանատան առջև և Ադրբեջանի²⁰² մի քանի քաղաքներում հանրահաւաքներ կազմակերպելու իրաւունք ստանալու համար:

Մենք այս բաց նամակով Իրանի Իսլամական Հանրապետութեան ներքին գործոց նախարարութեան պատասխանատուներին զգուշացնում ենք, որ ԱՍԱԼԱ և PKK ահաբեկչական խմբերի համակիրների համար որևէ հանրահաւաքի թոյլտութիւնը անարգանք է բռնագրաւուած Ղարաբաղում, Սիրիայի հարաւարևելքի և Իրաքի մուսուլման նահատակների նկատմամբ:

Ամէն տարի ականատեսն ենք, որ այդ ահաբեկչական խմբերի համակիրները, պատրուակելով ապրիլի 24-ի սուտ պահանջը, Թեհրանի փողոցներում կարգապահական ուժերի հովանաւորութեամբ ցեղապաշտական լոզունգներով քայլաշա-

²⁰² Խօսքը Իրանի Ատրպատականի մասին է - Ս.Մ.:

ում՝ կատարում են ուժի ցուցադրություն և ցեղապաշտական ատելություն են տարածում թիրաքալեզու ազգի նկատմամբ:

Մենք զգուշացնում ենք պատասխանատու պաշտօնեաներին, որ այս տարի թիրաքալեզու ազգի զգացմունքներն ու հոգեբանությունը վիրատորող միջոցառման արտօնություն տալը վատ հետևանքներ է ունենալու, Ադրբեջանի թուրք ազգի համար անհանդուրժելի է լինելու, և որևէ հակազդեցութեան հետևանքի պատասխանատուությունը ԱՍԱԼԱ-Դաշնակ-ՔԿԿ ահաբեկչական խմբերի համակիրների հանրահաաաքի կազմակերպման արտօնութեան համար այդ նախարարութեան և այլ պատասխանատու այրերի վրայ է:

Ուստի մենք պահանջում ենք, նկատի ունենալով այդ ահաբեկչական խմբերի արարքները բռնագրաւուած Ղարաբաղում, Թուրքիայի հարաւարևելքում ու Սիրիայում և մեր երեխաներից շատերի զոհուելը այդ ահաբեկիչների կողմից, ապրիլի 24-ի սուտ պատրուակով ահաբեկչական խմբերի համակիրներին հանրահաաաք կազմակերպելու արտօնություն չտալ:

Ադրբեջանի ազգային շարժման գործիչներ

Աստարա-Թաւրիզ-Ուրմիա-Ղազուին-Արդեբիլ-Չան-ջան-Թեհրան-Համադան»

Ինչպէս նկատելի է, նամակն ստորագրուած է «Ադրբեջանի ազգային շարժման գործիչներ»-ի կողմից: Չկան ստորագրողների անունները: Ովքե՞ր են այդ գործիչները: Իրակա՞ն են, թե՞ անիրական: Պարզ չէ՝ նամակն արդեօ՞ք պաշտօնապէս ուղարկուել է ներքին գործոց նախարարութեանը, թե՞ պարզապէս ինչ-որ մէկի կամ ինչ-որ խմբակցութեան կողմից է տեղադրուել կայքէջում:

Ի՞նչ է նշանակում Ադրբեջանի ազգային շարժում: Ո՞րն է այդ շարժման նպատակը, ովքե՞ր են, որտե՞ղ է կենտրոնատեղին և, ընդհանրապես, կա՞յ այդ շարժումը, թե՞ չկայ:

Ի՞նչ է նշանակում ազգայինն այս պարագայում: Ի՞նչ է նշանակում Ադրբեջանի թուրք ազգ: Ի՞նչ է նշանակում թուրքալեզու ազգ:

Սպանուածների մասին խօսելիս անպայման նշում է մուսուլման՝ խնդրին կրօնական երանգ հաղորդելու նպատակով: Քրիստոնեանների համար օգտագործում է աստուածանարգ (կամ կրօնամերժ, միաստուածային կրօններին չհետևող) բառը:

Դաշնակցութիւնը, ԱՍԱԼԱ-ն և PKK-ն դրում են մէկ հարթութեան վրայ, և խօսում է այդ երեքի միջև կապի առկայութեան մասին: Նշուած երեք կազմակերպութիւնների գործունէութիւնը Ղարաբաղում, Իրաքում, Սիրիայում և Թուրքիայում համարում է առնչակից:

Ապրիլի 24-ը համարում է սուտ, Ղարաբաղը՝ բռնագրաւուած: Կարելի է շարունակել, սակայն բաւարարուենք այսքանով:

Վերջում ներկայացնենք մի ուշագրաւ հարցազրոյց:

Բաքում Իրանի նախկին զինուորական կցորդ, Հէյդար Ալիևի զինուորական նախկին խորհրդական, Իրանի Արդեբիլ նահանգի նախկին նահանգապետ և Արդեբիլ նահանգից Իրանի իսլամական խորհրդարանի նախկին պատգամաւոր, ներկայիս Իրանի իսլամական խորհրդարանի ազգային անվտանգութեան խորհրդական Մանսուր Հաղիզաթփուրը 2017 թ. ապրիլի 4-ին Ազարիհա²⁰³ լրատուական-վերլուծական կայքէջին

²⁰³ <http://www.azariha.org/> (11.04.2017 թ.):

տունը է ուշադրութեան արժանի հարցազրոյց²⁰⁴, որից մէջբերում եմ հատուածներ:

Հարց. Արդեօ՞ք Ռոշան Զաւադէի նման մարդկանց աջակցութիւն ցուցաբերուեց:

Պատասխան. ...Ռոշան Զաւադէն իմ ընկերն էր: Մենք երկար ժամանակ Ղարաբաղում իրար հետ կուուեցինք...:

Հարց. Պատմեցէք ԽՍՀՄ փլուզմանը և պատերազմին յաջորդած տարիներին Կովկասի հարաւում Իրանի և Ադրբեջանի Հանրապետութեան յարաբերութիւնների մասին:

Պատասխան. Իրանը հովանաւորեց Ադրբեջանի Հանրապետութեանը: Ես Ալիևի զինուորական խորհրդականն էի: Երբ զինուորական զեկույցներ էի տալիս Հէյդար Ալիևին, անընդհատ ինձ ասում էր՝ դուք Աշուրա զօրքը բերէք և Ղարաբաղը գրաւէք: Փոխանակ հայերի ձեռքում լինի, ատելի լաւ է՝ Իրանի վերահսկողութեան տակ լինի:

²⁰⁴<http://www.azariha.org/%D8%A8%D8%A7%DB%8C%DA%AF%D8%A7%D9%86%DB%8C/item/1979-%D8%AD%D9%82%DB%8C%D9%82%D8%AA-%D9%BE%D9%88%D8%B1-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%AF%D8%B1-%D8%AC%D9%86%DA%AF-%D9%82%D8%B1%D8%A7%D8%A8%D8%A7%D8%BA-%DB%8C%DA%A9-%D9%87%D9%88%D8%A7%D9%BE%DB%8C%D9%85%D8%A7-%D9%BE%D8%B1-%D8%A7%D8%B2-%D9%85%D9%87%D9%85%D8%A7%D8%AA-%D8%A8%D9%87-%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%D8%AF%D8%A7%D8%AF-%D8%A8%D8%A7%DA%A9%D9%88-30-%D9%85%DB%8C%D9%84%DB%8C%D9%88%D9%86-%D8%AF%D9%84%D8%A7%D8%B1-%D8%A7%D8%B2-%D8%A8%D8%A7%D8%A8-%D8%AA%D8%B3%D9%84%DB%8C%D8%AD%D8%A7%D8%AA-%D8%AC%D9%86%DA%AF-%D9%82%D8%B1%D8%A7%D8%A8%D8%A7%D8%BA-%D8%A8%D9%87-%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86-%D8%A8%D8%AF%D9%87%DA%A9%D8%A7%D8%B1-%D8%A7%D8%B3%D8%AA> (04.04.2017 թ.):

Հարց. Այսինքն՝ Հեյդար Ալիևը պաշտօնապէս ասում էր, որ Իրանը Ղարաբաղը գրաւի:

Պատասխան. Այո՛, խօսքում ասում էր: Ես էլ ասում էի՝ ես զինուորական եմ, այդ ասածդ գրիր, ես տանեմ Թեհրան՝ տամ պետական այրերին, սակայն Ալիևը այդ խօսքերը չէր գրում և չէր ուզում մեր ձեռքը փաստաթուղթ տալ:

Հարց. Իրանի աջակցութիւնը Ղարաբաղի պատերազմում ի՞նչ մակարդակի վրայ էր:

Պատասխան. Այո՛, մենք նրանց փրկեցինք, թէ չէ Հայաստանը նոյնիսկ Բաքուն կը գրաւէր:

Հարց. Ըստ երևոյթին Բաքուն դեռ պարտք է այն զինամթերքի դիմաց, որ Իրանը Ղարաբաղի պատերազմի ժամանակ տուել է նրան:

Պատասխան. Այո՛, հէնց այս պահին 30 միլիոն դոլար Իրանին պարտք է, սակայն Իրանը շատ մեծահոգի է և երբէք այս հարցը չի արծարծում: Եթէ Թուրքիան լինէր, մինչև հիմա կամ մայր գումարն էր յետ ստացել, կամ էլ մի արտօնութիւն, որը տասն անգամ աւելի շահաւէտ կը լինէր:

Հարց. Նկատի ունենալով Իրանի մեծ օժանդակութիւնը Բաքուին՝ ինչու՞ է այս քարոզչութիւնը նրանց կողմից կատարուում Իրանի դէմ:

Պատասխան. Դա Բաքուի պետութեան ու պետական այրերի ապերախտութիւնն է: Եթէ Իրանը իմ միջոցով ականով լեցուն այն օդանաւը և այն զինամթերքը չտար Ռոշան Զաւադկին, հայերը միւս շրջաններն էլ կը գրաւէին:

Եզրակացութիւն

Հայաստանի ու հայութեան մասին ներկայացուած երեք կազմակերպութեան և մի խումբ գործիչների տեսակէտներին կարելի է անելացնել նորերը, սակայն դա չի փոխի խնդրի էութիւնը: Ատրպատականը որպէս թիրախ ընտրած պանթիօքսական կազմակերպութիւններն ունեն խիստ ընդգծուած հակահայկական մօտեցումներ: Նրանք ոչինչով չեն տարբերում Ադրբեջանում և Թուրքիայում գործող պանթիօքսական կազմակերպութիւններից, քանզի բոլորի գաղափարական ակունքը նոյնն է՝ պանթիօքսիզմի հայրերն ու տեսաբանները: Բոլորի ծրագրերում ու հիմնատրուումներում արտացոլուած է Աղայի, Գէօքալիի ու պանթիօքսիզմի միւս տեսաբանների տեսակէտները: Օրինակ՝ գրեթէ բոլորի ծրագրերում կայ «թուրքանալ, մուսուլմանանալ և արդիականանալ» կարգախօսը, որը ոչ այլ ինչ է, քան թիօքսականութեան ամենայայտնի գաղափարախօս Զիյա Գէօքալիի հանրայայտ յօդուածի վերնագիրն ու արծարծած գաղափարը:

Փաստօրէն ճիշտ էր Զարևանդը, երբ իր «Միացեալ, Անկախ Թուրանիա» աշխատութեան մէջ գրում էր. «Թուրքերը ունին յստակօրէն բանաձևուած և ազգովին որդեգրուած քաղաքական իտէալ մը, որուն կը ձգտին գիտակցաբար և յամառօրէն»²⁰⁵: Զարևանդի գրութիւնից մէկ դար անց էլ մենք ականատեսն ենք այն բանի, թէ թուրքերն ինչպէս են «գիտակցաբար և յամառօրէն» շարունակում կեանքի կոչել իրենց պանթիօքսական ծրագրերը:

²⁰⁵ **Զարևանդ**, Միացեալ, Անկախ Թուրանիա, 1988 թ., Աթէնք, էջ 8:

پان ترکیسم و ایران، کاوه بیات، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر ست'و ناست و پژوهش شیرازة کتاب، تهران، صفحه ۱۹

Մենք՝ հայերս, որպէս պանթիրքիզմի ամենամեծ գոհը, պարտաւոր ենք զգօն լինել այդ հարցում, որովհետև Մեծ Թուրանի ստեղծումը վերջ է դնելու Հայաստանի և հայութեան գոյութեանը: Լ. Խորշուդեանն այս մասին գրում է. «Եթէ թուրքիզմի գաղափարախօսութեան կենսագործմամբ ոչնչացուեց արևմտահայութիւնը, ապա պանթիրքիզմի գաղափարախօսութեան իրականացմամբ պէտք է անխուսափելիօրէն ոչնչացուէր նաև արևելահայութիւնը: Հայկական սեպը, որը խանգարում էր Մեծ Թուրանի գաղափարի իրականացմանը, պէտք է դադարէր գոյութիւն ունենալուց... Մեծ Թուրանի գաղափարի իրագործումը սպառնում է գլխովին ոչնչացնել հայ ժողովրդին, հայոց նորաստեղծ անկախ պետականութիւնը...»²⁰⁶:

Իրանի թիրքախօս շրջանները թիրախ ընտրած պանթիրքական կազմակերպութիւնները հետապնդում են այդ նոյն նպատակը:

²⁰⁶ Խորշուդեան Լ., Հայոց ազգային գաղափարախօսութիւնը, Երևան, 1999, էջ 76:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՆԹԻՐՔԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ինչպես նշուեց, պանթիրքիզմը քաղաքական և գաղափարական հասկացություն է, որն առաջացել է 19-րդ դարում, թեև դրա գաղափարական հիմնաւորումները 18-րդ դարից առկայ էին: Պանթիրքիզմի նպատակն է ստեղծել թիրքական կայսրութիւն՝ ապացուցուած կամ ենթադրեալ թիրքական արմատներ ունեցող ցեղերի տարածքների միացումով՝ Բալկաններէրից մինչև Չինաստանի հիւսիսարևմտեան շրջանները:

Պանթիրքիզմի իրականացումը կապուած է բազմաթիւ խնդիրների ու խոչընդոտների հետ, որոնցից հիմնականներն են Հայաստանի Հանրապետութիւնը և Իրանը, յատկապէս՝ Ատրպատականի ժողովուրդն ու մտաւորականութիւնը:

Թւորքիայի Հանրապետութիւնը, թաքուն թէ բացայայտ, օգտագործելով պանթիրքական գաղափարները, այսօր փորձում է իր ազդեցութիւնը մեծացնել Ադրբեջանի Հանրապետութիւնում, Վրաստանի Հանրապետութիւնում, Իրանի Իսլամական Հանրապետութիւնում և Կենտրոնական Ասիայի երկրներում:

Ադրբեջանի Հանրապետութիւնը ինքնութեան փնտրտութի ճանապարհին պատմաշինութեամբ փորձում է իր տարածքներից ջնջել իրանական ազգային ու կրօնական հետքը և չեզոքացնել Իրանի ազդեցութեան մեծացումը Ադրբեջանի Հանրապետութիւնում, որի պատճառով էլ ցուցաբերում է ծաւալապաշ-

տական նկրտումներ և հովանաւորում է Իրանի թիրաքախօս շրջաններում անջատողական միտումները:

Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետութիւնների համար Իրանի թիրաքախօս շրջաններում պանթիրքական գաղափարների տարածումն ու կազմակերպութիւնների հովանաւորումը ոչ միայն պանթիրքիզմի վերջնական նպատակների իրականացման ճանապարհին էական քայլ է, այլև Իրանը թուլացնելու միջոց և կարևոր լծակ՝ քաղաքական առևտրի մէջ Իրանի դէմ գործածելու համար:

Նկատի ունենալով Իրաքում և Սիրիայում տեղի ունեցող իրադարձութիւնները և ԱՄՆ-Իրան արդէն չորս տասնամեակ տևող հակամարտութիւնը, ակնյայտ է, որ Իրանի թուլացումն ու մասնատումը բխում է ԱՄՆ-ի շահերից, որին հասնելու համար էլ ԱՄՆ-ը հովանաւորում է անջատողական միտումները:

Անջատողական միտումները Իրանի թիրաքախօս շրջաններում առայժմ լուրջ վտանգ չեն ներկայացնում: Իմ դիտարկմամբ դրանք առաւելաբար տարածուած են մի խումբ քաղաքական գործիչների, մտաւորականների և ուսանողների շրջանում, ովքեր դժգոհ են Իրանի իշխանութիւններից: Սրանց կողմնորոշումը դէպի Թուրքիայի Հանրապետութիւն բացատրւում է վերջինիս տնտեսական զարգացածութեան, ընկերային ազատութիւնների, քաղաքական աւելի բաց համակարգի և այլ պատճառներով: Կարելի է ասել, որ պանթիրքական գաղափարները Իրանի թիրաքախօս շրջաններում խոր արմատ չունեն և չեն վայելում լայն ժողովրդականութիւն: Սակայն մեծածաւալ քարոզչական միջոցների ներդրման և հետևողական աշխատանքների արդիւնքում կարող է պատկերը փոխուել. անջատողական տրամադրութիւնները կարող են վերածուել լուրջ սպառնալիքի:

Պանթիօրքական քարոզչական շրջանակները փորձում են հրամցնել այն տեսակետը, թե Իրանի թիւրքախօս շրջանների բնակիչները պատմութեան ընթացքում մշտապէս ձգտել են անջատուել Իրանից և անկախանալ, սակայն այդ դրոյթն իրականութեանը չի համապատասխանում: Դրա վառ օրինակներն են Իրան-իրաքեան պարտադրեալ պատերազմին թիւրքախօսների մասնակցութիւնը, նրանց դերակատարութիւնը Իրանի իսլամական յեղափոխութեան յաղթանակի գործում՝ ընդհուպ մինչև Իրանի Սահմանադրական շարժման ժամանակ ատրպատականցիների դերակատարութիւնը և Շէյխ Մոհամմադ Էսիաբանիի դիրքորոշումը Արաքսից հիախս ընկած շրջանները Ադրբեջան կոչելու կապակցութեամբ: Օրինակները բազմաթիւ են:

Իրանում պանթիւրքական գաղափարների տարածման և Իրանի մասնատման գործում ժամանակագրական տեսակետից անշուշտ առաջնութիւնը պատկանում է Օսմանեան կայսրութեանը: Այնուհետև պանթիւրքիզմի հիմնական խրախուսողն ու աջակիցը Խորհրդային Միութիւնն ու Թուրքիայի Հանրապետութիւնն էին: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ վերջինիս փոխարինեց Ամերիկայի Միացեալ Նահանգները՝ հակաիրանական դիրքորոշում ունեցող իր որոշ դաշնակիցներով: Անկախութիւն ստանալուց յետոյ այս պետութիւնների շարքում յայտնուեց Ադրբեջանի Հանրապետութիւնը:

Իրանում պանթիւրքական նկրտումներն ու արտաքին միջամտութիւնները սերտօրէն և ուղղակի կապուած են իրար հետ:

Պանթիւրքիզմի յատկանիշերն են՝ հակահայկականութիւնը, հակաիրանականութիւնը, անջատողականութիւնը, ծաւալապաշտութիւնը, ցեղապաշտութիւնը, պատմութեան խեղա-

թիրումը, կեղծ խորհրդանիշերի ստեղծումը և այլն, որոնք բոլորը պատում են «Թուրք ցեղի միասնություն» գաղափարի շուրջ:

Պանթիւրքականները ցեղապաշտ են, որովհետև թիւրքական ցեղերին համարում են միւս ցեղերից աւելի բարձր և իրենց պատկերացրած կայսրութիւնը ստեղծելու գործում չեն խորշում միւս ցեղերին ոչնչացնելուց: Պանթիւրքիզմի ցեղապաշտական առանձնայատկութիւնը դրսևորում է այլ ազգերի ու էթնիկ խմբերի հետ իր թշնամութեամբ, ընդհուպ մինչև այլատեսացութիւն: Յիշենք թիւրքիզմը Օսմանեան կայսրութիւնում կամ Թուրքիայի Հանրապետութիւնում երկար տասնամեակներ գործող Սահմանադրութեան 301 յօդուածը: Յիշենք Հայոց ցեղասպանութիւնը, յոյների ու ասորիների ցեղասպանութիւնները, քրդերի կոտորածները: Իսկ եթէ պայմանները թոյլ չեն տուել ֆիզիկապէս ոչնչացնել որևէ ժողովրդի ու ձերբազատուել հարցից, դա կատարուել է քաղաքական, մշակութային, տնտեսական և այլ ձևերով (օրինակ՝ Հայաստանի վերանկախացումից յետոյ Հայաստան-Թուրքիա սահմանը վերջինիս որոշմամբ փակ է ցայսօր): Իրանում գործող պանթիւրքական շրջանակների կողմից Արցախի հարցի չարաշահումը և Իրանի թիւրքախօս շրջաններում հայերի ու ազգերիների միջև յարաբերութիւնների սրումը նոյն այդ շրջագծում են:

Հակաիրանականութիւնը պանթիւրքիզմի մէկ այլ առանձնայատկութիւնն է, որովհետև այն ուղղակիօրէն սպառնում է Իրանի հողային ամբողջականութեանը: Իրանի պարագայում հէնց սկզբից յարձակման թիրախ դարձան Իրանի հողային ամբողջականութիւնը, իրանական մշակոյթը, պարսկերէն լեզուն և պարսիկներն ընդհանրապէս: Այս համապատկերում պէտք է դիտարկել թէ՛ Արաքսից հիախս ընկած շրջաններում իրանա-

կան հետքի ոչնչացման միտումները և թե՛ Արաքսից հարաւ ընկած շրջանների վերաբերեալ պատմաշինութիւնը:

Պանթիւրքիզմը ծաւալապաշտական գաղափարախօսութիւն է: Այդ ծաւալապաշտութիւնը Իրանի նկատմամբ դրսևորուել է 20-րդ դարի սկզբներին և Երկրորդ համաշխարհային պատերազմի աւարտին՝ անջատողականութեան փորձով, և Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ՝ նոր աշխարհակարգի իրականացման պայմաններում անջատողական հոսանքների գործունէութեամբ: Հայութեան պարագայում այն դրսևորուել է ամբողջ Արևմտահայաստանի և Արևելահայաստանի մի մասի բռնագրամամբ: Երբ պանթիւրքիզմի գաղափարախօսներից Զիյա Գէօքալիի և ուրիշների աշխատութիւններում խօսուում է կայսրութիւն ստեղծելու մասին, դա նշանակում է, որ մի շարք երկրներ ու շրջաններ պիտի միանան իրար: Այդ շրջաններից որոշները գտնուում են այս կամ այն երկրի տարածքում, ինչն իր հերթին նշանակում է, որ դրանք պէտք է անջատուեն այդ երկրներից և բռնակցուեն մէկ այլ երկրի կամ նորաստեղծ միաւորի: Սա ծաւալապաշտութեան բացայայտ դրսևորում է:

Պատմութեան խեղաթիւրումը և կեղծ խորհրդանիշերի ստեղծումը պանթիւրքիզմի առանցքային աշխատելաոճերից մէկն է: Օրինակ՝ Ադրբեջանի Հանրապետութեան համար հազարամեակների պատմութիւն յօրինելը, Հարաւային և Հիւսիսային Ադրբեջան անունները շրջանառութեան մէջ դնելը, Առան անուան փոփոխութիւնը, Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութեան ու ինքնավարութեան մասին լեզբներ յօրինելը, մարերին, ուրարտացիներին, շումերներին և Իրանի հիւսարևմտեան շրջանների ներկայիս բնակիչներին թուրք կոչելը, տեղանուններ ու անձնանուններ փոխելը կամ աղաւաղելը,

Թուրքմէնչայի և Գիւլիստանի պայմանագրերի խեղաթիւրումը և այլն:

Խորհրդանիշերի յօրինման կամ սեփականաշնորհման ակնառու օրինակ է պանաթիւրքիզմի խորհրդանիշի վերածուած Բաբակ Խոռամդինը, ով եղել է իրանցի սպարապետ և պայքարել է Աբբասեան խալիֆայութեան դէմ: Պանաթիւրքականները նրա անուան բերդը դարձրել են հաւաքավայր և տարուայ մէջ տարբեր առիթներով, ինչպէս նրա ծննդեան օր յուլիսի մէկը, ուխտի են գնում այնտեղ:

Իրանցի գրողների ու գիտնականներին թուրք կոչելը, ինչպէս Նիզամի Գանջաւին և ուրիշներ:

Պանաթիւրքականների կողմից խորհրդանիշի է վերածուել Թաւրիզի «Տրակտորաշինութիւն» ֆուտբոլի թիմը: Այս ակումբի մրցումները այլ ակումբների հետ քարոզչութեան հետևանքով վերածուել են իբր «թուրքի ու պարսիկի» պայքարի. այդ ակումբի մրցումների ժամանակ պարզում են պանաթիւրքական խորհրդանիշեր, ինչպէս՝ Գորշ գայլերի խորհրդանշանը կամ հակաիրանական ու հակապարսկական լոզունգներ են տալիս և այլն:

Ակներև է, որ տեղի է ունենում մշակութային ու քարոզչական գրոհ, որի ժամանակ կիրառւում են բազմատեսակ պատմաշինական հնարքներ ու մեթոդներ:

Նշենք նաև, որ պանաթիւրքականները թիւրք ցեղերի միասնութեան առաջին ու ամենահիմնական պայմանը համարում են լեզուն: Այլ գործոններ, ինչպիսիք են կրօնը, սովորութիւնները, միասնական պատմութիւնը, միասնական հայրենիքը և այլն, համարում են երկրորդական: Դեկտեմբերի 31-ը նշում են որպէս «Մայրենի լեզուի օր» և «Աշխարհի ազերիների միասնութեան օր»:

Իրանի դեմ պայքարող ուժերի համար Իրանի մասնատումը երկարատև ծրագիր է, որն ունի տարբեր փուլեր և բաժիններ: Դրանցից մեկը քարոզչական դաշտն է, միաները՝ տնտեսականը, ընկերայինը և այլն: Սկզբնական շրջանի նպատակը տարբեր պատճառներով երկրի պայմաններից դժգոհ բնակչության կազմակերպումն ու նրանց՝ իշխանության դեմ հանելն է:

Հմտորէն մշակուած քարոզչական մեթոդաբանության կիրառմամբ նշուած ու նմանատիպ բազմաթիւ պատմաշինական խեղաթիւրումներ են տեղի ունենում պանթիրքական քաղաքականութեան շրջագծում՝ Ադրբեջանի Հանրապետութեան կողմից, որը հովանաւորում է Թուրքիայի Հանրապետութիւնը:

Պանթիրքիզմն իր վերոյիշեալ յատկանիշերով սպառնում է Իրանի ազգային անվտանգութեանը՝ երկրի հողային ամբողջականութեան և ժողովրդի համերաշխութեան համատեքստում:

Նկատի ունենալով, որ ներկայիս պանթիրքիզմի առաջին ճակատում է գտնուում Ադրբեջանի Հանրապետութիւնը՝ պանագերիզմի քողի ներքոյ, փորձեմ համառօտ կերպով ներկայացնել Իրանի և Ադրբեջանի Հանրապետութիւնների փոխյարաբերութիւնները վերջին մօտ երեսուն տարիների ընթացքում:

Պէտք է արձանագրել, որ Խորհրդային Միութեան փլուզման հետևանքով կրկին անկախութիւն ձեռք բերած Ադրբեջանի Հանրապետութիւնն իր անկախութեան օրուանից ցայսօր Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ ունեցել է մակընթացութիւններով և տեղատւութիւններով լեցուն յարաբերութիւններ: Յաճախ երկու երկրները միմեանց մեղադրել են ի-

րար նկատմամբ ոչ անկեղծ և թշնամական վերաբերում ունենալու մէջ:

Ադրբեջանի Հանրապետութիւնն իր բուն տարածքով սահմանակից է Իրանին հիւսիսարևմտեան մասում՝ Արդեբիլ, Արևելեան Ատրպատական և Գիլան նահանգների հետ, իսկ Նախիջևանը սահմանակցում է Իրանի Արևմտեան Ատրպատական և Արևելեան Ատրպատական նահանգների հետ: Ադրբեջանի Հանրապետութիւնը և Իրանի Իսլամական Հանրապետութիւնն ունեն 759 կմ ընդհանուր սահման²⁰⁷:

Խորհրդային Միութեան փլուզումից ցայսօր Իրանի Իսլամական Հանրապետութեան և Ադրբեջանի Հանրապետութեան փոխյարաբերութիւններն ունեցել են բարդ ու հակասական զարգացումներ:

Ա. Մոխալիբովի նախագահութեան տարիներին (1991-1992 թթ.) երկու երկրների միջև ստորագրուեցին համագործակցութեան առաջին պայմանագրերը: Ա. Էլչիբէյի ղեկավարութեան շրջանում (1992-1993 թթ.) երկու երկրների յարաբերութիւնները լարուեցին, որովհետև Ադրբեջանի Հանրապետութեան իշխանութիւնը որդեգրեց պանթիւքական և հակաիրանական քաղաքականութիւն: Հ. Ալիևի իշխանութեան տարիներին (1993-2003 թթ.), թէև հակաիրանական տրամադրութիւնները մեղմացան, սակայն տարբեր պատճառներով (Կասպից ծովի հարց, իսլամիստների գործունէութեան սահմանափակում, արևմտամէտ քաղաքականութեան որդեգրում և այլն) չվերացան: Ի. Ալիևը շարունակեց իր քաղաքականութիւնը, այն է՝

²⁰⁷ https://fa.wikipedia.org/wiki/%D9%85%D8%B1%D8%B2%D9%87%D8%A7%DB%8C_%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86#%D8%A8%D8%A7_%D8%AC%D9%85%D9%87%D9%88%D8%B1%DB%8C_%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86

աւելի սերտ յարաբերութիւններ Թուրքիայի և ԱՄՆ-ի հետ, որին նպաստեցին նաև 2005 թ. Բաքու-Թիֆլիս-Ջէյհան նախամուղի և 2007 թ. Բաքու-Թիֆլիս-Էրզրում գազամուղի կառուցումը:

Փորձագէտ Օմոլբանին Չարքին, օրինակ, Իրանի և Ադրբեջանի Հանրապետութիւնների փոխյարաբերութիւններում առկայ մակընթացութիւնների ու անվտանգութեան պատճառներից մէկը համարում է Իրանի Իսլամական Հանրապետութեան «անվտանգութիւն – առանցք» մօտեցումը արտաքին քաղաքականութեան մէջ, որ նշանակում է արտաքին քաղաքականութեան մշակման գործում ազգային անվտանգութեանը առաջնահերթութիւն տալ և յենուել դրա վրայ²⁰⁸:

Կարևոր է ընդգծել, որ այս երկու երկրներն իրար նկատմամբ ունեն թէ ձգողական համընդհանուր եզրեր և թէ վանողական գործօններ²⁰⁹:

Ձգողական համընդհանուր եզրերից են կրօնն ու պատմամշակութային անցեալը: Ադրբեջանի Հանրապետութիւնը մուսուլմանական երկիր է՝ մօտ 94% իսլամ բնակչութեամբ, որի աւելի քան 85%-ը շիա դաւանանքի հետևորդ է: Իրանի Իսլամական Հանրապետութիւնից յետոյ Ադրբեջանի Հանրապետութիւնը շիա բնակչութեան թուով երկրորդ երկիրն է: Շիա դաւանանքից բացի՝ Ադրբեջանի Հանրապետութեան ժողովրդի ինքնութեան կարևոր մէկ այլ տարր էլ իրանական քաղաքակրթութիւնն է: Դաւանական-մշակութային այս ընդհանրութիւնը երկու երկրների միջև զանազան յարաբերութիւնների հաստատման,

208 **ام البنين چابكي**، چالش های روابط ایران و جمهوری آذربایجان، مطالعات اوراسیای مرکزی، مرکز مطالعات ملی بین المللی دانشکده حقوق و علوم سیاسی، سال دهم، شماره 4، تابستان و پائیز 1388، صفحات 84-63

209 **مجید عباسی**، سید محمد رضا موسوی، روابط جمهوری اسلامی و جمهوری آذربایجان، بستر های همگرایی و زمینه های واگرایی، مطالعات اوراسیای مرکزی، دوره 6، شماره 4، پائیز و زمستان 1392، صفحات 80-61

ամրապնդման ու խորացման ամենակարևոր գործոններից մէկն է:

Այդուամենայնիւ այստեղ ևս առկայ են խնդիրներ: Ադրբեջանի Հանրապետութեան տեսակէտից Իրանից եկող վտանգներից մէկը իսլամական գաղափարախօսութեան տարածումն է երկրում: Իսլամական յեղափոխութիւնից յետոյ Իրանը մշտապէս խօսել է իսլամական յեղափոխութեան ու արժէքների արտաժման մասին, որը իսլամական երկրների կողմից նկատուել է սպառնալիք: Ադրբեջանի Հանրապետութեան համար դա կրկնակի սպառնալիք է Իրանի հետ սահման ունենալու և, յատկապէս, ինչպէս նշուեց, բնակչութեան մօտ 94%-ի մուսուլման լինելու պատճառով: Իրանը չի թաքցնում իր հովանաւորութիւնը Ադրբեջանի շիա հոգևորականների նկատմամբ²¹⁰: Հաշուի առնելով Իրանի հզօր կարողականութիւնն այս առումով՝ Ադրբեջանը վախենում է, որ կը յայտնուի Իրանի ազդեցութեան ներքոյ: Միւս կողմից՝ Խորհրդային Միութեան եօթանասունամեայ ազդեցութիւնը Ադրբեջանի Հանրապետութեան ժողովրդի վրայ և Իրան-ԱՄՆ հակամարտութիւնը տարածաշրջանում, որի պատճառով նրանցից իւրաքանչիւրը ձգտում է մեծացնել իր ազդեցութեան գօտին, պատճառ հանդիսացան, որ Արևմուտքը, ԱՄՆ-ը և Թուրքիան առաջ քաշեն Թուրքիայի Հանրապետութեան աշխարհիկ մոդելը՝ որպէս իսլամական ժողովրդավարական և ոչ կրօնական արդի պետութեան օրինակ: Այդ մոդելը ցարդ իշխող է Ադրբեջանի Հանրապետութիւնում:

Կրօնական դաշտում առկայ են այլ տարակարծութիւններ ևս, ինչպէս, օրինակ, Ադրբեջանի Հանրապետութեան դպրոցներում, համալսարաններում և պետական հիմնարկնե-

فرهاد عطایی، ایران و کشورهای قفقاز جنوبی، مطالعات اوراسیای مرکزی، مرکز مطالعات ملی بین المللی²¹⁰ دانشکده حقوق و علوم سیاسی، سال پنجم، شماره ۱۰، بهار و تابستان ۱۳۹۱، صفحات ۱۳۶-۱۱۹

րում կանանց՝ գլխաշորով մուտքի արգելումը, որը հակասութեան մէջ է Իրանում առկայ օրէնքների հետ, կամ որոշ մզկիթների փակումն ու ակերումը Ադրբեջանի Հանրապետութիւնում. կարելի է նշել Մոհամմեդ մարգարէի և Դաշլարի Նափ կղզու մզկիթները:

Ընդհանուր առմամբ պէտք է ասել, որ կրօնական և գաղափարախօսական առումով տարբերութիւնների ու տարակարծութիւնների հիմնական առանցքը կազմում է երկու երկրներում տարբեր համակարգերի գոյութիւնը՝ Իրանում առկայ է իսլամական համակարգ, մինչդեռ Ադրբեջանի Հանրապետութիւնը աշխարհիկ պետութիւն է: Իրանում կրօնը քաղաքականութիւնից անջատ չէ, մինչդեռ Ադրբեջանում հակառակն է:

Պատմամշակութային տեսակէտից պէտք է արձանագրել, որ Իրանն ու Ադրբեջանի Հանրապետութիւնն ունեն ընդհանուր անցեալ՝ նկատի ունենալով, որ դարեր շարունակ Արաքսից հիախս ընկած տարածքները՝ Առանն ու Շիրուանը, եղել են Իրանի կազմում: Ադրբեջանի Հանրապետութեան ժողովրդի ինքնութեան կարևոր տարրերից է, ինչպէս նշուեց, իրանական քաղաքակրթութիւնը:

Վանողութեան գործօններից են.

Ադրբեջանի Հանրապետութիւնը փորձում է դուրս գալ Ռուսաստանի ազդեցութեան գօտուց և տեղ գրաւել Թուրքիա-ԱՄՆ-Իսրայէլ առանցքում, իսկ անվտանգութեան առումով համագործակցել ՆԱՏՕ-ի և, ընդհանուր առմամբ, Արևմուտքի հետ: Իրանը շարժում է այլ ուղղութեամբ և փորձում է ակելի սերտ կապեր հաստատել Ռուսաստանի և տարածաշրջանային ու միջազգային այլ ուժերի հետ: Ադրբեջանի Հանրապետութիւնը սերտ կապեր ունի ԱՄՆ-ի և Իսրայէլի հետ: Ադրբեջանի Հանրապետութեան և Իսրայէլի միջև 1990-ական թուա-

կանների սկզբներից համագործակցություն է հաստատուել առևտրատնտեսական, ռազմասարդինաբերական և անվտանգության ոլորտներում: Քանի որ յիշեալ երեք երկրները Իրանը համարում են իրենց անվտանգությանն սպառնացող երկիր, ուստի Իրանն էլ հիմքեր ունի իր շահերին սպառնացող երկիր համարելու Ադրբեջանի Հանրապետությունը²¹¹:

Իրանի համար Ադրբեջանի Հանրապետությունից եկող ամենազլխաուր սպառնալիքները պանթիրքիզմն ու պանագերիզմն են, որոնք երբեմն բացայայտ, երբեմն էլ քողարկուած տեսք ունեն: Օրինակ՝ 1992 թ. Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյը բացայայտ կերպով խօսում էր պանթիրքիզմի և Հարաւային ու Հիւսիսային Ադրբեջանների միացման մասին:

Արաքսից հիւսիս ընկած շրջանների համար Ադրբեջան անուան ընտրութիւնը առիթ է հանդիսացել «Միացեալ Ադրբեջան» գաղափարի արծարծման համար: Այդ գաղափարը ոչ միայն հակաիրանական է, այլև գործիք է Ադրբեջանում ազգային ինքնութեան կերտման համար: Տպագրում են քարտէզներ, կազմակերպում են համագումարներ, հեռուստատեսային քննարկումներ և այլն, որոնց դէմ Իրանը բազմիցս բողոքներ է ներկայացրել: Դեկտեմբերի 31-ը, որպէս աշխարհի ազերիների միասնութեան օր, յայտարարուել է ոչ աշխատանքային: Այս երևոյթներն անհանգստութիւն են պատճառում Իրանի իշխանութիւններին: Ադրբեջանի Հանրապետութեան զանգուածային լրատուամիջոցներում արծարծուող Իրանի ազերիների իրաւունքների հարցի վերաբերեալ Իրանի բողոքին Ադրբեջանի Հանրապետութիւնը պատասխանում է խօսքի ազատութեան սկզբունքով:

²¹¹ Նոյն տեղում:

Ադրբեջանի Հանրապետության և Իրանի միջև անվտանգության մթնոլորտի մէկ այլ պատճառ է Արցախի հիմնահարցը: Ադրբեջանի Հանրապետութիւնը Իրանին մեղադրում է պատերազմի ընթացքում և այնուհետ Հայաստանին օժանդակելու և, ընդհանուր առմամբ, հայանպաստ դիրքորոշում որդեգրելու մէջ: Իրանը հերքում է այդ պնդումը: Վերևում բերեցի օրինակներ, որոնք փաստում էին ադրբեջանական տեսակէտի կեղծ լինելը:

Վանողական այլ գործօն է «Սատանայական այաներ» գրքի տպագրութիւնը թերթօնի ձևով Բաքուի «Ինիկալ» հանդէսում, Մոհամմեդ մարգարէին անարգող Ռաֆիդ Թաղիին պաշտպանելը, ով իրեն Ադրբեջանի Հանրապետության Սալման Ռոշդին էր համարում, և հակախլամ այլ երևոյթներ²¹²:

Ադրբեջանը Իրանին մեղադրում է լրտեսութեան, երկրի շիաների շրջանում անկարգութիւններ կազմակերպելու և Նարդարան քաղաքում իսլամական ծայրայեղականներին հովանաւորելու գործում: Իրանը մեղադրում է նաև, որ իբր Ադրբեջանի Հանրապետութիւնում իր դեսպանատան միջոցով հարիւրաւոր երիտասարդների է հաւաքագրել՝ իշխանութեան դէմ պայքարելու համար: Ադրբեջանի Հանրապետութիւնում ձերբակալուել են խմբեր, որոնք իբր խոստովանել են, որ ծրագրել են իշխանութիւնը տապալել: Իրանը ժխտել է այդ բոլոր մեղադրանքները:

Վերոշարադրեալը սերտ առնչութիւն ունի Իրանի ազգային անվտանգութեան հետ, որն իր հերթին առնչութիւն ունի նաև Հայաստանի ազգային անվտանգութեան հետ:

مجید عباسی، سید محمد رضا موسوی، روابط جمهوری اسلامی و جمهوری آذربایجان، بستر های همگرایی و زمینه های واگرایی، مطالعات اوراسیای مرکزی، دوره ۶، شماره ۲، پائیز و زمستان ۱۳۹۲، صفحات ۸۰-۶۱

Անվտանգութեանը սպառնացող մարտահրաւերները մշտապէս պետութիւնների ուշադրութեան կենտրոնում են: Այն երկրներում, որտեղ առկայ են ազգային փոքրամասնութիւններ և էթնոկրօնական խմբեր, սրանց ազգային-էթնիկ ձգտումները կարող են վերածուել ազգային անվտանգութեան վրայ ազդող գործօնների:

Իրանի Իսլամական Հանրապետութեան պարագայում էթնիկ խմբերի գոյութիւնը և նրանց խնդիրները՝ լեզուի ու սովորութիւնների պահպանում և այլն, պետութեանը կանգնեցնում են մի կողմից՝ այդ պահանջները բաւարարելու, և միւս կողմից՝ երկրում համերաշխութեան և միասնական ինքնութեան հիմքերն ամրապնդելու մարտահրաւերի առջև²¹³: Սակայն պէտք է շեշտել, որ այդ էթնիկ խմբերի պահանջները երբեմն ճիշտ են ու տրամաբանական, երբեմն էլ՝ արհեստական ու անտրամաբանական:

Պանթիրքական և պանազերիական շրջանակների կողմից Իրանի ազերիախօսների հարցերի արծարծումը պատկանում է երկրորդ խմբին, այլ խօսքով՝ արհեստական է ու յետին նպատակներ հետապնդող: Այս երկու գաղափարախօսութիւնները Իրանի և Հայաստանի նկատմամբ իրենց նպատակներում, մօտեցումներում ու գործողութիւններում միևնոյնն են:

Նշենք, որ ժամանակագրական առումով պանթիրքիզմն աւելի շուտ է առաջացել, քան պանազերիզմը: Ու թէև պանազերիզմի նպատակը Արաքս գետի հիւսիսային ու հարաւային ազերիախօս շրջանների միատրումն է, իսկ պանթիրքիզմինը՝ պանթիրքական կայսրութիւն ստեղծելը, սակայն պանազերիզմը ազդեցութիւն է կրել պանթիրքիզմի գաղափարախօսներից

سجاد ابراهيمی، احسان شاکری خویی، نقش گفتمان پان ترکيستم در امنيت ملی جمهوری اسلامی ايران، 213
مطالعات علوم اجتماعي ايران، سال يازدهم، شماره چهل و سوم، زمستان ۱۳۹۳، صفحات ۱-۲۳

ու տեսաբաններից և հետևում է նրանց ուսմունքին: Պանագե-
րիզմի ակունքում պանթիփրիզմի դրոյթներն են: Ուստի պիտի
եզրակացնել, որ այդ երկու գաղափարախօսութիւնները միև-
նոյն ակունքից են սերում և ունեն հիմնական ընդհանրութիւն-
ներ²¹⁴: Դրանց տարանջատումն ունի զուտ երևոյթի առաւել
յստակ ճանաչողութեան գործնական նպատակ, այլապէս էու-
թեան մէջ բան չի փոխում:

Դոկտ. Եղիկ Ճէրէճեանն իր «Փանթութիւնիզմ» գրքում
գրում է. «20-րդ դարու աւարտին, նկատելի դարձան համաշ-
խարհային երկու զուգահեռ շարժումներ. մէկ կողմէ քայքայման
և տարբադարման շարժումը և միւս կողմէ համախմբման և
նոր դաշնակցութիւններ կազմելու շարժումը: Քայքայման են-
թարկուեցան բոլոր այն համախմբումները, որոնք ստեղծուած
էին ենթակայական արժէքներու վրայ (գաղափարախօսութիւն,
ազգային և կրօնական պատկանելիութիւն և այլն): Այս երևոյթի
վառ օրինակներէն են Խորհրդային Միութեան, Եուկոսլավիոյ և
Չեխոսլավաքիոյ տարանջատումները: Նոյնպիսի վառ օրինակ-
ներ կարելի է նկատել, այդքան փափաքուած արաբական եր-
կիրներու և իսլամական երկիրներու միջև միացումներ յառաջ
բերելու փորձերուն ճախողութիւնները: Աւելին. Օոցի Ա. և Բ.
պատերազմները եկան ապացուցելու թէ ազգային և կրօնական
պատկանելիութիւնները, տնտեսական շահերուն դիմաց շատ
փոքր արժէքներ են: Միւս կողմէ, սկսան ստեղծուիլ նոր հա-
մախմբումներ, որոնք հիմք ունին նիւթական արժէքները՝ այ-
սինքն տնտեսական փոխշահաւետ գործակցութիւնները: Այդ
երևոյթին վառ օրինակներէն են Եվրոպական Շուկան, ԱՄՆ--
Գանատա-Մեքսիքո համաձայնագիրը, Սևծովեան Երկիրներու

محسن پور قلی، قومیت گرایی در آذربایجان، ماهیت و عملکرد، مجله حصون، زمستان ۱۳۸۶، شماره ۱۴، ۲۱۵-۱۹۲

Համախմբումը, Ռուսիոյ հովանաւորութեամբ՝ Հայաստան-Իրան-Թուրքմէնիստան համաձայնագիրը...»²¹⁵: Վերոնշեալներին կարելի է աւելացնել Ռուսաստանի Դաշնութեան կողմից Եւրասիական Միութեան կազմութեան նախաձեռնութիւնը:

Հաստատենք, որ 20-21-րդ դարերում, տեղի են ունեցել մի կողմից՝ համընդհանուր արժէքներ կամ շահեր ունեցող պետութիւնների (օրինակ՝ Եւրոմիութիւն), միևնոյն կրօնն ունեցող երկրների (օրինակ՝ Իսլամական լիգա), միևնոյն էթնիկ արմատներ ունեցող երկրների (օրինակ՝ Արաբական լիգա), բռնութեամբ իրար միացած երկրների (օրինակ՝ Խորհրդային Միութիւն) և այլ համախմբումներ, իսկ միւս կողմից՝ համընդհանուր արժէքներ կամ շահեր ունեցող երկրների համախմբումների քայքայում յատկապէս էթնիկ, ազգային կամ տնտեսական շահերի բախման պատճառով (օրինակ՝ Հարաւսլաւիա կամ Խորհրդային Միութիւն): Փաստերը ցոյց են տալիս, որ համախմբումներն ստեղծող տարրերի շահերի բախման ժամանակ համախմբումներն սկսում են քայքայուել:

Արդ՝ այս երևոյթների համապատկերում հարց է ծագում՝ որքա՞ն է իրական թիրքական արմատներ ունեցող երկրների միաւորման հաւանականութիւնը, այն էլ՝ մէկ միասնական պետութեան սահմանների մէջ: Խնդիրն աւելի է բարդանում, երբ նկատի ենք առնում, որ այդ պետութեան ղեկը յաւակնում է ստանձնել Թուրքիան: Կազմել համադաշնութիւն, որտեղ կը կիրառուի միևնոյն դրամական միաւորը, չի լինի մաքսային հարց, մի վայրից միւսը գնալու արտօնագրային խոչընդոտներ չեն լինի և այլն, հնարաւոր ու հաւանական է, սակայն ստեղծել մէկ հսկայական պետութիւն, որտեղ թոյլերը պէտք է զիջումների

²¹⁵ **Ճէրէճեան Ե.**, Փանթուրանիզմը, Պէյրութ, 1998, 91 էջ, էջ 84-85:

զնան՝ կորցնելով իրենց անկախութիւնից ու ինքնուրոյնութիւնց որոշ բաժին, խիստ անհաւանական է, եթէ չասեմ՝ անիրական:

Դա, անշուշտ, չի նշանակում, որ այսօր պանթիրքիզմի վտանգ գոյութիւն չունի: Փաստերն ապացուցում են, որ պանթիրքիզմի վտանգն առկայ է, և դա մերժելը կը լինի քաղաքական տհասութիւն: Ըստ իս՝ ներկայիս պանթիրքական գաղափարները վառ են պահուում՝ յարմար պահի օգտագործելու համար, իսկ այսօր առաւելաբար հանդիսանում են լծակ՝ Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի վրայ ըստ անհրաժեշտութեան ճնշումներ գործադրելու համար:

Եթէ մի կողմ թողնենք պանթիրքիզմի ոչ թիրք տեսաբաններին և յիշենք, որ պանթիրքական գաղափարները նախ առաջ քաշուեցին Միջին Ասիայի թիրքերի կողմից, որոնց գլխաւոր հարցը ռուսական տիրապետութեանը ընդդիմանալն էր, ապա այսօր՝ մօտ 150 տարի անց, երբեմնի անկախութիւն չունեցող Միջին Ասիայի այդ ժողովուրդներն ունեն անկախ պետականութիւններ, թէև բազմաթիւ թելերով կապուած են Ռուսաստանի Դաշնութեան հետ: Համոզել այդ երկրների ժողովուրդներին՝ հրաժարուել անկախութիւնից, թէկուզև մաս կազմելու համար հսկայածաւալ մի կայսրութեան, կարծում ենք հեշտ չէ, եթէ կշեռքի միւս նժարին չեն դրում այնպիսի առաւելութիւններ, յանուն որոնց արժէ հրաժարուել անկախութիւնից:

Թերևս վերոյիշեալը նկատի ունենալով է, որ պանթիրքիզմի տեսաբաններից Սաբիրզիան Բադդեդինը, ով, ի դէպ, Միջին Ասիայի թաթարներից է, իր «Պանթիրքիզմ. անցեալը, ներկան, ապագան» յօդուածում առաջ է քաշում հետևեալ ռազմավարութիւնը. «Պանթիրքիզմը պարտաւոր է որդեգրել դանդաղ և զգուշաւոր գործելակերպ՝ այն, ինչ կոչւում է «թլփատման սկզբունք» (Principle of circumcision): Թլփատման

ընթացքում երեխայի ուշադրութիւնը շեղելու նպատակով նրան զբաղեցնում են խաղալիքներով և քաղցրաւենիքով: Երբ անխուսափելին տեղի է ունենում, լացելու կամ դիմադրելու համար արդէն բաւականին ուշ է լինում: Այս տրամաբանութեամբ խորհրդատրելի է, որ թիրքական ազգերը շարժման առաջին հանգրուանում շեշտն առաւելաբար դնեն թիրքերի միջև մշակութային, ընկերային և տնտեսական կապերի վրայ: Քաղաքական նպատակները կարող են յետաձգուել մինչև շարժման միս հանգրուանը, երբ տնտեսական և մշակութային համարկումն արդէն կայացած կը լինի: Երկրորդ հանգրուանի ընթացքում քաղաքական ամրակայումը պէտք է դառնայ առաջնահերթութիւն, բայց պիտի սահմանափակուի թիրքական վեց անկախ պետութիւններով: Երբ թիրքական վեց անկախ պետութիւնների քաղաքական ամրակայման որոշակի աստիճան ձեռք բերուի, թիրքական ժողովուրդները, որոնք տակաւին մնացել են գաղութատիրութեան ճնշման ներքոյ, պիտի դառնան ուշադրութեան կենտրոն՝ գերագոյն նպատակ ունենալով թիրքական բոլոր ժողովուրդների ազատագրումն ու նրանց քաղաքական միաւորումը: Սա ընդգրկում է Ռուսաստանի (թաթարներ, բաշկիրներ, եսկուտներ և այլն), Չինաստանի (ույղուրներ), Իրանի (ադրբեջանցիներ²¹⁶) և այլ երկրների թիրքական փոքրամասնութիւններին»²¹⁷:

Խորհրդային Միութեան փլուզումից ցայսօր ականատեսն ենք վերոյիշեալ ռազմավարութեան իրականացման փորձերի:

²¹⁶ Իրանի թիրքախօս բնակիչներին ադրբեջանցիներ անուանում է յօդուածի հեղինակ Սաբիրգիան Բադրեդինը - Ս.Մ.:

²¹⁷ http://tatargazeta.tripod.com/eng_099.html

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԱՆԵԼ
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ՎՏԱՆԳԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նկատի ունենալով, որ Իրանի թիրաբախօս շրջաններում որևէ անախորժ գործընթաց (խժդժություններ, ինքնավարություն, Ադրբեջանի Հանրապետությանը միացում, անկախություն և այլն), մեծապես սպառնալու է Հայաստանի Հանրապետության անվտանգությանն ու կենսական նշանակություն է ունենալու Հայաստանի ու հայ ազգի համար, խիստ անհրաժեշտ է այդ վտանգի դեմն առնելու նպատակով մշակել մանրակրկիտ ծրագիր: Այդ ծրագիրը պետք է ունենայ տարբեր բաժիններ (քաղաքական, դիվանագիտական, քարոզչական և այլն), պետք է ունենայ յստակ ռազմավարություն և մարտավարություն:

Մինչ այդ պետք է.

Մշտապես ուշադրության կենտրոնում պահել պանթիրքական կազմակերպությունների, հոսանքների ու գործիչների գործունեությունը՝ ժամանակին այն բացայայտելու և հակազդել կարողանալու նպատակով:

Նկատի ունենալով, որ պանթիրքիզմի հարուածի առաջին ճակատում են գտնուում Հայաստանն ու Իրանը՝ Հայաստանը պետք է բազմակողմանի կապեր հաստատի Իրանի Իսլամական Հանրապետության հետ ու սերտորէն համագործակցի տարբեր ոլորտներում: Պանթիրքական շրջանակների գործունեության դիտարկումը ցոյց է տալիս, որ վտանգը Իրանի նկատմամբ սաստկանում է: Այդ իսկ պատճառով ո՛չ միայն Հայաստանը Իրանի, այլև Իրանը Հայաստանի կարիքն ունի՝ միասնական թշնամուն չեզոքացնելու նպատակով:

Պանթիրքիզմի ուղղութեամբ արուած որևէ տեսական կամ գործնական քայլ պետք է բացայայտել և միջազգային

հանրութեանը տեղեկացնել դրանից բխող նպատակների, վտանգների ու հետևանքների մասին:

Ճշտել այն երկրները, որոնք վնասուելու են պանթիրքիզմի հարուածից: Այդ երկրների հետ հաստատել համագործակցութիւն (Ռուսաստան, Չինաստան, Յունաստան, Աֆղանստան և այլն):

Մշակուելիք ծրագրում յստակօրէն ճշտել Հայաստանի և Սփիւռքի դերակատարութիւնն առանձնաբար, որպէսզի աշխատանքների կրկնութիւնից ու խաչաձևումից խուսափելով՝ հնարաւոր լինի համադրուած կերպով աւելի մեծ ու արդիւնաւէտ աշխատանք իրականացնել:

Վերջում որպէս եզրակացութիւն արձանագրեմ, որ, անկախ այն բանից, պանթիրքիզմը կիրականանայ այնպէս, ինչպէս երագում էին նրա տեսաբանները, թէ կիրականանայ մասնակի, կամ ընդհանրապէս չի իրականանայ, մենք՝ հայերս, որպէս պանթիրքիզմի ցարդ ամենամեծ զոհը, պարտաւոր ենք զգօն լինել այդ վտանգի դէմ: Պանթիրքիզմի վտանգը մէկընդմիշտ կանխելու հարցի լուծումը բազմակողմանիօրէն հզօր Հայաստանի կերտումն է: Հայութեան ջանքերը պիտի ուղղուեն այդ ուղղութեամբ:

Аннотация

В книге представлена предистория пантюркизма, его проникновение в Иран, эволюция развития пантюркских течений в Иране XX–XXI вв. и состояние в настоящее время. Тщательно изучены программы, кодексы и деятельность влиятельных пантюркских организаций. В частности, представлено отношение действующих в Иране пантюркских организаций к Армении и армянству. В конце обсуждаются перспективы пантюркизма и тенденции развития. Автор приходит к выводу, что хотя осуществление пантюркских идей в настоящее время нереалистичны по разным причинам, однако такая опасность существует, и необходимо искать способы ее предотвращения. Книга состоит из пяти глав. Предназначена для научных кругов, студентов и широкого круга читателей.

Summary

The pre-history of pan-Turkism, its penetration into Iran, the development of pan-Turkic movements in Iran in the 20th-21st centuries and its current situation are presented in this book. The programs, statutes, and activities of pan-Turkic influential organizations have been reviewed in details. Particularly, the attitude of the pan-Turkic organizations operating in Iran to Armenia and Armenians is presented. At the end, the perspectives of pan-Turkism and its trends of development are discussed. The author's conclusion is that although the pan-Turkic ideas are not realistic at the present for various reasons, the danger exists and it is necessary to look for ways to prevent it. The book consists of five chapters. It is intended for academic circles, university students and a wide range of readers.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

1. دانشنامه جهان اسلام، چاپ دۆم، مدخل لغت نامه و دانشنامه بزرگ، جلد نهم
Յանելեալ տեղեկութիւնների համար տե՛ս
<http://www.encyclopaediaislamica.com/madkhal2.php?sid=2644>
(10.11.2016):
Իսլամ աշխարհի հանրագիտարան, 9-րդ հատոր, Բ հրատարակություն, Բառարան և Մեծ հանրագիտարան գլխի տակ:
2. **Landau Jacob M.**, Pan-Turkism, From Irredentism to Cooperation, 2nd Edition, Revised and updated, Printed in Hong Kong, 1995:
Լանդո Ջեյկոբ, Պանթիւրքիզմ, վերադարձականութիւնից համագործակցութիւն, Բ հրատարակութիւն, վերանայուած և թարմացուած, Հոնկոնգ, 1995:
3. **انور خامه ای**، پان تركيسم و ارزش علمى و تاريخى آن، مجله اطلاعات سياسى-اقتصادى، شماره ۱۸۲ - ۱۸۱، صفحه ۳۶-۴۳
Խամէի Անուար, Պանթիւրքիզմը և նրա գիտական ու պատմական արժէքը, «Էթելաթ է սիասի-էղթեսադի հանդէս», թիւ 181-182:
4. **Farrokh Kaveh**, Pan-Turanianism takes aim at Azerbaijan: A Geopolitical Agenda:
Ֆարոխ Բաւէ, Պանթուրանիզմը թիրախ է ընտրել Ադրբեջանին: Աշխարհաքաղաքական օրակարգ, առցանց գիրք:
5. <http://www.rozanehmagazine.com/NoveDec05/AzarbayeganPart1.html>
6. **Ջարևանդ**, Միացեալ, անկախ Թուրանիա, Աթէնք, 1988:
7. **Սիմոնեան Հ.**, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանութիւնը և քաղաքականութիւնը, Երևան, 1986:
8. **Սաֆարեան Ա.**, Զիյա Գէօքալիը և Թիւրքականութեան հիմունքները, ԵՊՀ հրատարակչութիւն, Երևան, 2012:
9. **حميد احمدى**، تركيه، پان تركيسم و آسيای مركزى، مطالعات اوراسيای مركزى، مركز مطالعات بين المللى، دانشكده حقوق و علوم سياسى، سال دۆم، شماره ۵، زمستان ۱۳۸۸
Ահմադի Համիդ, Թուրքիան, պանթիւրքիզմը և Կենտրոնական Ասիան, Կենտրոնական Եւրասիայի հետազոտութիւններ, Միջազգային բարձր հետազոտութիւնների կենտրոն, Իրաունքի և քաղաքական գիտութիւնների ֆակուլտետ, 1388 ծմեռ (2009 թ.), երկրորդ տարի, թիւ 5:
10. <http://www.kavehfarrokh.com/articles/pan-turanism/soviet-de-iranization-policies-in-the-caucasus-and-central-asia/> (10.10.2017 թ.):

11. http://en.wikipedia.org/wiki/Joseph_de_Guignes
12. http://en.wikipedia.org/wiki/%C3%81rmin_V%C3%A1mb%C3%A9ry
13. **کاوہ بیات**، پان ترکیسم و ایران، چاپ اول، بهار ۱۳۸۷، نشر پردیس دانش با همکاری شرکت نشر و پژوهش شیراز، کتاب، تهران
- Քաւէ Բայաթ**, Պանթիւրքիզմը և Իրանը, առաջին հրատարակութիւն, «Փարդիս է դանեշ» հրատարակչութիւն՝ Շիրազէէ քերթաբ հետազոտական և հրատարակչական ընկերութեան համագործակցութեամբ, Թեհրան, 2008:
14. **رجب ایزدی**، نگاهی به یک دهه چالش بر سر هویت آذربایجان، مقاله، از کتاب ایران: هویت، ملیت، قومیت، مجموعه مقالات، به کوشش حمید احمدی، تهران، موسسه تحقیقات و توسعه علوم انسانی، ۱۳۸۳، چاپ دوم
- Ռաջաբ Իզադի**, Հայեացք Ադրբեջանի ինքնութեան շուրջ մէկ տասնամեակ մարտահրաւէրի վրայ, յօդուած, Իրան. ինքնութիւն, ազգութիւն, ցեղայնութիւն, յօդուածների ժողովածու, երկրորդ հրատարակութիւն, Հումանիտար գիտութիւնների ուսումնասիրման ու տարածման հաստատութիւն, Թեհրան, 1386:
15. **تورج اتابکی**، آذربایجان و ناسیونالیسم ایرانی، مقاله، فصلنامه فرهنگی و اجتماعی گنگو، شماره ۳۳، سال ۱۳۸۱، تهران
- <http://goftogu.com/> (30.05.2017 թ.):
- Թուրաջ Աթաբակի**, Ադրբեջանը և իրանական ազգայնականութիւնը, յօդուած, «Գոֆթեգու» մշակութային և հասարակական հանդէս, Թեհրան, 1381 թ. (2002 թ.), թիւ 33:
16. **محمد امين رسول زاده**، جمهوری آذربایجان، چگونگی شکل گیری و وضعیت کنونی آن، ۱۹۲۳ میلادی، استانبول، برگردان تقی سلام زاده، تهران، نشر و پژوهش شیراز، ۱۳۸۰، صفحه ۱۷۶
- Մոհամմեդ Ամին Ռասուլզադէ**, Ադրբեջանի Հանրապետութիւն. ձևաւորումը և ներկայիս իրավիճակը, 1923 թ., Ստամբուլ, «Թիրաժէ» հրատարակչութիւն, Թեհրան, 1380:
17. **عنايت الله رضا**، چگونه نام آذربایجان بر اران نهاده شد؟، مقاله، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، تهران، شماره ۱۸۲-۱۸۱
- Էնայաթալլահ Ռեզա**, Ինչպէ՞ս Ադրբեջան անունը դրուեց Առանի վրայ, յօդուած, «Էթելասթ է սիասի-էդթեսադի» հանդէս, թիւ 181-182:
18. **تورج اتابکی**، آذربایجان در ایران معاصر، ترجمه محمد کریم اشراق، انتشارات توس، چاپ اول، ۱۳۷۶، تهران، صفحه ۲۸۷
- Թուրաջ Աթաբակի**, Ադրբեջանը ժամանակակից Իրանում, «Թուս» հրատարակչութիւն, Ա հրատարակութիւն, Թեհրան, 1376 թ.:
19. **تقی ارانی**، آذربایجان یا یک مساله حیاتی و مماتی در ایران، مقاله، سال ۱۹۲۴، مجله فرنگستان برلین

Ատրպատականը կամ Իրանի կեանքի ու մահուան մի հարցը, յօդուած, Թաղի Առանի, Բեռլինի «Ֆառանգեստան» հանդէս, 1924: ՏԵՆ նաև Բայաթ:

20. **احمد كسروی**، تاريخ هيجده ساله آذربايجان، دو جلد، جلد دوّم، چاپ نهم، تهران، انتشارات امير كبير، سال ۲۵۳۷، ۹۱۹ صفحه
- Ահմադ Քասրաւի**, Ատրպատականի 18 տարուայ պատմութիւն, երկրորդ հատոր, 9-րդ հրատարակութիւն, «Ամիր Քաբիր» հրատարակչութիւն, Թեհրան, 2537 թ., 919 էջ:
21. **ماشالله آجودانی**، مشروطه ی ایرانی، تهران، نشر اختران، سال ۱۳۸۷، چاپ هشتم، ۵۶۰ صفحه
- Մաշալլահ Աջոյանի**, Մաշրութէյէ Իրանի, «Ախթարան» հրատարակչութիւն, Թեհրան, 1386 թ.:
22. **هراج استپائیان**، مقدمه ای بریان ترکیسم، چاپ اول، بهار ۱۳۸۴، ماهنامه آراکس، تهران، ۱۵۸ صفحه
- Ստեփանեան Հ.**, Ներածական պանթիւրքիզմին, առաջին հրատարակութիւն, «Արաքս» ամսաթերթ, Թեհրան, 1384 թ. գարուն:
23. **عایشه حر**، از پان ترکیسم تا نژاد پرستی، مقاله، وبگاه اخبار روز، مترجم باخیش سببی، ۲ نوامبر ۲۰۱۱
- <http://www.akhbar-rooz.com/article.jsp?essayId=41813> (10.11.2012 թ.):
- Այշէ Հուր**, Պանթիւրքիզմից ցեղապաշտութիւն, յօդուած, «Ախթար է ուուզ» կայքէջ, 2 նոյեմբեր 2011:
24. **حمید احمدی**، در آذربایجان چه گذشت؟، مقاله، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، شماره ۱۸۲-۱۸۱
- Համիդ Ահմադի**, Ի՞նչ կատարուեց Ատրպատականում, յօդուած, «Էթելաաթ է սիասի-էլթեսադի» հանդէս, թիւ 181-182:
25. **بابک امير خسروی**، آذربایجان در گلوى ايران غير كرد؟، وبگاه تاريخ ايرانی، مصاحبه، ۳۰ آبان ۱۳۹۷
- <http://tarikhirani.ir/Modules/files/Phtml/files.PrintVersion.Html.php?Lang=f&Typeld=59&filesId=619> (01.11.17 թ.):
26. **روبرت روسو**، بحران آذربایجان در ۱۳۲۴، مقاله، مجله اطلاعات سیاسی-اقتصادی، شماره ۱۸۲-۱۸۱
- Ռոբերտ Ռոսօ**, Ատրպատականի ճգնաժամը 1946 թ., «Էթելաաթ է սիասի-էլթեսադի» հանդէս, հոկտեմբեր-նոյեմբեր 2002, թիւ 181-182:
27. **حمید ملا زاده**، رازهای سر به مهر، ناگفته های وقایع آذربایجان، انتشارات مهد آزادی تبریز، چاپ اول، پائیز ۱۳۷۶
- Համիդ Մոլլազադէ**, Կնքուած գաղտնիքներ: Ատրպատականի իրադարձութիւնների չաստածները, «Մահիդ է ազադի» հրատարակչութիւն, Թարիզ, 1997 թ. (իրանական 1376 թ.):
28. **برندا شیفر**، مرزها و برادری، ترجمه یاشار صدقیانی، آذر، ناشر اولوس، نشریه دانشجویی دانشگاه تهران، چاپ اول، سال ۱۳۸۵، صفحه ۲۴۷

Բրենդա Շիֆեր, Սահմաններն ու եղբայրությունը, «Ուլուս» Թեհրանի համալսարանի ուսանողական հրատարակչություն, առաջին հրատարակություն, 1385 թ. (2006 թ.):

29. **احمد کاظمی**, پان ترکیسم و پان آذربیسیم، انتشارات موسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ابرار معاصر تهران، سال ۱۳۸۵، چاپ نخست، صفحه ۲۷۳
30. **حمید احمدی**، ایران: هویت، ملیت، قومیت، مجموعه مقالات، تهران، موسسه تحقیقات و توسعه علوم انسانی، ۱۳۸۳، چاپ دوم، ۵۵۲ صفحه

Համիդ Ահմադի, Իրան. Ինքնություն, ազգություն, ցեղայնություն, յօդուածների ժողովածու, երկրորդ հրատարակություն, Հումանիտար գիտությունների ուսումնասիրման ու տարածման հաստատություն, Թեհրան, 1386 թ. (2007 թ.):

31. http://www.turkkon.org/eng/icerik_multi.php?no=13 (10.10.2016):
32. <http://www.todayzaman.com/news-280353-iranian-azeris-set-up-national-council-in-turkey-aspire-for-independence.html> (15.11.2016):
33. **احمد کاظمی**, پان ترکیسم و پان آذربیسیم، انتشارات موسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ابرار معاصر تهران، سال ۱۳۸۵، چاپ نخست، صفحه ۲۷۳

Ահմադ Քազեմի, Պանթիպրիզմ և պանազերիզմ, Թեհրանի ժամանակակից «Աբրար միջազգային հետազոտական և ուսումնասիրական մշակութային կենտրոն», Թեհրան, 1385 թ. (2006 թ.):

34. http://www.bbc.co.uk/persian/iran/2012/02/120209_l23_iran_azarbayjan_change_name.shtml (18.09.2017):
35. **Մկրտչեան Ա.**, Հարաւային Ադրբեյջանի առասպելը, Դրօշակ, Պաշտօնաթերթ ՀՀ Դաշնակցութեան, 35րդ (68րդ) տարի, թիւ 1 (1581), յունուար 2004:
36. **Ասատրեան Գ.**, Հայաստանը և անվտանգութեան խնդիրները Հարաւային Կովկասում, 2002: The Quarterly Journal, Vol. 1, No. 3, September 2002:
37. <http://www.iran-federal.org/> (30.03.2017 թ.):
38. <http://www.iran-federal.org/%da%a9%d9%86%da%af%d8%b1%d9%87-%d9%85%d9%84%db%8c%d8%aa%d9%87%d8%a7%d9%89-%d8%a7%db%8c%d8%b1%d8%a7%d9%86-%d9%81%d8%af%d8%b1%d8%a7%d9%84/> (30.03.2017 թ.):
39. http://www.alahwaz.info/fa/?page_id=1227 (10.11.17 թ.):
40. <http://www.kurdistanmedia.com/> (10.11.2017 թ.):
41. <https://www.youtube.com/watch?v=U3jlylb7SM0&feature=youtu.be&list=PLmdEvtplre60ZJPnPHUvIMAdCbYpqcNZv> (18.10.2016 թ.):

42. <http://www.balochunitedfront.org/> (10.11.2017 թ.)
43. http://www.balochunitedfront.org/articles/Farsi/why_fed.htm (10.11.2017 թ.)
44. <http://www.gaip.org/> (17.03.2017 թ.):
45. <http://gamoh.org/> (21.03.2017 թ.):
46. <http://www.yenigamoh.com/> (28.03.2017 թ.):
47. <http://www.gadp.org/fa/> (30.03.2017 թ.):
48. <http://www.gamac.info/> (30.03.2017 թ.):
49. <http://www.azoh.net/> (30.03.2017 թ.):
50. <http://www.achiq.org/> (30.03.2017 թ.):
51. <http://oyrenci-sesi.info/site/xeber/8775> (30.03.2017 թ.)
52. <http://diranish.org/> (03.04.2017 թ.)
53. <https://d-a-k.org/> (03.04.2017 թ.)
54. <http://www.fnfsd.com/> (31.03.2017 թ.):
55. <http://www.ahraz.org/> (12.04.2017 թ.):
56. <https://faryadjenob.wordpress.com/2012/12/13/%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86-%D8%AC%D9%86%D9%88%D8%A8%DB%8C-%D8%A8%D8%B1%D8%A7%DB%8C-%D8%B1%D9%81%D8%B1%D8%A7%D9%86%D8%AF%D9%88%D9%85-%D8%A7%D8%B3%D8%AA%D9%82%D9%84%D8%A7/> (15.12.2017 թ.):
57. <http://gaip.biz/index.php/81-x-b-rl-r/83-2013-05-26-15-26-01>(17.03.2017 թ.):
58. <http://gamoh.org/> և <http://www.gamoh.biz/> (21.03.2017 թ.):
59. http://en.wikipedia.org/wiki/Southern_Azerbaijan_National_Awakening_Movement
60. http://csis.org/files/media/isis/events/020808_remarks.pdf և https://csis-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy_files/files/attachments/020808_Iran_remarks.pdf (22.03.2017 թ.):
61. http://baybak.com/say_3176.azr (21.11.2016):
62. **Խուրշուդեան Լ.**, Հայոց ազգային գաղափարախօսությունը, Երևան, 1999:
63. <http://hetq.am/arm/news/37671/garnik-asatryan-iranum-adrbejanakan-poqramasnutyun-orpes-aydpisin-goyutyun-chuni.html> (22.03.2017 թ.):
64. <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ir.html> (22.03.2017 թ.):
65. <http://musavat.org.az/>(05.04.2017) և <http://www.musavat.az/>(05.04.2017):

66. <http://oyannews.com/%d8%a7%db%8c%d8%b1%d8%a7%d9%86-%da%a9%d9%84%db%8c%d8%b3%d8%a7%db%8c%d9%88%d8%a7%d9%86%da%af-%d8%a7%d8%b5%d9%81%d9%87%d8%a7%d9%86-%d8%a8%d9%87-%d8%a7%d8%b1%d9%85%d9%86%d8%b3%d8%aa%d8%a7%d9%86/>
67. <http://oyannews.com/> (10.04.2017 թ.):
68. <http://www.azoh.net/> (12.04.2017 թ.):
69. <http://www.araznews.org/fa/?p=24667> (12.04.2017 թ.):
70. <http://www.azariha.org/> (11.04.2017 թ.):
71. https://fa.wikipedia.org/wiki/%D9%85%D8%B1%D8%B2%D9%87%D8%A7%DB%8C_%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86#%D8%A8%D8%A7_%D8%AC%D9%85%D9%87%D9%88%D8%B1%DB%8C_%D8%A2%D8%B0%D8%B1%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AC%D8%A7%D9%86
72. **ام البنين جابكي**، چالش های روابط ایران و جمهوری آذربایجان، مطالعات اوراسیای مرکزی، مرکز مطالعات ملی بین المللی دانشکده حقوق و علوم سیاسی، سال دوم، شماره ۴، تابستان و پائیز ۱۳۸۸، صفحات ۸۴-۶۳
- Օմոլբնին Չաբոքի**, Իրանի և Ադրբեջանի Հանրապետության յարաբերությունների մարտահրավերները, Կենտրոնական Եւրասիայի ուսումնասիրություններ, Միջազգային բարձր ուսումնասիրությունների կենտրոն, Իրաւաբանութեան և քաղաքական գիտությունների համալսարան, երկրորդ տարի, թիւ 4, 1388 թ. ամառ և աշուն:
73. **مجيد عباسي**، **سيد محمد رضا موسوي**، روابط جمهوری اسلامی و جمهوری آذربایجان، بستر های همگرایی و زمینه های واگرایی، مطالعات اوراسیای مرکزی، دوره ۶، شماره ۲، پائیز و زمستان ۱۳۹۲، صفحات ۸۰-۶۱
- Մաջիդ Աբբասի**, **Սէյէդ Մոհամմադ Ռեզա Մուսաւի**, Իրանի Իսլամական Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության յարաբերությունները, ձգողականության ասպարէզներն ու վանողականութեան դաշտերը, Կենտրոնական Եւրասիայի ուսումնասիրություններ, 6-րդ շրջան, թիւ 2, 1392 թ. աշուն և ձմեռ:
74. **فرهاد عطايي**، ایران و کشورهای قفقاز جنوبي، مطالعات اوراسیای مرکزی، مرکز مطالعات ملی بین المللی دانشکده حقوق و علوم سیاسی، سال پنجم، شماره ۱۰، بهار و تابستان ۱۳۹۱، صفحات ۱۳۶-۱۱۹
- Ֆարհադ Աթայի**, Իրանը և Հարավային Կովկասի երկրները, Կենտրոնական Եւրասիայի ուսումնասիրություններ, Քաղաքական գիտությունների և իրաւաբանութեան համալսարան, հինգերորդ տարի, թիւ 10, 1391 թ. գարուն և ամառ:

75. **سجاد ابراهیمی، احسان شاکری خوبی، نقش گفتمان پان ترکیسم در امنیت ملی جمهوری اسلامی ایران، مطالعات علوم اجتماعی ایران، سال یازدهم، شماره چهل و سوم، زمستان ۱۳۹۳، صفحات ۲۳-۱**
Սաջադ Էբրահիմի, Էհսան Շաքերի Խոյի, Իրանի Իսլամական Հանրապետության ազգային անվտանգության մէջ պանթիւրքիզմի դերակատարութեան ուսումնասիրութիւն, Իրանի հասարակական գիտութիւնների ուսումնասիրութիւններ, տասնմէկերորդ տարի, քառասուն երրորդ համար, 1393 թ. ձմեռ:
76. **محسن پور قلی، قومیت گرایی در آذربایجان، ماهیت و عملکرد، مجله حصون، زمستان ۱۳۸۶، شماره ۱۴، صفحات ۲۱۵-۱۹۲**
Մոհսէն Փուղղլի, Էթնիկականութիւնն Ադրբեջանում, Էութիւնն ու գործունէութիւնը, «Հոսուն» հանդէս, 1386 թ. ձմեռ, թիւ 14:
77. **Ճէրէճեան Ե., Փանթուրանիզմը, Պէլրոս, 1998:**
78. http://tatargazeta.tripod.com/eng_099.html

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.....	7
ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԼՈՒՂՈՒՄԸ	7
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....	7
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	11
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ.....	14
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ՈՉ ԹԻՒՐՔ ՏԵՍԱԲԱՆՆԵՐԸ.....	16
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ԹԻՒՐՔ ՏԵՍԱԲԱՆՆԵՐԸ.....	19
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԿՈՎԿԱՍ ԵՒ ԻՐԱՆ.....	22
ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԻՆ.....	34
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՌՈՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.....	43

ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ	47
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՄԻՆՉԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԼՈՒՋՈՒՄԸ.....	59
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.....	61
ՊԱՆԹԻՒՐՔԻԶՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆՈՒՄ (ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԼՈՒՋՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ).....	61
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	61
<i>Ահուազի դեմոկրատական համերաշխության կուսակցություն (Արաբստան).....</i>	69
<i>Իրանի Քրդստանի ժողովրդավար կուսակցություն Բելուջիստանի միասնական ճակատ – Իրան (Հանրապետականներ).....</i>	70 71
ՊԱՆԹԻՒՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ (գործիչները, հրատարակությունները, ծրագրերը, կանոնագրերը, գործունեությունը).....	73
Հարաւային Ադրբեջանի անկախություն կուսակցություն (ՀԱԱԿ).....	75
Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժում (ՀԱԱԶՇ)	88

Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժում (YENIGAMOH).....	106
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.....	118
ՊԱՆԹԻՒՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ	118
Ադրբեջանի Հանրապետութիւնից դուրս ապրող ազերիների հարցերի պետական կոմիտէ.....	119
Աշխարհի ազերիների համագումար (ԴԱԿ).....	121
Մեծ Ադրբեջանի համագումար.....	123
Գորշ գայլեր (Boz Gurd).....	124
Ադրբեջանի ժողովրդական ճակատ.....	125
Նոր Մուսաւաթ կուսակցութիւն (YMP)	126
Ազգային Ինքնորոշում կուսակցութիւն	128
Միացեալ Ադրբեջանի դաշինք (ԲԱԲ).....	130
Ազարի 21-ի խմբակցութիւն	132
ՊԱՆԹԻՒՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ	133
Ազգայնական շարժում կուսակցութիւն (MHP).....	133
Ժողովրդահանրապետական կուսակցութիւն (CHP) .	133

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ.....	136
ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՊԱՆԹԻԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԵՄԱԿԷՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ.....	136
ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ.....	150
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ	152
ՊԱՆԹԻԻՐՔԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ	152
ԻՂԶ ՊԷՏՔ Է ԱՆԵԼ ՊԱՆԹԻԻՐՔԻԶՄԻ ՎՏԱՆԳԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ	170
Аннотация	172
Summary	172
ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ	173

ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏՉԵԱՆ

**ՊԱՆԹԻՒՐՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆՈՒՄ**

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/8:
Տպագրական 11,5 մամուլ:
Տպաքանակ՝ 300:

Տպագրուած է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրատանը:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Toumanyán str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am